Բարի

ՑՈՒՆԻՍ 83

sed by

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1.— Կ. ՄԵՀԵԱՆ . . . . . Նեվրուզը

6.— Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ . . . . . Սպիտակ ֆերթուածներ

10.— Գ. ԱՃԵՄԵԱՆ . . . . . Տխուր պատասխան

20.— . . . . . Հայոց հարցը

22.— Մ. ԻՇԽԱՆ . . . . . Մշակոյթի պահակներ

31.— Ալ. ԹՈՓՉԵԱՆ . . . . . Մեր դասական թարգմանիչների կողքին...

32.— ՏԱՆԹԻ ԱԼԻԿԻԵՐԻ . . . . . Երգ երեսուներեքերորդ

37.— Ց. ՕՇԱԿԱՆ . . . . . Սահակ Պարգեւեան

53.— * * * . . . . . Գանգատներուն հոլովոյթը...

69.— ԱԽ. ԻՍԱՀԱԿԵԱՆ . . . . . Նամակներ՝ Սիմոն Յակոբեանին

74.— Ց. ՄԱՆՈՒԿԵԱՆ . . . . . Կ. Փոլատեանի «Արգարութեան ասպետները»ը

75.— Ց. ՊԷՐՊԷՐԵԱՆ . . . . . Մ. Հանեանի «2 թատերախաղ»ը

77.— * * * . . . . . Մշակութային լուրեր

digitised by A.R.A.R.@

Բազմն

ԱՅՍԱՊԻՍ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ Ա. ԱՐՈՒԵՍՏԻ

ԻՌ. ՑԱՐԻ. ԹԻՒ 6 ՅՈՒՆԻՍ 1983 ՊԷՅՐՈՒԹ

Կ. ՄԵՀԵԱՆ

ՄԻՒԱՆ
ԼԻՒՍ
ՀԱՅՍՏ-Արարատ
Գ. Մոսկովեան

ՆԵՎՐՈՒԶԸ

Աւելի քան երկու տարի առաջ, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան տպարանէն լոյս տեսաւ Կարօ Մեհեանի պատմուածքներու հատորը՝ «Ոչպէս երազ անկրկնելի»։ Արդէն հրատարակութեան պատրաստ է մեր աշխատակիցին նոր հատորը, որ կ'ամփոփէ տասնըհինգ պատմուածքներ եւ վէպ մը։

Սարեւ՝ այդ պատմուածքներէն մէկը։

Նո՛յն փողոցի տղաք, անոնցմէ օրերուն, կը հաւաքուէին նախկին մը-թերանոց մը, որ լքուած էր, տախտակամածը կոտրտած, երդիքը տեղ-տեղ բաց, կիսամութ եւ փոթորիկէն երերուն պատերով։

Հպարտ, հպիւ տասնըվեց տարեկան էր, տարիքէն աւելի կանուխ աճած, լայն ուսերով, հաստակաւոր, «արեւէն սեւցած երեսներով»։ «Մակո՛ղ նայուածք մը ունի», կ'ըսէին իր ընկերները՝ այնքան տո՛ւր էր իր հայեացքը։ Իսկ մազերը՝ նուրբ ու երկար, «միսիրլի» ծոպերու կը նմանցնէին։

— Հրայրը մազերով աղջիկ է, մազերէն վար՝ թամա՛մ էրիկ մարդ», ըսա տղոցը։

digitised by A.R.A.R.@

Մթերանոցին տախտակամածին վրայ, անկիւն մը, կոնակը պատին, գլանիկը շրթներուն, յաճախ կը մնար լուռ։ Սակայն կը բոցավառէր, երբ կը խօսէր ֆետայիներու մասին։ Սուլթան Համիտի դահընկէցութենէն ետք, ֆետայիներուն նկարները եւ անոնց կռիւներուն նկարագրութիւնները առա՛տ էին։ «Կիրակի օրերը Հրայրին համար ապաշխարանքի օրեր են», կ՚ըսէր մայրը։

Հրայր կը մտնէր վերի սենեակը, ցած բազմոցին վրայ երեսն ի վար պառկած, արմունկները բազմոցին եւ ափերը այտերուն, անվերջ կը կարդար Բաֆֆիի եւ Ահարոնեանի գրութիւնները։ Օր մը մթերանոցը կարդաց Ահարոնեանի «Վազրիկ»ը։ Տղաքը, շրթունքներէն կախուած՝ կ՚ունկնդրէին։

— Մենք ալ հա՞յ ենք,— ըսաւ Խմորէ Ակոբը։

Կապարէ երկինք մը կը ճնշէր քաղաքին վրայ։ Հրայր մթերանոց մտաւ թեւին տակ ծրար մը։

— Դէ, Հրայր, բաղնի՞ք պիտ՚ թաս,— ձայնեց Մելքոնը։

Հրայր չպատասխանեց։ Նստեցաւ, բացաւ ծրարը, հանեց գունաւոր կիրպաս մը, փաթթեց գլխուն, անցուց փամփուշտակալը եւ մէջքը դրաւ փայտէ դաշոյն մը։ Իսկ կուրծքին անցուց Նեվրուզի խումբին նկարը։

— Ռոտոսթոն երկու ֆետայի ունի,— արտասանեց Մելքոն,— Տորք Անդեղը եւ Նեվրուզը։

— Տունը նստելով եւ կաթնապո՞ւր ուտելով,— յարեց Արթին հեգնանքով։

Ծանր եկաւ Հրայրին։

— Ինծի՛ նայէ,— ըսաւ ձայնը բարձրացնելով,— էկէր քսան տարի կանուխ ծնած ըլլայի, Նեվրուզի հետ Սասուն կ՚երթայի արունս հո՛ն թափելու համար...

— Հիմա՛ գնա...

— Ի՞նչ անելու... Ազատութի՛ւն կ՚ըսեն, ամիս մը էռէջ Սթամպուլէն Ռոտոսթօ եկած էր մօրաքրոջս էրիկը։ Թերթերուն մէջ գրող մարդ է։ Մեր տունը հօրս հետ նստած կը խմէին։

— Ֆետայիները,— ըսաւ,— լեռները էլան։ Բի Պատմական Հայաստանի առջեւի «պատմականը» վերցնեն եւ ըլլայ հիմակուա՛ն Հայաստան մը։ «Հիւրիէթը» եկաւ, ֆետայիները լեռներէն իջան եւ Հայաստանը ջուրը ինկաւ...

— Բարենորոգումնե՞րը,— հարցուց հայրս։

— Հիւրիէթին առաջին տարին էր։ Ատանայի մէջ ջարդեցին երեսուն հազար հայեր, չէ՞...։ Եւրոպացիները ի՞նչ ըրին, թուրքին անուշ լեզու, մեղի ալ «վա՛խ-վա՛խ»։ Խրիմեան Հայրիկը Պերլին գնաց թուրքը ձեռքին, Սթամպոլ վերադարձաւ եւ «երկաթէ չերեփ» պոռաց...։ Կը հասկնա՞ս, թէ ի՛նչ կը նշանակէ, երբ կաթողիկոս մը, եկեղեցիի խորանէն «զինուէ՛» կ՚ըսէ իր ժողովուրդին. դանակը ոսկորին հասած էր։ Այսօր ալ նոյնն է, եզակէլ, գոչեց, «Միայն զէնքով կայ հայուն փրկութիւն»... «Հենթեր պէտք են մեզի...»։

Լռեց։ Գլանիկ մը վառեց։ Փչեց ծուխը եւ՝

— Է՛ս, դուք, ամէնքս մինչեւ քի փամփուշտակալները չլեցնենք, մեր կուրծքերուն չդնենք եւ լեռ չբարձրանանք՝ Հայաստան չ՚ըլլա՛ր...

⁂

1914ին մթնոլորտը թանձրացաւ եւ շուտով սկսաւ պատերազմը։ Ցա-

digitised by A.R.A.R.@

ջորդ տարին, առտու մը լսեցինք, թէ կէս գիշերէն ետք ձերբակալեր են մէկ-քանի ունեւոր հայեր։ Քանի մը ժամ ետք, անոնց ընտանիքները հանեցին իրենց տուներէն եւ քշեցին։ Անդոհանք մը պատած էր։ Շաբաթ առաւօտ մըն էր։ Լսելի եղաւ աղմուկ մը։

— Նորէն մարդ կը տանին,— չչնջեցին տուներէն ներս։

Աղմուկը շատցաւ։ Հրայրին ձայնն էր, կը խօսէր Թուրքերէն, բայց ժխորը արգելք կ'ըլլար հասկնալու։

Աստուրենց ընտանիքը կանգնած էր իրենց տան դիմաց՝ շրջապատուած ոստիկաններով։ Հրայրինց եւ Աստուրենց տունները իրարու կից էին։ Հրայր եւ Աստուրին աղջիկը՝ Վարդուհի, նշանածներ էին։ Հրայր անցեր էր ցանկապատը եւ մտեր Աստուրենց տունը։

Բացուեցաւ Աստուրենց պատուհանը։ Հրայր կանգնած էր պատուհանին առջեւ, տարճանակը ձեռքը, մազերը ցրի՛ւ, շապիկին թեզանիքները հանդրիճած։ Նո՛յն կայծկլտող աչքերն էին, նո՛յն պրկուած այտերը։ Եւ նո՛յն վայրագ արտայայտութիւնը դէմքին։

— Վարդուհին չէ՛ք կրնար առնել,— ձայնեց Թուրքերէն, խօսքը ուղղելով ոստիկանապետին եւ ուսկցուց,— աչքը փէ՛ էղողը Թող ներս մտնէ...

Ոստիկանները կը մնային անշարժ։ Ցայտնի էր, որ հրահանգ ունէին ոտի՛Թ չտալ որեւէ դէպքի։

— Անհոգ եղիր,— ըսաւ ոստիկանապետը,— հանդիստ պիտի ճամբորդեն, լաւ տեղ պիտի երթան...

— Էկօ ա՛ռ,— պատասխանեց Հրայր։

Բայց երբ ոստիկանապետը առաւ առաջին քայլը, պայթիւն մը լսուեցաւ եւ ցնցեց փողոցը, արիւնի հոտ կու գար...

Աստուր մօտեցաւ, եւ՝

— Հրա՛յր, Աստուծու սիրուն, բան մը չանես, մեղք կ'ըլլայ մեզի, մեր արունը մի՛ մտնեցու։

Հրայր կրկին բացաւ պատուհանը եւ, Թուրքերէն՝

— Տասնրհինգ վայրկեան չչարժի՛ք,— ըսաւ ոստիկաններուն։

Աստուր վազեց դէպի ոստիկանապետը եւ, պաղատագին՝

— Տասնրհինգ վայրկեան,— աղաչեց՝ ենթադրելով, թէ Հրայր պիտի Թողու Վարդուհին։

Բայց երբ ոստիկանները մտան տունէն ներս, ո՛չ ոք կար։

Հրայր եւ Վարդուհի պարտէզէ պարտէզ հեռացան տունէն։ Երբ մուրը իջաւ, գացին ծովափ։ Թո՞նձր խաւար մըն էր։ Հասան Ղումպազ, յունական գիւղը, ուր Հրայր բարեկամ մը ունէր։ Մէկ-քանի օր պատսպարուեցան հոն։ Եւ երեկոյ մը, խազող փոխադրող առագաստանաւով մը մեկնեցան Պոլիս, Սամաթիա, Հրայրին մօրաքրոջ տունը։

Պահուած կը մնային հոն։ Փնտռտուքի ատեն Հրայր կը մտնէր մառանը փորուած փոս մը, որուն կափարիչին վրայ ածուխի պարկեր կային։

Տեղւոյն քահանան պսակեց զիրենք։

Տղաքերքին՝ Վարդուհի մահացաւ։ Հրայր ընկճուեցաւ։

— Հոգիդ մթնէ նէ, աշխարհի արեւն ալ չի կրնար լուսաւորել,— կ'ըսէր։

Անցան տարիներ։ Առտու մը, Պոլիս լոյս տեսնող հայերէն օրաթերթի մը առաջին էջին վրայ մեծատառ լուր մը տեսաւ.

— «Հայաստանի Հանրապետութեան պատուիրակ Ա.Խաչ Ահարոնեան Պոլիս ժամանեց։ Ինչած է Թոքաթլեան պանդոկը»։

Հայաստանի Հանրապետութի՞ւն...

digitised by A.R.A.R.@

Հրայր չփեց աչքերը։ Ձի՞նդ էր կարդացածը եւ՝ Ահարոնեա՞նը։

Որոշեց տեսնել զայն։ Ներքին ձայնը ա՛յնքան զօրաւոր էր, որ մօրաքրոջ յորդորը անօգուտ եղաւ։ Ելաւ դուրս, շտկեկառքով Սիրքէհի, յետոյ՝ կամուրջէն Ղալաթիա եւ բարձրացաւ Բերա։ Հասաւ պանդոկին առջեւ։ Զգոյշ կ'երթեւեկէր վեր-վար։

Կասկածեցաւ քանի մը անձերէ։ Երկար սպասելէ ետք, յուսահատ՝ «վերջին անգամ մըն ալ», ըսաւ։ Եւ նո՛յն պահուն, պանդոկին պատշգամը երեւցաւ սեւ մօրուքով, միջահասակ անձ մը։ Նկարէն ճանչցաւ։

Ահարոնեա՛նն էր։ Փիչ ետք, անոր քով եկաւ զինուորական հագուստով մէկը։

Հրայր յուզուած էր։ Հայաստա՞ն եւ Ահարոնեա՞ն...։ Ցուզումէն պահ մը մթագնեցան աչքերը։ Հայութեան գրեթէ կէսին կոտորումէն ետք, «Հայաստանը ջուրը ինկած» չէ՞ր ուրեմն, այլ՝ վերայայտնուա՞ծ էր...

Զինադադարին մեկնեցաւ Հայաստան։ Թոտոսթոն ամայացած, իրենները մահացած։

Լծուեցաւ իր արհեստին՝ շինարարութեան. հազիւ տարի մը անցած՝ թրքական արշաւը...։ Զինուորագրուեցաւ։ Բայց յուսախաբութիւնն ու վերդովումը խոցեցին սիրտը։

Իրենց գումարտակին մեծ մասը կը մերժէր կռուիլ՝ «եղբայր թուրքերը զիմաւորելու համար»։ Իրենք մնացեր էին ուժ հոգի։

— Սարգարապատին անդէն, սոված, բահերո՛վ յաղթեցին թուրքին։ Հիմա, երկու տարի բանակ կազմելէ ետք, կը լքէի՞ն,— կ'աղաղակէր խելայեղ...

Փորձեցին դէպի Երեւան յառաջանալ։

Ճամբան բախում ունեցան թուրք յառաջապահներու հետ։

Կիրակի առաւօտ մըն էր։ Հրայր մտաւ Երեւանի քաղաքային այգին։ Նստեցաւ նստարանի մը վրայ։ Վառեց գլանիկ մը։ Հոգին մթնած էր։ Մազերը նօսրացած էին։ Ճակտին՝ ակօսներ։ Երիտասարդ մը կը մօտենար՝ ակնարկը ուղղած իրեն։

— Հրա՛յր,— գոչեց յանկարծ։

— Տրդա՞տ։

Թոտոսթոյի իր դասընկերներէն մէկն էր։

— Ուրեմն այստե՞ղ ես։

— Այո՛։

— Այստե՞ղ էիր հայեւթուրք պատերազմին։

— Այո՛, իսկ դո՞ւն։

— Թալինի լրջանն էինք, գիւղ մը, հոն ալ մնացինք։ Գիտե՛ս, մենք պարսկահպատակներ ենք։ Երեսիդ վրայի սպին դանակի՞ հետք է։

— Սուրի՛... Հախս առած իմ... Համրանքը չկա՛յ... Աչքս բաց պըտ չմեռնիմ...

— Շքանշանդ է երեսիդ սպին... Իսկ հիմա չե՞ս մեկնիր։

— Վո՞ւր... Իմ տեղս հո՛ս է... Հա՛յ իմ, Հայաստան իմ... Անօթի՛, ծարաւ, մերկ հոս պըտ մնամ... Ես Հայաստանաբնակ չի՛մ... Հայաստանապատկան իմ... Կը հասկնա՞ս ի՛նչ ըսել կ'ուզեմ... Ձե՛ս հասկնար... Հայուն համար մէ՛կ տեղ կայ, Հայաստա՛նը... Զգուշի՛ բան է մտածել, թէ «ո՛ւր հաց՝ հո՛ն կաց»...։ Հայ ըլլալը անուն չէ, կրօնք չէ, ճարպիկութեամբ դրամ դիզել չէ՛... Հաւաքականը անձնականին ստորադասել չէ՛, ի հարկին զոհուի՛լն է... Ան ափ մը հողին մէջ են մեր պատմութիւնը, մեր զոհերը, մեր որբութիւնները, մեր ջարդուած ժողովուրդին մնացորդացին գոյութիւ-

digitised by A.R.A.R.@

նը եւ ապագան... Հո՛ս պըտ մնամ՝ արունիս հաւատարիմ մնալու համար...: Եթէ մնացած հայութիւնն ալ պըտ զոհուի, կը զոհուիմ էս ալ՝ առվէն ըլլայ թէ գնդակով մը... Եթէ պըտ մեռնիմ, ա՛ս հողին համար եւ ա՛ս հողին վրայ պըտ մեռնիմ... Հոս պըտ մնամ, եթէ նոյնիսկ «հոս»ը փոս դառնայ...

Շունչ առաւ: Տրդատ այլայլած էր: Կը նայէր Հրայրին լուռ ու անշարժ:

Մինչ նո՛յն Հրայրն էր: Ռուսոսթոյի յանդուգն տղան:

Տրդատ, վարանոտ՝

— Մենք պըտ էրթանք,— ըսաւ,— մեր պարսկական փասփարով...

— Կ'էրթաք..., — ձայնեց յանկարծ Հրայր, — պարսկական փասփոր ունիք, պարսկակա՞ն փասփոր, ամերիկա՞ն փասփոր, ֆրանսակա՞ն փասփոր.. փասփո՛ր .. փասփո՞ր... Օսմանեան փասփո՛րն էր մեր մուխը մարողը ձեւով մը... Ամ քու եւ մէկալ փասփորները մեր մուխը պըտ մարին ուրիշ ձեւով մը... Գացէ՛ք... Գացէ՛ք...

Ելաւ ոտքի.

— Հեռացէք Հայաստանէն, քանի որ հոդիով հեռացեր էք հայութենէն... Հոս կարենալ մնալու համար նախ պէտք է հայութիւնը մէ՛ջդ զգաս, եւ քեզ՝ հայութեան մէջ: Դարերէ ի վեր մեր մէջ երկու տեսակ հայեր կան, ըսաւ անգամ մը պարոնը, կը յիշե՞ս... Քեզի պէսները եւ ինծի պէսները, ըսել կ'ուզէր: Մեր դժբախտութիւնը ա՛յն է, որ քեզի պէսները աւելի շատ են, քան ինծի պէսները...

Հանեց ծխատուփը, վառեց գլանիկ մը եւ արագ քայլերով հեռացաւ:

ԿԱՐՕ ՄԵՀԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

ՍՊԻՏԱԿ

ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ

• ՆԱԽԵՐԳԱՆՔ

Հորիզոնները
ճամբորդող խօսքեր
բայց փակ է եղանակը լեզուին

Ի՜նչ գեղեցիկ է քունը բառերուն՝
խօսուն արթնութիւն

Քերթող
որ կը ցանես տափաստաններ
արշալոյսի դարպասներու սեմին
հոս է կզեստրդ ծիրանափայլ
շրթներուս վրայ

Մօտեցիր
սպիտակ յիշողութեամբ
եւ բնութիւնը թող արարէ
հորիզոնները խօսքին

Երկիրը լեզուդ է առաջին···

digitised by A.R.A.R.@

• ԱՐՀԱԼՈՑՍԻ ԽՕՍՔԵՐ

Քեզի համար կը ծաղկին
վերադարձի շարժումները մարմարին
եւ մերկութիւնը լոյսին

Խօսքերը
կանթեղներ են ճգնաւոր
սպիտակ էջերու քարափներուն վրայ

Սպաննէ
ծովերը սպիտակ գիշերներուն
որպէսզի արարես արշալոյսը խօսքին

Երկիրը հրդեհն է լեզուին
կ՚արձակէ թեւերը մարմարին
եւ կը խօսի
արշալոյսը լուսատօնին

Կը հասնիս խօսքին արեւին
եւ կ՚անէանաս

Ի՞նչ լեզուով գրել
ծնունդն այս անանձնական:

• ԱՆԿՈՒՄԸ

Երբեմն
աստղ մը փուլ կու գայ
— ինչպէս արցունքի կաթիլ —
քերթողին բիբէն
որպէսզի
հասնի
իր
ա
ն
կ
ու
մ
ի
ն

digitised by A.R.A.R.@

որպէսզի
չմնայ կախուած
նահանջ տարուան կախաղանէն՝
բանաստեղծ հովին մէջ

Կ'իյնայ
որ մենք կանգ առնենք
մեր անկումներուն վրայ

Երբեմն
նահանջ լեզուին անշրպետէն
աստղ-արցունք մը կը գլորի
որպէսզի
խլէ մեզմէ
մեր անկումները երկրային:

• ՍՊԻՏԱԿ ԴՈՂԵՐ

I

Սպիտակ լոյս է իջած
հոգիին սպիտակ դաշտերուն վրայ
որ յիշողութիւնն է խօսքին

Կը ցողուեմ բորբոսները թուղթերուն
կաղամարներու արեւներուն մէջ՝
իբրեւ օդ ձայնին

Քերթուածը փարոսն է հոգիին
որ տուն կը կանչէ ծովերը գինով
եւ լուսածին ձկնիկները խօսքին

Երկինքը՝ մոռացութիւն այլուրային...

II

Կ'արթննամ թուղթին վրայ
թաց բառեր սպիտակ՝
ինչպէս նոր ուղի

digitised by A.R.A.R.@

(Քնանալէ առաջ
կոպերն իր ո՛վ կը փակէ)

Անգոյն մելան՝
ինչպէս արիւնը ծովահարսին

(Խօսելէ առաջ
ո՛վ իր ձայնը կը յիշէ)

Լռութիւնն իմ կը բարձրացնեմ
իբրեւ նշան
եւ կը խօսիմ

Քերթուածը՝ վերք մշտաբաց
երբ կ՚իյնան
տերեւները լեզուին
կը մեկնին իրենց մարմինին
եւ կը հաստատուին

Ձայնը խլրտումն է հողին:

Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Գ. ԱՃԵՄԵԱՆ

ՏԽՈՒՐ ՊԱՏԱՍԽԱՆ

Այսօր ալ չեկաւ, ակամայ խորհեցաւ անոր մասին դարձեալ։ Տառապա՞նք է, թէ հաճոյք, մտածեց յետոյ եւ ինքնիրմէ գժգոհ, քալեց դրասենեակին մէջ։ Երիտասարդացած էր, ու երիտասարդի մը պէս՝ կատղած։ Անկարելի էր։ Ո՛չ մէկայն կատղած, այլեւ անզուսպ դարձած էր նոյնիսկ։ Երիտասարդութեան իսկ այս տեսակ բուռն զգացում չէր ունեցած. պարզօրէն չէր սիրած, եւ հոգեկան այս վայելքը չէր ճանչցած։ Ի՞նչ վայելք։ Մոլութեան վերածած էր զգացական ներկայ տագնապը, որ իրեն անծանօթ զգացումներու հեղեղ էր — հաճելի չարչարանք։ Հոգեկան յամեցող սպառում, որ հաճոյք կը պատճառէր, զինք հալեցնելով հանդերձ։

Բայց ինք ինչպէ՛ս դիմանար իր մէջ վարարող սա աղբիւրներուն, որոնց դոյութիւնը իրեն անծանօթ մնացած էր ցարդ։ Իր մէջ՝ զգացումներու, երգի նըման ուրախացող կարկաչահոս աղբիւրեւ խենթութեան ի՞նչ պահեր։ Եւ այդ ներու ի՞նչ հրաչքներ կան եղեր։ Սիրոյ պահերուն դեղեցկացող տանջանքը։ Խելագարելո՞ւ սկսած էր արդեօք։ Բանաստեղծ պիտի դառնար մօտ օրէն։ Փպտեցաւ, թէեւ գժգոհ, ու հառաչեց, թէ կը կարօտնար անոր քաղցր ժպիտին, ձայնին, գանգատներուն, նազանքին։

Գրասենեակը անշնչելի դարձած էր՝ Արփիկի բացակայութեան։

Այս նոյն դրասենեակը, որ վերջին տասը տարիներուն իր միակ մխիթարութիւնը եղած էր, միակ պատսպարանը, թաքստոցը։ Մինչեւ քառասունը պաշտօնեայ մնալէ ետք, երբ ի վերջոյ ըմբոստացած էր եւ իր սեփական հաստատութեան հիմը դրած, անձնական կեանք ունեցած էր եւ գիտակցած, թէ ինքն ալ մարդ էր եւ որոշ կարողութիւններ ունէր։ Նախկին գործատէրը, պարոն Արզաբեան, զայրացած էր, սպառնացած, եւ վերջաւորութեան աղաչած էր նոյնիսկ՝ զինք զարմացնելով անչուշտ։ Քսան տարուան ընթացքին առաջին անգամ ըլլալով բարեկամաբար խօսած էր իրեն հետ եւ կարեւորութիւն ընծայած իրեն։ Այո՛, աղաչած էր, թախանձած էր, ու վերջաւորութեան պոռացած.

— Տունս քանդելու նպատա՞կ ունիս։

— Տունդ ինչո՞ւ պիտի քանդեմ, — անկիղծօրէն զարմացած էր Արշաւիր։

— Առանց քեզի հաստատութիւնը ի՞նչ պիտի ըլլայ։ Յանախորդները քեզմէ զատ մարդ չեն ճանչնար, եւ ուրիշին հետ ալ գործ չեն ուզեր ունենալ։ Իսկ իմ հետը... ի՛մ հետս չեն ուզեր խօսիլ նոյնիսկ. կարծես իրենց հայրը կամ մայրը սպաննած եմ։

— Քեզմէ կը քաշուին, պարոն Տիգրան։ Ինչո՞ւ կը զարմանաս։

— Ես իրենց ի՛նչ ըրած եմ, որ պիտի քաշուին։

Եւ այսպէս՝ ամիսներ, մինչեւ որ Տիգրան Արգարեան համոզուած էր, թէ ինք վերջնականապէս կորսնցուցած էր։ Քսան տարի անոր կամակատար ծառան մնալէ ետք, անակնկալօրէն, չնախատեսուած կերպով արթնցած էր եւ անդրադարձած, թէ քսան տարի անընդհատ եւ առանց խղճահարութեան ան չահագործած էր զինք։

Տարուէ տարի, յետոյ, գործի յաջողութեան տարիները, ինքնավստահութիւնը զօրացած էր իր մէջ եւ զինք հասցուցած ներկայ բարգաւաճ եւ նիւթապէս ապահով վիճակին։ Միլիոնատէր չէր, բայց Գէյրութի յաջողած եւ վստահելի առեւտրականներէն կը նկատուէր։ Ունեցածը այս գրասենեակն էր, եւ քանի մը գրենական պիտոյքներու ներկայացուցչութիւն։ Տարեկան երկու կամ երեք հարիւր հազար լիբանանեան ոսկի եկամուտ ունէր, եւ... պարզօրէն գոհ էր։ Թէեւ ուշ ամուսնացած, սակայն երկու անուշիկ աղջիկներ ունէր արդէն — տասը եւ վեց տարեկան — եւ ինքզինք բախտաւոր կը համարէր։ Դժգոհելու պատճառ չունէր յամենայնդէպս, թէեւ պիտի նախընտրէր հայ աղջկայ մը հետ ամուսնացած ըլլալ։ Լէյլան, գրեթէ իրեն տարեկից, ներկայանալի, բայց գերազանցօրէն հաւատարակիր եւ պահպանողական կին մըն էր, որ տարիներ իրեն պաշտօնակից եղած էր՝ Տիգրան Արգարեանի հաստատութեան մէջ։ Աշխատասէր, ժուժկալ եւ վստահելի կեանքի ընկեր մը եղած էր իրեն համար, եւ անհրաժեշտութեան պարագային՝ դիմած էր իր հարուստ եւ ազդեցիկ ազգականներուն, որոնք դրամատնային վարկեր ապահոված էին իրենց՝ մանաւանդ առաջին տարիներուն։ Անոր հանդէպ իր զգացածը երախտագիտութիւն եղած էր աւելի՝ առաջին իսկ օրէն, ամուսնանալէն ալ առաջ, երբ տակաւին պաշտօնակիցներ էին։ Միշտ նեցուկ կանգնած էր իրեն, քաջալերած, յորդորած, եւ իրականութեան մէջ ան հասցուցած էր զինք այս նախանձելի վիճակին։

Իսկապէս նախանձելի։ Այնքան մը, որ յիսուն տարեկանին կատղած էր, կամ աւելի ճիշդը՝ սիրահարած։ Սիրահարութիւն։ Բառը տարօրինակ թուեցաւ իրեն, անտարամաբանական, անհաւանական։ Ի՞նք սիրահարած էր։ Սիրելու կամ սիրուելու մասին ի՞նչ գիտէր, ինչպէ՞ս կը սիրէին։ Հօրը, մօրը, քոյրերուն ու զաւակներուն հանդէպ զգացածը գիտէր, վստահ էր. բայց կիներու եւ աղջիկներու հանդէպ... ասկէ քսան, քսանըհինգ տարի առաջ քանի մը աղջիկ ճանչցած էր, ու լաւ բարեկամներ եղած էին։ Ինչպէս Լէյլան, օրինակի համար, որ յետոյ կիներ եղած էր։ Այս տեսակ բան չէր զգացած, այսպէս տակնուվրայ չէր եղած երբեք։

Արփիկն էր թէեւ, ոչ թէ ինքը, որ սկսած էր այս ամբողջ խայտառակութիւնը։ Խայտառակութիւն էր, այո՛, սրովհետեւ անկարելի էր պատահածը, անհաւանական։ Քսաներկու տարեկան երիտասարդ ու գեղեցիկ աղջիկ մը, որ յիմարօրէն կը սիրէր զինք։ Զինք, այո՛, զինք, Արշաւիր Դարբինեանը, որուն զէմքը կնճռոտիլ սկսած էր, մարմինը՝ յոգնիլ, իսկ ներքին գործարանները՝ դաւաճանել։ Իր ի՞նչը կը սիրէր, ի՛նչը սիրուելիք էր։ Չէր կրցած բացատրել, հասկցնել անոր, թէ ինք սիրուելու արժանի չէր, մա՛նաւանդ երիտասարդ աղջկայ մը կողմէ։ Իրաւունք չունէր։ Խենթութիւն։ Բայց իսկապէս խենթ էր աղջիկը. կատարեալ յիմար ու ըմբոստ աղջիկ մը, որ ո՛չ օրէնք նկատի ունէր եւ ոչ ալ պատշաճութիւն։

— Քեզ կը սիրեմ, քան մը կրնա՞ս ընել, — կը կրկնէր մէկ, — եթէ կրնաս, արգիլէ՛։ Արգիլես ալ ի՞նչ կը փոխուի. քեզմէ արտօնութիւն առնելու պէտք չունիմ։

— Բայց մեղք է, քեզի՛ մեղք է։ Այս տարիքիդ ինծի պէս խրխլած, վերջացած մարդ մը ի՞նչ պիտի ընես, երբ կրնաս փառաւոր ամուսնութիւն մը ունենալ, երիտասարդ ամուսին, պաւակներ, հան-

digitised by A.R.A.R.@

գիստ կեանք, երջանկութիւն, ապագայ։

— Չեմ ուզեր։ Ազատ չե՞մ։ Երջանկութիւնս դո՞ւն պիտի որոշես։ Եթէ կ'ուզես, որ երջանիկ ըլլամ, այս մասին մի խօսիր։

— Լա՛ւ, ի՞նչ կ'ուզես, որ ընենք։

— Բան մըն ալ ընելու պէտք չունինք։ Այսպէս շատ լաւ ենք։ Քեզմէ բան մը ուզող կա՞յ։

— Ամուսնացած մարդ եմ, զաւակներ ունիմ... ինծի ալ մեղք է։

— Ես յանցանք չունիմ, — կ'եզրակացնէր ջղայնացած, ամէն անգամ, որ խօսակցութիւնը կեդրոնանար զաւակներուն վրայ։ — Ինծի մի խօսիր այդ մասին. դուն քեզի ըսէ'։

— Բայց ի՛մ յանցանքս ինչ է։

— Չեմ ուզեր գիտնալ։

Աղջիկը խենթ էր ի վերջոյ։

Փա՛ստ՝ որ զաւակները խենթի պէս կը սիրէր, կը չփացնէր, ու յաճախ — արձակուրդի օրերուն — կը պտըտցնէր զանոնք՝ առանց կարեւորութիւն ընծայելու իր առարկութեանց։

Վստահ էր, թէ ինք պատժելու համար աշխատանքի չէր եկած դարձեալ վերջին երկու օրերուն։ Արդարեւ, հակառակ իր բոլոր առարկութեանց, պատճառաբանութիւններուն ու չքմեղանքին, ինք կը տկարանար աւելի եւ տեղի կու տար օրըստօրէ։

⁂

Տունը, սենեակին մէջ փակուած Արփիկ կը մերժէր դուրս գալ եւ խօսիլ հօրը կամ մօրը հետ։ Իրիկուն եղած էր արդէն, եւ հայրը դործէն վերադարձած՝ կը փորձէր ինք համոզել, բացատրութիւն պահանջելով իր վերաբերմունքին մասին։ Բայց ինք խօսելու տրամադրութիւն չունէր, իսկ բացատրութիւն տալու՝ ոչ մէկ պատճառ։ Եւ՝ դոհ էր, բաւարարուած։ Թէեւ՝ ինք գիտէր իր քայլը, տառապանքը։ Ոչ ոք զինք կը հասկնար կամ կրնար զգալ ներքին խռովքը, դառնութիւնը։ Մա՛նաւանդ Արշաւիրը, որ այսքան ժամանակ հոգ պէտք է հասկնար այլեւս, թէ իր անձին եւ զդացումներուն տէրը ինքն էր։

Յամենայնդէպս, դոհ էր, նոյնիսկ ուրախ։ Հիմա Արշաւիր կրնար ըմբռնել, թէ մարդ չարչարել ինչ կը նշանակէր։ Վստահ էր, թէ իրմէ աւելի ան կը տառապէր հիմա, եւ խելքը գլուխը կու գար թերեւս։

Ինչո՞ւ զինք կը սիրեմ եղեր։ Իրեն ի՛նչ։ Ես գիտե՞մ, թէ ինչու կը սիրեմ։ Գիտնայի, թերեւս տարբեր կ'ըլլար. կրնայի բացատրել, հասկցնել իրեն, եւ առաջը առնել այս բարդութիւններուն։ Կարծես առիթ առաջ սիրած եմ, որ... դաս բացատրելու պէս իրեն հասկցնեմ, սորվեցնեմ։ Փոխանակ ինք ինծի օգնելու, կ'ակնկալէ, որ ամէն ինչ պարզեմ իրեն։ Բայց ինչպէ՞ս։ Երանի սիրած չըլլայի, ճանչցած չըլլայի զինք. ուրիշ ա՛ւր հայրս այս պաշտօնը կարգադրեց ինծի, ուրախանալով, որ ծանօթի մը հաստատութեան մէջ պիտի աշխատէի։ Վստահելի, պատուաւոր մարդ է եղեր։ Զըլլա՛ր... թերեւս առաջին օրէն փախուստ տայի, դանէի իրմէ։ Եթէ կրնամ այսպիսի պարզ եւ ուղղամիտ, բարեկիրթ եւ փափկանկատ մարդ մը մի սիրեր։ Կատարեալ երեխայ, բարի, ու... պարզապէս խնդալիք, մեղքնալիք, ուտուելիք մարդ մը։

Եւ իսկապէս խնդաց։ Ուրախացաւ աւելի, մտածելով, որ ինչքա՜ն բախտաւոր էր Արշաւիրը սիրած ըլլալուն համար։ Աշխարհի մէջ միայն իրե՛ն վիճակուած էր այդ լուրջ եւ անուշիկ, ուտուելիք մարդը սիրել։ Բախտաւորութիւն չէ՞ր։ Եթէ ինք ծրագրէր իսկ, տարիներով գտնել։ Ի՞նչ էր ուզածը սակայն։ Այս մասին չէր մտածած իսկ, մա՛նաւանդ՝ որ այր մարդոցմէ կը խրտչէր ընդհանրապէս. նոյնիսկ՝ հօրմէն, որ իր սիրած միակ այր մարդն էր։ Մինչեւ Արշաւիրին ծանօթանալը զէթ։

Յանդավառուած՝ դուրս ելաւ սենեակէն եւ ուղղուեցաւ դէպի արտաքին դուռը։ Նկատելով, որ ծնողքը չուարած, թէեւ դոհ, զինք կը դիտէին, ընկրկեցաւ

digitised by A.R.A.R.@

պահ մը եւ հարիւադրուած զգաց բացատրութիւն տալ։

— Դուրս ելլեմ, օդ առնեմ քիչ մը։

— Այս ժամէն ե՞տք, — հայրը արտայայտեց իր սովորական մտահոգութիւնը։ — Մթնած է արդէն։

— Ձեմ ուշանար։

— Բայց ո՞ւր, — մայրը չկրցաւ ինքզինք զսպել։ — Մարդիկ ի՞նչ կ'ըսեն։

— Ձեմ ուշանար, ըսի, — դուրս ելլելու համար արտօնութեա՞ն պէտք ունիմ։

Ուժգնօրէն փակեց դուռը եւ սանդուղներէն իջաւ վար՝ փոխանակ վերելակը գործածելու։ Փոքր տարիքէն վարժութիւն կազմած էր երրորդ յարկէն, ուր կը գտնուէր իրենց յարկաբաժինը, ցատկոտելով իջնել վար՝ մարմինը մարզելու համար թերեւս։ Հիմա եւս մարմինը սմբողջ շարժման մէջ էր — ալեկոծ ծովու մը պէս — եւ իւրաքանչիւր քայլափոխի հետ կը կայտռէր, կը կաղդուրէր կամ կը թարմանար։ Շքեղ հասակը պէտք է ցուցադրէր բոլոր զրացիներուն, որոնք տարիներու ընթացքին վարժուած էին ներողամտութեամբ եւ հանոյքով դիտել Արփիկ կոչուած փոթորիկը։ Աչնանային իրիկնամուտը, փողոցին մէջ, աւելի եւս հրահրեց զինք, եւ արագօրէն դիմեց գէպի գրքավաճառին կրպակը, ուրկէ կը հեռամայնէր սովորաբար։

— Այո՞, — լսեց Աբշաւիրի ձայնը ընկալուչէն եւ խաղաղեցաւ։ Նախատեսութիւնը ճիշդ էր ուրեմն։ Գրասենեակին մէջ ինքզինք պատժած էր։

— Ի՞նչ կ'ընես հոգ մինչեւ հիմա։

— Քու գործդ, — հանգարտօրէն խօսեցաւ Դարբինեան։ — Գատրառաուեմ ահագին ապսպրանք կայ։

— Ես կը պատրաստեմ վաղը։

— Ուրկէ՞ կը խօսիս։

— Վարի գրքավաճառին քովէն։

— Հիւա՞նդ էիր։

— Ո՛չ։

— Բարեբախտաբար սուտ չես խօսիր։

— Ինչո՞ւ պիտի սանմ, — գոհունակութեամբ խնդաց աղջիկը։

— Բացակայելու ի՞նչ պատճառ ունէիր ուրեմն։

— Շատ ալ լաւ գիտես։

— Ի՞նչ փոստած եղաք, — Աբշաւիրի հեգնելու փորձը ձախողեցաւ, որովհետեւ անմիջապէս զղջաց եւ ուզեց սրբագրել ըսածը. — Ե՞րբ պիտի մեծնաս։

— Երբ պիս երեխայ չնկատես այլեւս։

— Բայց ե՛ս։

— Երեխան դուն ես, որ աշխարհի ամէնէն պարզ բանը չես հասկնար։

— Սկսանք դարձեալ։

— Կ'ուզեմ քեզ տեսնել, — Արփիկ կարեւորութիւն չընծայեց վերջին ակնարկութեան։

— Հիմա՞։ Ի՞նչ կայ որ։

— Կ'ուզեմ քեզ տեսնել, այդքան։ Հոնկէ մի հեռանար։ Տասը վայրկեանէն քովդ կ'ըլլամ։

— Ո՛չ, ես կու գամ քեզ կ'առնեմ։ Երկու վայրկեան չի տեւեր օրդյով։ Թաղին ծայրը սպասէ՛։

— Աւելի լաւ։ Կը պտըտինք գոնէ։

⁂

— Չես պիտի խայտառակես դուն, — Աբշաւիր Դարբինեան յանդիմանեց պաշտօնեան, բայց գոհունակութեամբ ժպտեցաւ։

— Քանի այդպէս է, վայրկեան առաջ այս թաղերէն հեռանանք։

— Հեռանանք։ Ցեռո՞յ։

— Կարօտցայ քեզի, — ըսաւ աղջիկը։

— Բարեբախտաբար. թէ ոչ՝ գործի բնաւ պիտի չգայիր։

— Ըսելիքդ ա՞յս էր։ Ուրիշ հետաքրքրութիւն չունիս արդէն։ Այդ գրասենեակին սիրահարուած եռ դուն, որ... իսկապէս ցաւալի է։ Բայց առաջուընէ աւելի լաւ ես. փոխուած ես մասամբ, եւ ուրեմն յոյս պէտք չէ կտրեմ։

— Ի՞նչ կ'ուզես, որ ընեմ։

— Քիչ մըն ալ իմ մասիս մտածէ։

— Ասկէ աւելի՞, — գանգատեցաւ

digitised by A.R.A.R.@

Արշաւիր, — ուրիշ բանի մասին մտածած չունիմ արդէն։

— Ուրախ եմ։

— Գոհ ես այսինքն։ Ձիս չարչարելը սկսած է հաճոյք պատճառել քեզի։

— Քաշածս ես գիտեմ. քիչ մըն ալ դուն չարչարուիս, զէշ չ'ըլլար։ Կարծես իմ մասիս մտածելը չարչարանք է։

— Շուարեցայ այլեւս։ Ինչ որ ըսեմ, ինչ որ ընեմ, դժգոհ ես։ Եթէ միայն գիտնայի...

— Այո՛, — ընդմիջեց Արփիկ, — որովհետեւ ձիս մանուկի տեղ դրած ես, եւ կը կարծես, որ անուշ խօսքերովդ կրնաս խաբել։ Ուրիշին կրնաս կլլեցնել, ինծի...

Դարբինեան անդրադարձաւ յանկարծ, որ ամիսներէ ի վեր նոյն յանկերգը կը կրկնէին։ Նոյն խօսակցութիւնը՝ գրեթէ ամէն օր։ Ցանախա՞նք էր, երա՞զ, թէ տեսակ մը կախարդանք։ Զարմանալին այն էր, որ չէին ձանձրանար, ու երեխաներու պէս կը զուարճանային՝ իրենց առօրեայ խաղը կրկնելով անչեղ հարազատութեամբ։ Իրեն համար դէթ հաճոյք մը դարձած էր այլեւս այս անմեղ եւ անդիտակից խաղը։ Տեսակ մը հոգեկան սնունդ, հանապազօրեայ հաց, որմէ կախեալ էր իր հաւասարակշռութիւնը։ Եւ այդ իսկ պատճառով թերեւս ամէն ինչ անիմաստ թուեցաւ իրեն այդ պահուն — ունայն, անտրամաբանական, ծիծաղելի։ Եւ ակամայ հարցուց.

— Ասոր վերջը ի՞նչ պիտի ըլլայ։

— Շատ լաւ։ Օր մը չէ օր մը պիտի հասկնաս բանս, եւ այն ատեն կը համոզուիս, թէ ես ալ իրաւունք ունիմ։ Ենթադրածիդ պէս անձնասէր չեմ, ոչ ալ խենթ։ Թերեւս անձնասիրութիւն կայ ըրածիս մէջ, բայց ի՞նչ կրնամ ընել։ Զսիրցընէիր դուն քեզ։

— Տիկինս պիտի կասկածի վերջաւորութեան, ինչպէս նաեւ հայրդ։ Կը՞նա՞ս երեւակայել։

— Հո՞գս, — ըզայնացաւ աղջիկը։

— Հայրդ ի՞նչ պիտի մտածէ իմ մասիս։

— Ինչ կ'ուզէ թող մտածէ։ Եթէ կ'ուզես, ես կը խօսիմ, կը յայտնեմ իրեն ամէն ինչ։

— Որ գետնին տակը անցընես զիս, խայտառակես, եւ հայրդ ալ վշտացնես։

— Կը սիրէ քեզ, կը յարգէ։ Զի վըշտանար, մա՛նաւանդ՝ որ կը հասկնայ զիս, կը ճանչնայ։

— Ըսել կ'ուզես, թէ համաձայն պիտի ըլլայ, որ իր մէկ-հատիկ աղջիկը բաբեկամի մը հետ յարաբերի։

— Չեմ գիտեր։ Բայց վստահ եմ, թէ պիտի հասկնայ, ներէ։

— Եւ դեռ կ'ըսես, թէ խենթ չես։

— Եթէ կ'ուզես, հիմա մեզի կ'երթանք եւ կը խօսինք։

— Զեզի՞։ Ի՞նչ պիտի խօսինք։

— Հօրս հետ։

— Զէի գիտեր, թէ հարցերը այսքան թեթեւօրէն կ'առնես, — Դարբինեան ապշահար դիտեց կողքին, ինքնաշարժին մէջ բազմած աղջիկը, որ իր քարտուղարուհին էր։ Այս իր ճանչցած լուրջ եւ ինքնամփոփ պարմանուհի՞ն էր, թէ... բայց ինչո՛ւ պարմանուհի։ Հասուն, կատարեալ, դեղեցիկ կին մը, որ օտարներու հետ խօսած ատեն կը շիկնէր սակայն։ Ճիշդ պարմանուհիի մը պէս, որուն անմեղութիւնը կին ըլլալու գիտակցութեամբ չէր աղտոտած տակաւին։

— Կը սխալիս։ Շատ լուրջ եմ։

— Նպատակը ի՞նչ է։

— Վախդ փարատելու համար։ Եթէ պէտք ըլլայ, Լէյլային ալ ես կը յայտնեմ։ Հիմա։ Երթանք, ձեզի՛ երթանք։

— Կեանքը ամբողջ հաւանաբար կատակ մըն է քեզի համար։ Դուն միայն քու մասիդ կը մտածես, ճիշդ է, եւ այդ իմաստով անձնասէր ես։

— Ի՞նչ կրնամ ընել։ Եթէ սիրելը անձնասիրութիւն է, անձնասէր եմ թերեւս։ Բայց ես գիտեմ, թէ քեզ կը սիրեմ, եւ ոչ ոք կրնայ արգելք ըլլալ, ոչ իսկ դուն։

— Հետաքրքրական է, — Արշաւիր չկրցաւ ժպիտը ծածկել։ — Կարծիք յայտնելու ալ իրաւունք չունիմ. թերեւս։

— Ո՛չ։ Դուն կարծիքդ քեզի պահէ եւ հիմա զիս տուն հասցուր։

digitised by A.R.A.R.@

***

Արփիկ Մանուկեան յառաջիկայ օրերուն արտակարգօրէն ուրախ էր եւ անընդհատ կը շաղակրատէր։ Գրասենեակին մէջ անոր ներկայութիւնը խրախճանքի նման փոթորիկի մը վերածուած էր. կը մեքենագրէր, ապապրանքներ կը պատրաստէր, ու նոյն միջոցին թիթեւնիկի մը պէս կը դառնար սիրած մարդուն շուրջ, կը կատակէր, կը խօսէր, ու չէր կրնար հանդարտիլ։ Նախկին սակաւախօս, ամօթխած աղջիկը հիմնովին փոխուած, ինքզինք նոյնիսկ կը զարմացնէր։ Բայց վերածնած անձի մը նման ու հոգեզմայլ վիճակի մէջ կը վայելէր այս նոր երանութեան իւրաքանչիւր պահը՝ չբաղատրը բոլորովին մոռցած, կամ ուրացած։ Եւ այդ հոգեվիճակին մէջ չէր կրնար ըմբռնել, թէ Արշուիր ինչո՛ւ մտահոգ էր եւ ընկճուած։ Խօսելու նոյնիսկ տրամադրութիւն չունէր, ու հապճ. իր հարցումներուն կը պատասխանէր։ Մինչդեռ ինք խօսելու անընկճելի պահանջ մը կը զգար, մանաւանդ հիմա, եւ չէր կրնար ինքզինք զսպել։

— Երջանկութիւնը դիտե՞ս ինչ է, — հարցուց քիչ ետք, երբ որոշեց լռանալ։

— Զիս բանաստեղծ կարծեցիր։

— Ո՛չ, լուրջ։ Կ'ուզեմ քեզի զգացածս բացատրել։ Ալխարհի ամէնէն երջանիկ անձն եմ, գոհ, բաւարարուած, ուրախ, երջանիկ։ Ակէ առաջ այսպէս չեմ զգացած երբեք, հակառակ անոր, որ ամիսներէ ի վեր մեկտեղ եմ ու քեզ կը սիրեմ,

— Պատճա՞ռը ինչ է։

— Հիմա միտքս հանդարտ է։

— Ի՞նչ կը նշանակէ ատիկա։ Մինչեւ հիմա հանդարտ չէ՞ր, ըսել կ'ուզես։

— Ո՛չ։

— Լա՛ւ, բացատրէ նայինք, — նեղոդամտարար ժպտեցաւ Դարբինեան։

— Որոշեցի հետդ ամուսնանալ։

— Բայց ես ամուսնացած եմ արդէն, — մեքենականօրէն առարկեց երէցը՝ առանց իսկ կարեւորութիւն ընծայելու աղջկան շնաչխարհիկ յայտարարութեան։

— Գիտեմ։ Երջանիկ ամուսնութիւն մը չէ սակայն. ո՛չ զուն կինդ կը սիրես, ոչ ալ կինդ՝ քեզ։ Ինչի՞ս ամուսնութիւնն է. մեղք չէ՞ քեզի, եւ ինչու չէ՝ Էլլայինն ալ։

— Մեր տարբերին...

— Եւ Էլլան քեզի յարմար կին չէ արդէն, — Արփիկ թոյլ չտուաւ, որ նախադասութիւնը ամբողջացնէր։ — Զաւակներուդ ալ մեղք է. խեղճ զզուիկները...։ Առանց դուրգուրանքի ի՞նչ պիտի ըլլայ վերջերնին։

— Այս բոլորը դո՞ւն պիտի որոշես, — Արշաւիր սկսաւ խօսեցաւ, եւ զգաց, որ ներքուստ պիտի ուզէր աղջկան ըսածը արդարացնել, հաստատել նոյնիսկ։

— Արդար չէ։ Քեզի պէս մարդ մը... երջանիկ ըլլալու իրաւունք ունիս. ուրիշներէն շատ աւելի։

— Քու տարբերդ կը հասկնամ։ Իրական կեանքը, դժբախտաբար, կարծածդ պէս մեղր ու կարագ չէր։ Պատասխանատուութիւն, պարտականութիւններ, հիւանդութիւն, գործ, չարչարանք. ես գիտե՛մ։ Ամուսնանալը այնքան հրաշալի բա՞ն մըն է կը խորհիս։

— Երբ երջանիկ ըլլաս, սիրածիդ հետ ապրիս։

— Հապարէն մէկ չի պատահիր։

— Ուրիշներուն կեանքը զիս չի հետաքրքրեր, — Արփիկի պոռթկումը չբաժեղանք էր աւելի։ — Ես վստահ եմ, որ երջանիկ կ'ըլլամ։

— Դո՛ւն։ Իսկ ե՞ս...։ Եթէ ներդաշնակութիւն չստեղծուի, ինչպէ՞ս երջանիկ պիտի ըլլաս։

— Ինչո՞ւ ներդաշնակութիւն պիտի չստեղծուի։ Զիս չե՞ս սիրեր։

— Սիրելը բաւարար չէ։ Կարեւորը կարենալն է, ապատ ըլլալը։

— Ո՛չ, կարեւորը կամենալն է. եթէ ուզես, եթէ որոշես, կրնաս։ Ազատութիւնդ քեզմէ զատ ո՞վ կրնայ տալ քեզի. ո՞վ կրնայ կաչկանդել քեզ, եթէ քաջութիւնը ունենաս։

— Կեանքը, — տխուր ժպիտ մը ուրուագծուեցաւ Արշաւիրի դէմքին վրայ։ — Իմ պարագային քաջութիւնը հարց չի լու-

digitised by A.R.A.R.@

ծեր, հարցեր կը ստեղծէ միայն։ Այս մասին ինչո՞ւ կը խօսինք, — անդրադարձաւ յետոյ, — երեխաներու պէս նստած կ'ելբազենք։

— Վերջին ըսածդ կը փաստէ, թէ դուն ալ կ'ուզես, մտածած ես այս մասին։ Ճիշդ չէ՞։

— Ի՛նչ արժէք ունի։

— Բայց կ'ուզես, չէ՞։

— Ես հիմա պէտք է երթամ, — Դարբինեան չկրցաւ հարցումին պատասխանել։ — Այս ապսպրանքները տանիմ — յանձնեմ։

— Ես ալ հետդ կու գամ։

— Ո՞ւր։ Դեռ ժամը տասն է։

— Հետդ։ Հոս ընելիք չունիմ այսօր այլեւս։

— Գրասենեակն ալ հետերնիս քաշենք, ի՞նչ կ'ըսես։ Հեռաձայնող կ'ըլլայ, հանդիպող յաճախորդներ, ապսպրանք։

— Ապրանքի պէտք ունեցողը կրկին կը հեռաձայնէ կամ կը հանդիպի, — յամառեցաւ աղջիկը։ — Առանձին ի՛նչ պիտի ընեմ հոս։

— Դորձ է ասիկա, եւ դուն ալ՝ հաստատութեան քարտուղարուհին։ Գրասենեակը փակէ՞նք։

— Ցաճախորդներուն մենք կը հանդիպինք, դուն այսինքն, եւ ապրանքի պէտք ունեցողներէն ապսպրանքները կ'առնենք։ Առեւտուրի աւելի հիշդ կերպն է. համաձայն չե՞ս։ Փոխանակ իրենց ապասելու՝ դուն կը հետապնդես զիրենք։

— Առեւտրականօրէն, այո՛, — զործատէրը խնդաց, — բայց գրասենեա՞կը։ Եւ յետոյ, մարդիկ ի՞նչ պիտի մտածեն։ Երեւակայէ, որ առտուընէ մինչեւ իրիկուն միասին չըլլինք։

— Ի՛նչ կ'ուզեն թող մտածեն։ Օրինակ կ'առնեն թերեւս եւ բան մը կը սորվին։

— Եթէ ամէն մարդ քարտուղարուհին առնէ եւ փողոցները իյնայ...

— Ամէն մարդ մեր ըրածը չի կրնար ընել։

— Վստահ եմ։

— Բալենք ուրեմն, — Արփիկ կանգնեցաւ ոտքի։

— Դուն իսկական փորձանք ես եղեր, եւ բաւական հնարամիտ։ Կին արարածին հետ զլուխ ելլելը բաւական դժուար է, գիտեմ։

— Հապա դուն պտըտիս, եւ ես հոս առանձին քեզի՞ սպասեմ։

⁂

Շաբաթներ եւոք, Արշաւիր Դարբինեան աշխատելու այս նոր եղանակը իւրացուցած էր արդէն եւ եռանդով կը շրջէր Գէյրութի զանազան շրջանները, զբրասենեակը վստահած գրացիներու բարեացակամութեան։ Արդիւնքն չափազանց գոհ էր, ու նոյնիսկ երախտապարտ՝ փորձանք աղջկան, որ այս գաղափարը յղացած էր։ Առաջին ամսուն վերջաւորութեան իսկ վաճառքը զգալի յաւելում կրած էր, մինչ Արփիկի մեայուն ներկայութիւնը ինքնաշարժէն մէջ, շրջագայութեան ընթացքին, աշխատանքը աւելի հաճելի դարձուցած էր։ Իսկ կեանքը՝ հիմնովին յեղաշրջած։ Աւելի ուրախ էր, խանդավառ, ու գրեթէ՝ երջանիկ։ Եւ բնականաբար ինքզինք բախտաւոր կը նըկատէր։

Զարմանալի ու խենթ աղջիկ մը էր, վերտին հաստատուն ինքնիրեն հիմա, բայց նաեւ ուշիմ եւ անըմբռնելի կերպով միամիտ ու բարի։ Եւ այդ իսկ պատճառով սկսած էր մտահոգել զինք, նկատելով, մա՛նաւանդ՝ որ բացարձակօրէն անտարբեր էր շրջապատին եւ ընկերութեան նկատմամբ։ Ցաճախորդներէն ոմանք խորհրդաւոր կերպով կը փափաչին արդէն, գիտէր, մինչ Արփիկ չէր անդրադառնար իսկ, ու երբ ինք ակնարկէր պատահածին, պարզօրէն ուսերը կը թօթուէր առինքնող պչրանքով մը, ու կը դանդաղէր երբեմն միայն։

— Մարդիկ ի՞նչ անկիրթ են։ Իրենց ի՛նչ։ Մենք իրենց գործերուն կը խառնըւի՞նք։ Ո՛վ գիտէ իրենք ինչեր կ'ընեն. մենք բացէ ի բաց միասին կը պտըտինք, ու ծածկելիք կամ ամչնալիք բան մը ալ չունինք արդէն։

digitised by A.R.A.R.@

***

Շաբաթ իրիկուն էր, եւ ակամայ տունը փակուած՝ կը սպասէր երեխաներուն, որոնք ամէն Շաբաթ կէսօրէ ետք կանոնաւորաբար կ'այցելէին բոլոր ազգականներուն՝ կրտսեր քրոջը ընկերակցութեամբ։ Քառասուն տարեկանին, լուռ եւ ինքնամփոփ աղջիկ մըն էր Վարդուհի, որ իր զաւակները իրմէ աւելի կը սիրէր հաւանաբար։

Քիչ մը անդին, Էլլա տիւանին վրայ նստած, ինք կը դիտէր նոյն միապաղաղ արտայայտութեամբ։ Օրերէ ի վեր մասնաւոր ուշադրութեամբ, գուրգուրանքով թերեւս, կը հետեւէր իր բոլոր շարժումներուն, փորձելով ամէն կերպով պոհացնել զինք, հանդարտեցնել՝ ենթակիտակցաբար զգացած ըլլալով հաւանաբար, թէ ներքնապէս հանդարտ չէր, բնական չէր պարզօրէն։ Բուսական խորամանկ կին էր, կը ճանչնար. իր կինն էր ի վերջոյ։ Ի՞նչ կամ ինչի՛ մասին կը մտածէր արդեօք. ինչո՞ւ այսպէս գութով, խանդաղատանքով կը նայէր իրեն։ Բան մը պատահած պէտք է ըլլայ, եզրակացուց եւ որոշեց անպայմանօրէն պարզել գաղտնիքը։ Բայց Էլլա կանխեց զինք եւ ըսաւ.

— Սքանչելի աղջիկ է Արփիկը, գիտե՞ս։

— Ինչպէ՞ս, — Արշաւիրի սիրտը սանձարձակօրէն սկսաւ տրոփել։

— Պարզ, բարի, միամիտ, ազնիւ. սքանչելի աղջիկ մը իսկապէս։

— Այո՛, քիչ մը տարօրինակ է թէեւ, երեխայի նման բան մը։ Զե՞ս նկատած, աղջիկներուն հետ երեխայի մը պէս կը խաղայ, կը զբաղի։

Շատ էր սիրէ դիրենք, — բաւ կինը, — այնպէս որ՝ զարմանալի չէ։ Մա՛նաւանդ՝ որ քեզի այնքան կապուած է, կը պաշտէ գրեթէ։

— Պաշտելը չեմ գիտեր, բայց երեխայի նման բան մըն է ըսի, եւ զաւակի մը պէս կապուեցաւ ինծի, ճիշդ է։ Հայրը հին բարեկամ մըն է։

— Պէտք է ըսել, որ բախտաւոր ենք։

— Ի՛նչ կերպով։

— Վստահելի օգնականի մը պէտք ունէիր դրասենեակը։ Ասկէ աւելի լաւ կարգադրութիւն չէր կրնար ըլլալ. հարատաւ զաւակիդ պէս է, ըսէր արդէն։ Բախտաւորութիւն չէ՞։

— Մեզի համար՝ թերեւս, — բարձրաձայն խորհրդածեց ամուսինը, — բայց իրեն համար, չեմ գիտեր։ Երբեմն լրջօրէն կը մտահոգէ զիս։

— Ինչո՞ւ։

Արշաւիր Դարբինեան հարցական նայեցաւ կնկան, ու կատհելով, որ ան ամէն ինչ կը զլոր կամ նոյնիսկ գիտէր արդէն, որոշեց տեղւոյն վրայ իրականութիւնը պարզել անոր։ Քաջութիւն չէր, այլ՝ պարզօրէն անհրաժեշտութեան արդիւնքը։ Ցանկարծ, առանց նախապէս խորհած ըլլալու այդ մասին, անհրաժեշտ նկատեց խոստովանիլ Էլլայի։ Եւ զինք իսկ զարմացնող հեշտութեամբ կը ըսաւ խօսիլ։

— Կը վախնամ, կը կարծեմ, որ սիրահարած է ինծի։ Ինչպէ՞ս կ'ակնկալես, որ չմտահոգուիմ։

— Իրե՞ն համար մտահոգ ես, թէ քեզի համար, — Էլլա հետաքրքրուեցաւ՝ առանց ամենադոյզն չափով իսկ ազդուելու։

— Անկեղծօրէն, ինչպէ՞ս բացատրեմ, բոլորիս համար։ Ամէնէն աւելի աղջիկներուն եւ իր վրայ կը վախնամ. մեզի համար ամէն ինչ վերջացած է…։ Այս տարիքէն ետք, մեզի ի՛նչ կրնայ պատահիլ։ Գլխաւոր տուժողը ինք պիտի ըլլայ անշուշտ։

— Կը սիրե՞ս զինք, — կինը հարցուց, նոյն միապաղաղ, ահաւոր արտայայտութիւնը դէմքին։

— Զիս կը ճանչնա…

— Ո՛չ, պատասխանէ, մի քաշուիր։ Ինք ամէն ինչ խօսած է ինծի։ Առոր համար կը հիանամ իր վրայ, եւ կ'ընդունիմ, որ սքանչելի աղջիկ է։ Ճիշդ է, քիչ մը խենթ կամ միամիտ, բայց եւ այնպէս՝ եզակի, բացառիկ… ու չես կրնար չսիրել զինք։

— Ի՛նչ կրնամ ըսել։ Դուն ինձմէ ա-

digitised by A.R.A.R.@

ւելի լաւ ճանչցած ես զինք քան երեւոյթին, որ զարմանալի չէ։ Ի վերջոյ կինը աւելի լաւ կը հասկնան միմեանց։ Բայց ճիշդ ինչ քան քեզի, — Արշաւիր չկրցաւ հետաքրքրութիւնը զսպել։

— Բոլոր քեզի ըսածները։

— Դո՛ւն ինչ ըսիր իրեն, ինչ եղաւ անդրադարձդ։

— Սկիզբը կարծեցի, որ խնդալիս խենթ է, բայց յետոյ, ի՞նչ կրնայի ըսել։ Դուն տեղս ըլլայիր, ի՞նչ կ՚ըսէիր։ Խնդալիք չէ՞։ Ձեռ կրնար չսիրել զինք, ըսի։ Փոխանակ ջղայնանալու՝ նախանձեցայ իրեն, ոչ թէ քեզի։ Իրե՛ն։

Ակէ աւելի տխուր պատասխան չէր կրնար երեւակայել Արշաւիր։ Պարզուած, անձնատուր եղած եւ այդ պարտութեան հետ հաշտուած մարդու իրատեսութիւն էր, լուռ խոստովանութիւն։

— Ինչո՞ւ պիտի նախանձիս։

— Կեանքիս մէջ իրեն պէս երիտասարդ չեմ եղած. այսինքն՝ ազատ, իրեն պէս ազատ, անկաշկանդ, բայց անմեղ, միամիտ։ Իրաւ երիտասարդութիւնը ասիկա է։ Իր տարիքին ես լման կին էի արդէն, բաւին խակական տառեմով կին. հասասարակչիռ, խորամանկ, այո՛, այո՛, խորամանկ, ես եմ ըսողը։ Ամէն ինչ հաշիւով կ՚ընէի, կը ծրագրէի, եւ բնաւ պարզ չէի այսպէս։ Եւ միշտ կը կարծէի, համոզուած էի, թէ իբրեւ կին յաջողած եմ եւ նպատակիս հասած. մինչդեռ այսօր գիտեմ, թէ սխալած եմ, որովհետեւ իրեն պէս անմեղօրէն, առանց վախի չեմ կրցած սիրել։ Ինչպէ՞ս չնախանձիս։ Եւ բնական է իրեն պէս ալ չեմ սիրուած։

— Բայց մենք համերաշխ, ներդաշնակ կեանք մը ունեցած ենք. այսինքն՝ բնական, ամէն մարդու պէս, եւ շատեր նախանձած են մեզի։ Իրարմէ դոհ եղած ենք, զիրար չենք վշտացուցած կամ խաբած ու... երեխաներ չենք անշուշտ, որ սիրահարութիւն խաղայինք։

— Գիտեմ, ինծի բացատրելու պէտք չունիս. քեզմէ հաշիւ չէ, որ կը պահանջեմ։ Ո՛չ դուն յանցանք ունիս ասոր մէջ, ոչ ալ ես, բայց ճիշդ մեր բնական կեանքն է, որ սխալ է, կամ եթէ կ՚ուզես՝ անբնական։ Մենք մեր կեանքը վատնած ենք, եւ այսօր ուշ է արդէն։

— Մեր պարտադային տարբեր չէր կրնար ըլլալ, — Արշաւիր յուսաց կինը մխիթարել տակաւին, — մենք մեր անձերը եղած ենք, եւ մեզի պէս մարդիկ մեր կեանքը կրնան ունենալ միայն։ Ես չէի կրնար Տոն ժուան մը ըլլալ, որովհետեւ խառնուածքով, գիտես, այդ տեսակ հետաքրքրութիւն չեմ ունեցած. իսկ դուն Արիփկ չէիր անշուշտ։ Եթէ փորձէիր ըլլալ, կեղծ դուրս պիտի գար։ Այնպէս որ՝ մեր ըրածը մեզի համար ճիշդ էր, անխուսափելի։ Տարբեր չէր կրնար ըլլալ, — անդդալաբար կրկնեց վերջաւորութեան։

— Այո՛, սակայն դուն Արիփկը կը սիրես այսօր։

— Մեր կեանքէն բան չի փոխեր ասիկա։ Ոչ ալ մեզ կը փոխէ։ Ես գոնէ չեմ փոխուած, այսինքն՝ երիտասարդական խենթութիւն չեմ կրնար ընել եւ ոչ ալ նպատակ ունիմ։ Պարզօրէն չեմ կրնար։ Ձեռ կրնար չսիրել զինք, դո՛ւն ըսիր։ Կացութիւնը այս է, եւ եթէ կրնաս՝ լուծէ։ Ի՞նչ կ՚ուզես, որ ընեմ։

— Կ՚ուզեմ, որ երջանիկ ըլլաս, — Լէյլայի ձայնին մէջ տխրութիւնը զգալի էր։

— Ինչպէ՞ս։

— Պէտք է սիրես զինք. իրեն պէս ազատօրէն սիրես, ու չկաշկանդես դուն քեզ, չսպաննես իր կեղեցիկ սէրը։ Մեղք է, ոճիր։

Արշաւիր թերահաւատութեամբ շփեց աչքերը, կարծելով, որ կ՚երազէր, եւ հարցուց.

— Կը նեղես, մեզմէ մէկը խենթ է, բայց չեմ գիտեր, թէ ով։ Ի՞նք, դո՞ւն, թէ ես։

— Թերեւս երեքս ալ։ Եւ լաւ է, որ այդպէս է։ Քեզ չկորսնցնելու միակ յոյսն է, կը հասկնա՞ս, թէ ինչ ըսել կ՚ուզեմ։

— Անկեղծօրէն՝ ո՛չ։

— Զինք սիրելդ ինծի ի՞նչ վնաս ունի այնքան ատեն, որ զիս իրեն պէս պիտի չկարենաս սիրել երբեք։ Դէպ ոչ ասկէ ետք։ Ես քառասունը հինգ տարեկան,

digitised by A.R.A.R.@

վերջացած կին եմ, Արշի՛, մինչդեռ դուն՝ ճիշդ է, յիսուն տարեկան ես, այո՛, բայց երիտասարդ ես տակաւին, առողջ, ու սիրելու եւ սիրուելու արժանի ես, իրաւունք ունիս։ Թէ ոչ պիտի չսիրէր քեզ։

—Դուն կին չե՞ս, — ամուսինը կասկածանքով նայեցաւ կնկան, — չե՞ս նախանձիր, զգացում չունի՞ս։ Կամ թերեւս կ'ուզես զիս պատժել, չարչարել, վիրաւորել, վրաս խնդալ։

— Քեզ չկորսնցնելու միակ յոյսս է, ըսի։ Անշո՛ւշտ որ զգացում ունիմ, եւ իրականութիւնը եթէ կ'ուզես՝ ցաւ կը դրդամ, այո՛, որովհետեւ դիւրին չէ, ընդունինք։ Բայց չեմ նախանձիր. իրապաշտ պէտք է ըլլալ, չէ՞։ Չեմ կրնար ակնկալել, որ զիս սիրես այնպէս՝ ինչպէս զինք կը սիրես։ Կեանքիս մէջ ինքզինքս չեմ կրցած խաբել երբեք, եւ ասկէ ետք ալ ընաւ պէտք չունիմ։ Կը հասկնա՞ս ըսածս։

— Ո՛չ, — ցղայնացաւ Արշաւիր Դարբինեան։

— Կ'ուզեմ, որ հասկնաս, ընդունիս, թէ քեզի պէտք ունիմ, որուն ատենէ ասելի հիմա։ Բացատրելու պէտք չունիմ։ Մի սոխպէր, եթէ չես ուզեր նուաստացընել զիս կամ ոչնչացնել։ Այնպէս որ՝ քեզ չկորսնցնելու, նուազագոյնը պահպանելու համար ամէն զոհողութիւն ընելու պատրաստ եմ։ Մա՛նաւանդ՝ որ զինք սիրելդ ինծի վնաս չունի, չի կրնար ունենալ։ Կը ճանչնամ քեզ։

— Բայց որամաբանական չէ։

— Կը սխալիս, շատ որամաբանական է ըսածս, — համոզուած չեչտով մը խօսեցաւ Լէյլա ու, խօսակցութիւնը վերջացած համարելով՝ կանգնեցաւ ոտքի, եւ եզրակացնելու մտօք ըսաւ, — կեանքն է, որ որամաբանական չէ։

— Այս ամբողջէն ի՞նչ պէտք է հասկնամ։

— Քանի՞ անգամ կրկնել պիտի ոտս։ Կ'ուզեմ, որ ազատ զլաս եւ, երեխանեւրուն սիրոյն, չխանգարես մեր կեանքը։ Աղջիկները զինք շատ կը սիրեն. պէտք է ըսել, որ ես ալ կապուեցայ իրեն, զարմանալի է, հակառակ անոր, որ առաջին օրէն կը դգայի, կը նախազգայի թերեւս։ Ամէն ինչ սովորականին պէս պէտք է շարունակուի եւ կը յուսամ, որ ժամանակի ընթացքին տան անգամ կը դառնայ. այսինքն՝ մեզմէ մէկը, հարազատ մը։

— Անկարելի է, — Արշաւիր զանգատեցաւ, իսկապէս չփոթած, — ակնկիրուս չեմ հաւատար։ Գիտե՞ս, թէ թելադրածդ ինչ կը նշանակէ։

— Ինչո՞ւ։ Այս տեսակ բաներ անպայման զաղտնի՞ պէտք է ընել։ Ի՞նչ է տարբերութիւնը։ Գաղտնի ընելը աւելի լա՞ւ է կը կարծես։ Կամ ինծի համար աւելի տանելի՞ կ'ըլլայ։ Երբե՛ք։

***

Երկուշաբթի առաւօտուն, երբ Արշաւիր տիկնոջ հետ ունեցած խօսակցութեան մանրամասնութիւնները յայտնեց Արփիկին, աւելի եւս չփոթեցաւ, եւ համոզուեցաւ, թէ կին տարածը պիտի չկարենար ճանչնալ երբեք։

— Չէի ակնկալեր, որ այսքան վրէժխնդիր պիտի ըլլայ կինդ, — եղաւ աղջկան անմիջական պատասխանը, — գիտէի, թէ խարամանկ է, բայց այսքա՞ն։ Սարսափելի է։

Գ. ԱՌԵՄԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Հեռապայ լափածոն Հայաստանի մէջ լրջագայութեան գրուած ոտանաւորի մը պատճէնն է, որուն հեղինակը անծանօթ կը մնայ մեզի, մնաց որ, հեղինակ մը փնտռել տալու չափ ուժ ալ չունի անիկա, եւ արդէն իրրեւ բանաստեղծութիւն չի ներկայացուիր ընթերցողին։ Ուշադրաւը ուղերձն է՝ «Ուղերձ Հայաստանի եւ Սփիւռքի պատանիներին, աղջիկներին, երիտասարդներին»։

Մինչեւ հիմա մենք մեզի կ'ուղղէինք նման ուղերձները, ուրիշները մեզի կ'ուղղէին մեր պատմութիւնը ուսնկնդրելու եւ Մեծաքան-

ՀԱՅՈՑ ՀԱՐՑԸ

Ուղերձ Հայաստանի եւ Սփիւռքի հայ պատանիներին, աղջիկներին, երիտասարդներին։

Զմռռանա՛ս, հայ զաւակ,
Կոտրածն այն մեծ,
Որ երկիրդ հարազատ
Այրեց, աւերեց։
Երբ զարուն էր ծաղկում վառ
Տաճրիինգ թուին,
Գոլսից եկաւ հրաման՝
— Զարդել հայերին...
Ահա գիւղեր լռակեաց,
Երնիքներ խաղաղ,
Ներսը անխօս ծուարած
Կին ու երեխայ։
Եւ մշակներ հէգ ու լուռ,
Խոնարհ ամէնքին՝
Ահա նստած են տխուր
Թոնրի եզերքին։
Իսկ քիչ հեռու գինավառ
Քաջ ասկեար ու քուրդ,
Դէմքերը ժիր ու կայտառ՝
Կանգնած են գունդ-գունդ։

...Սլանում են, մոլեգնում
Նժոյգներն ահա,
Ադմուկ, փոշի են հանում
Ճամբէքի վրայ։
Կրակոցներ ու շռինդ,
Զնգոց՝ սուր ու թուր,
Մարտի կոչեր գոռ ու բիրտ՝
— Է՛յ, իայինն գեավուր...
Ճիչեր, դէմքեր սարսափած,
Լաց ու վայնասուն՝
— Օգնէ՛ք, մորթում են մարդկանց,
Որպէս անասուն...
Եւ գիւղի մէջ այն խաղաղ
Բոց, կրակ, աւեր,
Մանուկներ արնաթաթախ,
Թափուած դիակներ
Ու անարգուած հարսն, աղջիկ
Սարսափի մէջ խոր,
Գոռ փաշայի առաջին
Կանգնել են տկլոր։

digitised by A.R.A.R.@

չին արժէքն ու դէրը զգալու բաղձանքները, մեզի, հայրենապուրկ բազմութիւններուն, հայկական մթնոլորտէ դուրկ դժբախտներուն, մինչդեռ Հայաստանի մէջ երկնուած ստանաւորը նոյն ազերսով կը ներկայանայ հայրենի հողին վրայ ընդոնելու եւ հայկական մթնոլորտով յաղեցած պատանիներուն ու երիտասարդներուն եւս։

Մեր ազբերգութեան մէկ նոր երեսն է ասիկա, որուն ծալքերուն մասին պզտիկ գաղափար մը ունենալու համար կարդալ մեր ներկայ թիւին մէջ կազմուած պատկերը։

— Սա ինձ, սա քեզ, սա էլ հէջ,
Գէշ է ու փորով, —
Եւ զարկում են փորի մէջ
Արիւնոտ թրով...
Ու ճամբէքին գերիներ՝
Սովահար ու լուռ,
Գնում են օր ու գիշեր,
Չգիտեն, թէ ուր։
Եւ ընկնում են մէկ առ մէկ,
Գետինն են ճանկռում.
— Վե՛ր կաց, գեավո՛ւր, քիչ էլ եկ,
Ի՞նչ ես թաւալւում...
...Զմռռանա՛ս, հայ զաւակ,
Կատարածը մեծ,
Որ երկիրդ հարազատ
Այրեց, աւերեց։

⁂

Զմռռանաս, եւ ի քէն
Թշնամեաց բոլոր՝
Քո մայր լեզուն հայերէն
Պահպանիր՝ հզօր...
Հիմա հայոց մեր լեզուն
Թուրն է Վարդանի, —
Պահիր նորոգ ու միշտ սուր,
Ո՛վ, հայ պատանի։

Ու Մաշտոցի սուրբ աւանդ
Գրերը ամէն
Քո վահանն են տդամանդ՝
Զխոցուող յաւէտ...
Թէ շուրթերիդ միշտ լինի
Հայկեան խօսքը մեր
Ու թէ ձեռքդ միշտ գրի
Մեսրոպեան տառեր,
Թէ մայրերը մեր անգին
Խօսքը հայկազեան
Կաթի հետ տան զաւակին՝
Որպէս մաս արեան,
Թէ մանուկները հայոց
Երկրում եւ այլուր
Գնան հայկական դպրոց՝
Որպէս հարանց տուն, —
Ուռխանեարդ հին թէ նոր
Կը պարտուեն մի օր,
Ու Մեծ Հայքը մահուանից
Կը յառնի նորից...
Եւ հին վանը ու Անին,
Կարին, Կարս ու Մուշ
Նորից հայոց մայրենին
Կը խօսեն՝ անուշ։
Իսկ թէ լեզուդ մահանայ,
Մենք էլ ազգովին
Կը մահանանք յաւիտեան՝
Երկրի հետ մեր հին։

digitised by A.R.A.R.@

Մ. ԻՇԽԱՆ

ՄԵԱԿՈՅԹԻ ՊԱՀԱԿՆԵՐ

(ԹԱՏԵՐԱԽԱՂ ՁՈՐՍ ՊԱՏԿԵՐ)

Գ. ՊԱՏԿԵՐ

Մարգարի առեւտրական գրասենեակը: Լայն ու շքեղ գրասեղան մը՝ բեմի խորին: Հեռախօսի գործիք եւ զանգ: Առաջամասին՝ երկու կաշիէ թիկնաթոռներ: Դուռը կը բացուի նախասենեակին վրայ, ուր կ'աշխատի քարտուղարուհի Լուսին:

Երբ վարագոյրը կը բացուի, Մարգար գրասեղանին առջեւ հաշուեցոյցեր եւ առեւտրական նամակներ աչքէ կ'անցընէ: Նախասենեակէն մեքենագրութեան ձայն կը լսուի. այս ձայնը յաճախ պիտի լսուի, բաց դուռնէն, գալիք տեսարաններու ընթացքին:

1.

ՄԱՐԳԱՐ.— Օրիորդ Լուսին, տակաւին չվերջացա՞ւ այդ նամակը:

ԼՈՒՍԻՆ.— Վերջացաւ, պարոն Մարգար. (կը բերէ ներս): Ահաւասիկ:

ՄԱՐԳԱՐ (աչք մը ետեւէ ետք կը տառապրէ).— *Մաքսատան ապրանքներէն լուր մը չբերի՞ն:*

ԼՈՒՍԻՆ.— Բերին քիչ առաջ: Ձեզ կրցած հանել:

ՄԱՐԳԱՐ (ձեռքը սեղանին զարնելով).— *Օ՛, խայտառակութիւն. ապրանքը հասնի եւ չարաքնեբով մաքսաւունը սպասէ: Ջ'ըմբռնե՞ր այդ մարդը, որ անցնող ամէն մէկ օր ահագին վնաս կը պատճառէ ինծի: Ո՞վ է այս դժուարութիւնը հանողը:*

ԼՈՒՍԻՆ.— Կ'ըսէ, թէ դրծողութիւններուն մէջ սխալ բան մը եղած է. ապօրինութիւն կայ. քիչ մը դրամ պէտք է կերցնել:

digitised by A.R.A.R.@

ՄԱՐԳԱՐ.— Սո՛ւտ է, ո՛չ մէկ ապօրինի բան. պարզապէս կ'ուզեն կողոպտել զիս։ Ես գիւրին-գիւրին տեղի տուողը չեմ։ Ի՞նչ օրերու հասանք. ո՛չ օրէնք մնաց, ո՛չ իրաւունք այս երկրին մէջ...

ԼՈՒՍԻՆ.— Նոր գործ մը ունի՞ք ինձի յանձնելիք։

ՄԱՐԳԱՐ (սեղանին վրայէն նամակներ եւ թուղթեր հաւաքելով).— *Ա՛ռ այս թուղթերը եւ դասաւորէ տոսիէներուն մէջ։*

ԼՈՒՍԻՆ.— Շատ լաւ։ (Դուրս՝ դէպի նախասենեակ։

Հեռախօսը կը հնչէ։

ՄԱՐԳԱՐ (միշտ խոժոռադէմ, ընկալուչը վերցնելով).— *Ալօ՛, ո՞վ է։* (Դէմքը յանկարծ կը բացուի)։ *Ա՛, գո՞ւք էք պարոն Միքայէլեան, ինչպէ՞ս էք, տիկի՞նը ինչպէս է։ Ինչո՞ւ չեկաք երէկ գիշեր։ Այո՛, մեր օրն էր... Բաւական բազմութիւն կար, երկու սեղան աղուոր փոքէր մը ըրինք...։ Մինչեւ ժամը երկու...։ Ոչ, ճանրմ, մեծ բան մը չէ շահածս։ Սկիզբը բաւական կորսնցուցած էի, եաքէն շտկուեցաւ... Ուրիշ ի՞նչ կայ չկայ, նայինք...։ Փա՞ռք Աստուծոյ... Ի՞նչ, ապրա՞նքը. պատրաստ է, երբ որ ուզես... Ուշացա՞ւ, ինչպէ՞ս թէ ուշացաւ... խոստումս խոստում է, այսօր կամ վաղը առաւ անպայման կը հանենք մաքսատունէն։ Աւելի ժամ գինով առաջարկո՞ղ կայ... անկարելի է, որակը նոյնը չէ ուրեմն։ Չեմ կրնար, պատուոյ խօսք, չեմ կըրնար... Չ'ըլլար, պարոն Միքայէլեան, դուք գիտէք... Այսուհանդերձ, մէյ մը գրասենեակս հանդիպեցէք, կը խօսինք, այո՛, կը խօսինք, բան մը կ'ընենք։ Ծառայութի՛ւն։*

Կը փակէ հեռախօսը եւ կը զանգահարէ։ Լուսին կը ներկայանայ։

ՄԱՐԳԱՐ.— Շո՛ւտ, շո՛ւտ, մաքսատան գործակատարին լուր մը դրկէ, ամէն միջոցի թող դիմէ՝ ապրանքը այսօր իսկ ազատելու համար։ Միքայէլեանը միտքը փոխելու վրայ է։ Եթէ ուշացնենք, ստիպուած պիտի ըլլանք խօշոր գեղջով տալու։ Ա՛խ ի՞նչ փորձանք է. ո՛չ օրէնք մը-նաց, ո՛չ իրաւունք այս երկրին մէջ։

ԼՈՒՍԻՆ.— Շատ լաւ։ Պարոն Մարտինեանը եկած է, ձեզ տեսնել կ'ուզէ։

ՄԱՐԳԱՐ (մտազբաղ).— *Ո՞վ։*

ԼՈՒՍԻՆ.— Պարոն Մարտինեանը։

ՄԱՐԳԱՐ.— Ներս հրամցուր։

Մարտինեան ներս կու գայ։

2.

ՄԱՐԳԱՐ (առանց տեղէն շարժելու, պաշտօնական).— *Բարո՛վ, Մարտինեան։*

ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Բարեւ, լուր բերին, որ դիս ուզեր էք։

ՄԱՐԳԱՐ.— Հա՛, նստէ՛ նայինք. սուրճ մը կ'առնե՞ս։

digitised by A.R.A.R.@

ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Ո՛չ, շնորհակալ եմ, նոր խմեցի։

ՄԱՐԳԱՐ (շտկուելով).— Մարտինեան, քանի՞ տարի է, որ մենք բարեկամ ենք։

ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Ինչո՞ւ կը հարցնէք. քառասուն տարի մը կայ կարծեմ։ Գաղթականութենէն դարձին միասին նոյն տունը բնակեցանք։

ՄԱՐԳԱՐ.— Ճիշդ է, ես բարեկամութեան յարգը գիտցող մարդ եմ։

ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Ի՞նչ խօսք, պարոն Մարգար, վստահ եմ ատոր։

ՄԱՐԳԱՐ.— Կը յիշե՞ս, օր մը քովս եկար եւ 15 հազար ոսկի փոխ ուզեցիր այդ Հայկունի կոչուածին համար, վեց ամիսէն վճարելի։ Գիրք պիտի հանէ, ըսիր, լաւ գործ է, մշակոյթին պիտի ծառայէ, ըսիր, եւայլն, եւայլն։ Մեր լեռներս շատ չպառկեցաւ թէեւ, բայց Խաչ-ըրդ չուզեցի կոտրել եւ 15 հազար ոսկին մէկիկ-մէկիկ համբեցի, այնպէս չէ՞։

ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Այո՛, եւ լաւ գործ մը կատարեցիք։

ՄԱՐԳԱՐ.— Ասուած դիտէ, լաւ եղաւ, թէ դէշ։ Հարցը հոն է, որ վեց ամիսը շատոնց անցաւ եւ դրամս ետ չեկաւ։

ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Ինչո՞ւ, մաս մը վճարեց, որքան պիտեմ։

ՄԱՐԳԱՐ.— Կէսը միայն. միւս կէսը կը մնայ մինչեւ օրս եւ ձայն-ձուն չկայ։

ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Կը բերէ, անհոգ եղէք... գիրքերը չծախուեցան. դեռ բաւական պաշար ունի քովը։

ՄԱՐԳԱՐ.— Ես մեղաւո՞ր եմ, որ չծախուեցան։ Թող ատանկ խակ գործ չը-տեսնէր. լաւ չափէր-ձեւէր, յետոյ ճամբայ ելլէր։ Մենք ապսպրանք մը ընելէ առաջ հազար կը մտածենք. վնաս ընող ապրանքներու համար քամպեալներս կրնա՞նք ուրանալ։

ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Գիրքի պարագան բոլորովին տարբեր է։

ՄԱՐԳԱՐ.— Ատոնք պարապ խօսքեր են։ Քեզի չիտակը ըսե՞մ. այդ Հայկունիդ չսիրեցի՝ առաջին տեսնելուս։ Առաւ-փախաւի երեւոյթ ունի։

ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Կը սխալիք, պարոն Մարգար, շատ պարկեշտ տղայ է։ Տը-պարանին, թղթավաճառին, կազմարարին լրիւ վճարեց։ Ձերինն ալ կու տայ, վստահ եղէք։

ՄԱՐԳԱՐ.— Կու տա՛յ, օր մը կու տա՛յ, բայց ե՞րբ. դրամը արժեզրկուելէ՞ետք։ Լուր ունի՞ս, որ դրամը երթալով իյնալու վրայ է։

ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Դժբախտաբար այդպէս կ'երեւի։

ՄԱՐԳԱՐ.— Առեւտրական կեանքի մէջ ժամանակը արժէք է։ Այսքան ատեն է եթէ ես այդ դրամը գործի կապած ըլլայի, բան մը կը բերէր քիչէն-շատէն։ Մինչդեռ ես տոկոս ալ չպահանջեցի՝ մեր բարեկամութեան սիրուն։

ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Իսկապէս շատ ազնիւ գտնուեցաք։

ՄԱՐԳԱՐ.— Ազնուութիւնը չարաչար չեն գործածեր։ Ես դրամիս ամէն ժամ պէտք ունիմ։

ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Զուն է, հաւատացէք չունի. ուսուցչութենէ առած ամսականովը հազիւ կ'ապրուի։ Գիրքերը պիտի ծախէ, որ կամաց-կամաց վճարէ։

ՄԱՐԳԱՐ.— Ատոր ալ չեմ հաւատար. բոլորին կը խաբէ այդ տղան։ Անցածները փողոցը գիմացս ելաւ. փառաւոր գրաւաթ մը կապած էր, ամենասուղ տեսակէն. լիւքս գրաւաթ մը, որ ես չեմ համարձակիր դնելու։ Զունեցողը ատանկ շռայլութիւններ կ'ընէ՞։

ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Երիտասարդ է, պարոն Մարգար, շատ մի՛ տեսնէք, թերեւս ալ նուէր ստացած է, ո՞վ գիտէ։

digitised by A.R.A.R.@

ՄԱՐԳԱՐ — Դրամս թող տայ, ի՞նչ կ՚ուզէ՝ ա՞ն ընէ։ Մենք ալ երիտասարդ եղած ենք։ Պարտք ունեցած օրերնիս, գիշերը չէինք քնանար։ Պատիւը, անունը, գիրքը մարդ ինչպէ՞ս կը շահի։

ՄԱՐՏԻՆԵԱՆ — Ձեր իրաւունքին մէջն է։

ՄԱՐԳԱՐ — Ես առանկ փտած տախտակի վրայ կոխող չէի, սակայն ինչ եւ է, ինկանք։ Քու խաթիրդ կար մէջտեղը. չկրցայ խօսքդ կոտրել։

ՄԱՐՏԻՆԵԱՆ — Շնորհակալ եմ, չեմ մոռնար։ Հայկունիին պարտքը իմ պարտքս հաշուեցէք։

ՄԱՐԳԱՐ — Աշխարհիս երեսին շատ բարեսիրտ ըլլալը չիտակ բան չէ, փորձանքի մէջ կ՚ինկաս։ Մենք չուկայի վրայ մարդոց սարաֆը դարձած ենք։ Ո՞վ են սա գրող-մրող ըսուածները, որ տունդ կ՚առնես, կը պատուիս, բարեկամութիւն կը հաստատես։ Ի՞նչ վարկ ունին։ Ամէն գրիչ բռնող գրո՞ղ է։ Ես քեզ սիրելուս համար կ՚ըսեմ...

ՄԱՐՏԻՆԵԱՆ — Հայկունին ձեր ենթադրած երիտասարդներէն չէ։ Տաղանդ ունի, խոստմնալից ուժ է։ Դուք ինծի ձգեցէք, ես կը խօսիմ հետը։

ՄԱՐԳԱՐ — Ե՛ս պիտի խօսիմ. անոր լեզուէն ե՛ս միայն կը հասկնամ։

ՄԱՐՏԻՆԵԱՆ — Կը խնդրեմ, չընէք այդ բանը, շատ զգայուն է, դէշ կ՚ազդուի։

ՄԱՐԳԱՐ — Ի՞նչ, ես զգայուն չի՞մ... Երբ փարատ կ՚առնեն ձեռքէս, հա-լատա՛, գերզգայուն կը դառնամ։

ՄԱՐՏԻՆԵԱՆ — Հայկունին պարկեշտ մարդ է, բարեխիղճ դաստիարակ, ազգին նուիրուած։

ՄԱՐԳԱՐ — Ազգին ծառայել՝ անձէն հրաժարիլ կը նշանակէ. ես այս բանը միշտ ըսած եմ մեր վարժապետներուն, երբ հոգաբարձու էի։ Հիմակուան կրթական մշակները նախ իրենց անձը կը մտածեն, յետոյ՝ ազգը։ Քիչով գոհացող ալ չեն, դուն լաւ գիտես։ Ասենը մէյ մը ամսականի յաւելման խնդիր կը հանեն։ Կը վայլէ՞ իրենց։

ՄԱՐՏԻՆԵԱՆ — Անոնք ալ մարդ են, տուն-տեղ ունին, պիտի ապրին։

ՄԱՐԳԱՐ — Այո՛, սակայն անտանելի են, շարունակ դժգոհ, շարունակ բողոքող։ Զգուեցայ, ազգա՛ր, եւ ատոր համար հրաժարեցայ հոգաբարձութիւնէն։

ՄԱՐՏԻՆԵԱՆ — Կեանքը երթալով կը սպի, պարոն Մարգար, խեղճերը չեն կրնար ծայրը ծայրին բերել։

ՄԱՐԳԱՐ — Մարդ ուզիրը իր վերմակին չափով երկարելու է... Ո՛ւր են հին օրերու գաղափարապաշտ վարժապետները. ինչ որ տայիր՝ ատով ալ կը գոհանային...

ՄԱՐՏԻՆԵԱՆ — Հայկունիի պէս լաւ ուսուցիչ մը ապրելու համար ստիպուած է նաեւ յօդուած գրելու։ Անշուշտ կարդացած էք իր յօդուածները թերթերու մէջ։

ՄԱՐԳԱՐ — Ես այլեւս հայ թերթ չեմ կարդար. անտանելի դարձած են։ Հայհոյանքէ եւ կեղծիքէ զատ ի՞նչ կը գտնես անոնց մէջ։

ՄԱՐՏԻՆԵԱՆ — Ամէն ազգի մէջ վէճեր կ՚ըլլան։

ՄԱՐԳԱՐ — Մեր ազգը սիրոյ, միութեան եւ համերաշխութեան պէտք ունի. սանկով դէպի անդունդ կ՚երթանք կոր։

ՄԱՐՏԻՆԵԱՆ — Գոնէ կարդացէ՞ք իր նոր գիրքը։

ՄԱՐԳԱՐ (չոր ու կտրուկ) — Ո՛չ, Նկարագիր չունեցող մէկուն գրածը ես չեմ կարդար։

ՄԱՐՏԻՆԵԱՆ — Կարդացէ՛ք, շատ պիտի հաւնիք։

ՄԱՐԳԱՐ — Մինչեւ որ պարտքը չվճարէ, չեմ կարդար։

digitised by A.R.A.R.@

ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Շաբաթ մը եւս ժամանակ տուէք, անգամ մը ես զինքը տեսնեմ, դարձեալ կու գամ քովերնիդ։

ՄԱՐԳԱՐ.— Չ'ըլլար, ա'լ չեմ կրնար համբերել. այսօր իսկ անձնապէս պէտք է խօսիմ հետը։

ՄԱՐՏԻՆԵԱՆ (ոտքի ելլելով).— Լաւ, քանի որ կը պնդէք՝ կ'աշխատիմ տեսնել եւ զրկել ձեր մօտ... Միայն թէ նորէն կը խնդրեմ, չվիրաւորէք իր արժանապատուութիւնը։

ՄԱՐԳԱՐ.— Ան Հայկունիդ աչքէս ելած է, գիտցած եղիր... Քու խաթերդ եթէ չըլլար...

ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Շնորհակալ եմ, մնաք բարով։ (Կը մեկնի)։

Ներս կու գայ օրիորդ Լուսին։

3.

ԼՈՒՍԻՆ.— Կահագործին աշխատաւորը եկած է։ Վարպետը ձեր վրայ հաշիւ մը ունի եղեր. երբորդ անգամն է, որ կու գայ։

ՄԱՐԳԱՐ.— Հասկցանք, գլուխ տարաւ. պիտի չուտենք, կու տանք, ի՞նչ եռուէս ինկեր է։

ԼՈՒՍԻՆ.— Կ'ըսէ, որ վարպետը դրամի պէտք ունի եւ իր առնելիքը կը պահանջէ։

ՄԱՐԳԱՐ.— Հիմա բան մը չեմ կրնար ընել։

ԼՈՒՍԻՆ.— Ի՞նչ ըսեմ։

ՄԱՐԳԱՐ.— Ըսէք, որ հոս չեմ, թող դալ շաբաթ գայ։

ԼՈՒՍԻՆ.— Շատ լաւ, պարոն Մարգար։ (Կը մեկնի)։

Մարգար սիկարէթ մը կը վառէ եւ իր թուղթերով կը սկսի զբաղիլ։ Պահ մը ետք ներս կը մտնէ բանաստեղծ Անտունի։

4.

ԱՆՏՈՒՆԻ (անշշուկ մօտենալով եւ ծայրայեղ խղճամտութեամբ).— Բարեւ ձեզ, պարոն Մարգար։

ՄԱՐԳԱՐ (անակնկալի եկած).— Բարեւ, ո՞վ էք, ի՞նչ կ'ուզէք։

ԱՆՏՈՒՆԻ.— Թոյլ տուէք նախ ինքզինքս ներկայացնեմ. ինծի Անտունի կ'ըսեն։

ՄԱՐԳԱՐ.— Ի՞նչ, Հայկունի՞ կ'ըսեն։

ԱՆՏՈՒՆԻ.— Ո՛չ, Անտունի, գրական ծածկանունս է։

ՄԱՐԳԱՐ.— Դո՞ւն ալ գրող ես, Հայկունիին տեսակէն։

ԱՆՏՈՒՆԻ.— Այո՛, բայց քիչ մը տարբեր. ես քերթուած կը գրեմ։

ՄԱՐԳԱՐ.— Լա՛ւ, ի՞նչ կ'ուզես, Հայկունիի մասին բարեխօսելո՞ւ եկած ես։

ԱՆՏՈՒՆԻ.— Ո՛չ, ի՞նչ հարկ անոր մասին բարեխօսելու, ան բախտաւորութեամբ չնորհիւ ձեր առատաձեռն նուիրատուութեան։

ՄԱՐԳԱՐ.— Ո՞ր նուէրին մասին կը խօսիք։

ԱՆՏՈՒՆԻ.— Գիտեմ, չուզեցիք, որ լսուի. ձեր համեստութիւնը թոյլ չտուաւ հրապարակելու, բայց ես տեղեկացայ... Իսկապէս, պարոն Մարգար...

ՄԱՐԳԱՐ (ընդմիջելով).— Նոր բա՞ն մը կայ Հայկունիին հետ կապուած։

digitised by A.R.A.R.@

ԱՆՏՈՒՆԻ.— Իսկապէս, պարոն Մարգար, շատ քիչ են հիմա ձեր սիրոն ու բարձր ըմբռնումը ունեցող անհատներ, որոնք մեծածաւալ դիրքի մը մեկենասը դառնան եւ չուզեն, որ տող մը յիշատակութիւն ըլլայ այդ մասին։ Հայկունին բախտաւոր աստղի տակ ծնած է։

ՄԱՐԳԱՐ.— Կարճ կապէ, ես զբաղած եմ։

ԱՆՏՈՒՆԻ.— Ներողամիտ կ'ըլլաք, եթէ ձեր համեստութիւնը կը վիրաւորեմ։

ՄԱՐԳԱՐ.— Ըսելիքդ ըսէ, վերջացուր։

ԱՆՏՈՒՆԻ.— Թերեւս կարդացած էք քերթուածները։

ՄԱՐԳԱՐ.— Ո՛չ, ես քերթուած չեմ կարդար։

ԱՆՏՈՒՆԻ.— Ձեր ուշադրութենէն վրիպած են երեւի, որովհետեւ դժուարահաճ արտադրող մրն եմ եւ ամէն թերթի չեմ տար։ Կրնաք վստահ ըլլալ սակայն, որ Հայկունիի գրածներէն շատ աւելի արժէքաւոր են։

ՄԱՐԳԱՐ.— Տղա՛ս, գործ ունիմ, ո՞ւր կ'ուզես հասնիլ։

ԱՆՏՈՒՆԻ.— Երկար ատենէ միակ փափաքս եղած է քերթուածները հաւաքել եւ հատորով մը ներկայանալ գրական հրապարակի վրայ։ Երկար մտածեցի, տատամսեցայ, ի վերջոյ համարձակութիւն առի ձեր օժանդակութեան դիմելու, վստահ, որ պիտի չմերժէք։

ՄԱՐԳԱՐ (հեգնական).— Ուրկէ՞ կու գայ այս վստահութիւնը։

ԱՆՏՈՒՆԻ.— Մասամբ Հայկունիի օրինակէն, մասամբ...

ՄԱՐԳԱՐ.— Հայկունիինը բան մըն էր եղաւ, այդ էնը փակուած է։

ԱՆՏՈՒՆԻ.— Իմ հրատարակելիքս հատորս շատ աւելի համեստ է, հազիւ հարիւր էջ. մեծ ծախք մը չի պահանջեր, տանկ՝ հինգ–վեց հազար ոսկի...

ՄԱՐԳԱՐ.— Դուք կը կարծէք, թէ մենք դրամը փողոցէ՞ն կը հաւաքենք։

ԱՆՏՈՒՆԻ.— Եթէ թոյլ տաք՝ որոշած եմ գիրքս ձեզի նուիրել, առաջին էջին վրայ մասնաւոր ձօնով մը։

ՄԱՐԳԱՐ.— Ինկանք փորձանքը. հիմակ ալ անուններս մեկենաս պիտի հանեն... Խայտառակութիւն. հասնողը վրաս պիտի վազէ։

ԱՆՏՈՒՆԻ.— Եթէ ձօն չէք ուզեր, ես ալ դաղտնի կը պահեմ։

ՄԱՐԳԱՐ (գայրացած).— Ո՛չ ձօն կ'ուզեմ, ո՛չ գաղտնիք։ Հանդի՛ստ ձգեցէք զիս, ես գործ ունիմ, կը հասկնա՞ք, ես պարապ մարդ չեմ, գործ ունիմ, գո՛րծ... (Կը զանգահարէ եւ օրիորդ Լուսին ներս կու գայ)։ Լուսին, պարոնը դուրս առաջնորդէ։

ԼՈՒՍԻՆ.— Ո՞ւր առաջնորդեմ։

ՄԱՐԳԱՐ.— Ուր կ'ուզես՝ հո՛ն, միայն աչքէս հեռու։

ԱՆՏՈՒՆԻ.— Նման վիրաւորում մը չէի սպասեր ձեր կողմէ. ասիկա դաս մը եղաւ ինծի։ Մնաք բարով։ (Կը մեկնի)։

ՄԱՐԳԱՐ (ետեւէն).— Գոնէ օգտուիլ դիտնաք այս դասերէն, աներեսնե՛ր... (Օրիորդ Լուսինին դառնալով)՝ Ինչո՞ւ ներս ձգեցիր այս անպէտք ապրածը։

ԼՈՒՍԻՆ.— Ես լուր չունիմ, վայրկեան մը դուրս էի ելած։ Ի՞նչ էր ուզածը։

ՄԱՐԳԱՐ (ցոյցին).— Ձեմ դիտեր, բանաստեղծ է եղեր։

ԼՈՒՍԻՆ (հիացական).— Բանաստե՛ղծ... ինչո՞ւ առաջուընէ չըսիր։

ՄԱՐԳԱՐ.— Ի՞նչ պիտի ընէիր որ...

ԼՈՒՍԻՆ.— Լաւ մը կը դիտէի. ուշադրութեամբ չնայեցայ երեսին։

ՄԱՐԳԱՐ (խիստ).— Աւելի լաւ կ'ըլլայ, որ դորձիդ ուշադիր ըլլաս։

Լուսին կը մեկնի դէպի նախասենեակ։ Մարգար դարձեալ ձեռք կ'առնէ իր հաշուեցոյցերը եւ ճոր սիկարէթ մը կը վառէ։ Լուսին կը վերադառնայ։

digitised by A.R.A.R.@

ԼՈՒՍԻՆ — Դուրսը մէկը կայ, ձեզ տեսնել կ'ուզէ։
ՄԱՐԳԱՐ — Ո՞վ է նորէն։
ԼՈՒՍԻՆ — Ձեմ ճանչնար, կ'ըսէ՝ կարեւոր է։
ՄԱՐԳԱՐ — Այս մէ՞կն ալ բանաստեղծ է։
ԼՈՒՍԻՆ — Ի՞նչ գիտնամ. կ'ըսէ՝ լուր ունիք, դուք կանչեր էք։
ՄԱՐԳԱՐ — Ե՞ս կանչեր եմ... Թող դայ նայինք։

Լուսին ներս կ'առաջնորդէ Հայկունին եւ ինք կը հեռանայ։

Ե.

ՀԱՅԿՈՒՆԻ — Բարեւ ձեզ, պարոն Մարգար։
ՄԱՐԳԱՐ (չոր) — Բարեւ, վերջապէս բարեհաճեցար երեւնալ։
ՀԱՅԿՈՒՆԻ — Դժուար էր ինծի համար ձեր մօտ գալ, երբ հնարաւորութիւն չունէի խոստումս յարգելու։
ՄԱՐԳԱՐ — Ըսել է՝ խոստումդ կը յիշես երբեմն. ատ ալ մեծ շնորհք է։
ՀԱՅԿՈՒՆԻ — Ամէն ժամ միտքս է, որ ձեզի պարտական կը մնամ։
ՄԱՐԳԱՐ — Քանի՞ ամսուան պայմանաժամով ստացար դրամը։
ՀԱՅԿՈՒՆԻ — Վեց ամսուան։
ՄԱՐԳԱՐ — Որքա՞ն ատեն անցած է վրայէն։
ՀԱՅԿՈՒՆԻ — Մօտ տարի մը։
ՄԱՐԳԱՐ — Է՛, ի՞նչ պիտի ըլլայ տոկոս վերջը։
ՀԱՅԿՈՒՆԻ — Պիտի վճարեմ, պարոն Մարգար, կամքէ անկախ պատճառներով ուշացուցի, ներողամիտ կ'ըլլաք։
ՄԱՐԳԱՐ — Պիտի վճարեմը անորոշ խօսք է. ե՞րբ, ո՞ր ամսուն, ո՞ր թուականին. պէտք է յստակ գիտնամ ես։
ՀԱՅԿՈՒՆԻ — Ձեմ կրնար ճշդել. շատ կը ցաւիմ. իմ ցանկութենէս կախում չունի միայն։
ՄԱՐԳԱՐ — Հապա որմէ՞ կախում ունի։
ՀԱՅԿՈՒՆԻ — Ակնկալութիւններս չիրականացան։ Կը յուսայի ժամանակին դիրքերը ծախել եւ ձեր դրամը վճարել. չեղաւ։
ՄԱՐԳԱՐ — Է՛, ի՞նչ պիտի ընենք ուրեմն. դի՞ծ քաշենք դրամին վրայէն։
ՀԱՅԿՈՒՆԻ — Ինչո՞ւ դիծ պիտի քաշենք. պարտքս է, պիտի վճարեմ։
ՄԱՐԳԱՐ — Նորէն կ'ըսէ պիտի վճարեմ եւ պարապ ձեռքով կը ներկայանայ. ճիշդ մը, աշխատանք մը ըրած ունի՞ս՝ դրամը մէջտեղ բերելու համար։
ՀԱՅԿՈՒՆԻ — Ի հարկէ, բազմաթիւ նամակներ գրած եմ զանազան կողմեր. կը սպասեմ, որ գրքերուս փոխարժէքը ստանամ։
ՄԱՐԳԱՐ — Եթէ չստանաս՝ ուրիշ ի՞նչ կարանթի ունիս ինծի տալիք։
ՀԱՅԿՈՒՆԻ — Քովս մնացած 550 դիրքերը։
ՄԱՐԳԱՐ — Գիրք ու գիրք. ես պիւռոս գրախանութի՞ վերածեմ. որո՞ւն ծախեմ ես այդ ապրանքը... Մեռած դրամագլուխ։
ՀԱՅԿՈՒՆԻ — Ես ձեր դրամը չկերայ, գրքիս հրատարակութեան վրայ ծախսեցի։ Դուք գիտէք ատիկա։
ՄԱՐԳԱՐ — Չէի գիտեր տակայն, որ խաբեբայի մը հետ էր գործս։
ՀԱՅԿՈՒՆԻ (տոմի ցատկելով) — Պարոն Մարգար, կշտեցէք ձեր բերանէն ելած խօսքերը. ես խաբեբայ չեմ...

digitised by A.R.A.R.@

ՄԱՐԳԱՐ.— Հայտէ՛, խաբեբան քանի՞ տեսակ կ'ըլլայ. դուն ինձի խօսք տը-ւած ես վեց ամիսէն վերադարձնել դրամս. ո՞ւր է։

ՀԱՑԿՈՒՆԻ.— Զեմ ուրանար, պիտի վերադարձնեմ։

ՄԱՐԳԱՐ.— Սակայն մարդս յիմարի տեղ դնել կը նշանակէ։ Փողոցը նեռելիք դրամ ունենայի, փոխանակ քեզի կերցնելու, ազգային հաստատու-թիւն մը կը նուիրէի. գոնէ անունս կը յիշուէր։ Հիմա ինչի՞ ծառայեց։

ՀԱՑԿՈՒՆԻ.— Փողոց ընեսեցիք, գիրք մը լոյս տեսաւ։

ՄԱՐԳԱՐ (հեգնակաս).— *Եւ ի՞նչ գիրք... մէկ տարի է ծախսը չհանեց։ Հա-նելիք ալ չունի։ Արժէք ունենար՝ մինչեւ հիմա շատոնց ծախուած կ'ըլլար։ Ես որմէ՞ պիտի դանձեմ դրամս։*

ՀԱՑԿՈՒՆԻ.— Ինձմէ, պարոն Մարգար։

ՄԱՐԳԱՐ.— Այո՛, քեզմէ, չես կրնար փախուստ տալ։ Սատացագիր ունիմ քո-վրս. ստորագրութիւն դրած ես տակը։ Մարտինեանը վկայ է։ Օրէնք կայ, իրաւունք կայ այս երկրին մէջ...

ՀԱՑԿՈՒՆԻ.— Ինչո՞ւ կը յուզուիք, ես հակառակը չեմ պնդեր։

ՄԱՐԳԱՐ.— Հոս նայէ՛, ինչ ալ ըլլայ՝ պիտի վճարես այդ դրամը։

ՀԱՑԿՈՒՆԻ.— Ժամանակ տուէք ինծի, կը վճարեմ։

ՄԱՐԳԱՐ (հետզհետէ աւելի խիստ).— *Ես զիտեմ չատուղէն առնելու ձեւը. կը խայտառակեմ քեզ ամէնուն առջեւ. այս քաղաքին մէջ չնչել չեմ տար։*

ՀԱՑԿՈՒՆԻ (ոտքի եւ գայրացած).— *Դուք չատ առաջ գացիք. ըրէ՛ք, ինչ որ ձեր ձեռքէն կու գայ. ես այլեւս ըսելիք չունիմ։* (Կը մեկնի արագ քայ-լերով)։

ՄԱՐԳԱՐ (ետեւէն).— *Անպատկա՛ռ, ապերա՛խտ...*

Կը զանգահարէ. օրիորդ Լուսին կու գայ ներս։

6.

ՄԱՐԳԱՐ.— Հայերէն գրամեքենան հոս բեր։

ԼՈՒՍԻՆ.— Հո՞ս, ինչո՞ւ, ի՞նչ պիտի ընէք։

ՄԱՐԳԱՐ.— Քեզի կ'ըսեմ հոս բեր։

ԼՈՒՍԻՆ.— Շատ լաւ, պարոն։ (Կ'երթայ քերթիլու)։

Հեռախօսը կը հնչէ։

ՄԱՐԳԱՐ (ընկալուչը առնելով).— *Ալօ՛, ո՞վ է... Դո՞ւն ես... ի՞նչ եղաւ մաքսատան ապրանքը, հանեցի՞ր... Զեղա՞ւ, բայց ինչո՞ւ... Ինչո՞ւ ես, այդքան գրամ կը տրուի՞. կողոպուտ է ասիկա, պարզապէս կո-զոպուտ... Եղբայր, ո՛չ օրէնք կայ, ո՛չ իրաւունք այս երկրին մէջ. ի՞նչ օրերու հասանք... Տո՛ւր եւ լմնցուր։* (Բարկութեամբ կը գոցէ ընկալուչը)։

Լուսին մեքենան կը բանայ անկիւնի փոքր սեղանին վրայ եւ կը տեղաւորուի աջեւը, սպասողական դիրքի մէջ։ Մարգար, ձեռքերը խոնի կապած՝ կը սկսի շրջիլ եւ կը թելադրէ դանդաղօրէն։

ՄԱՐԳԱՐ.— Գրէ՛. «Պատասարժան Հոգաբարձութիւն Հայ Ազգային Երկսեռ

digitised by A.R.A.R.@

վարժարանի: Մեծայարգ պարոններ, ձեր խնամակալութեան տակ գտնուող վարժարանին մէջ կը պաշտօնավարէ ուսուցիչ մը, կոչեցեալն Հայկունի: Այս պարոնը գիրք հրատարակելու պատրաստակին տակ 15 հազար ռսկի փոխ առաւ ինձմէ եւ իւրացուց»:

ԼՈՒՍԻՆ (մեքենագրելով)....— *Եւ իւրացուց*: (Ցանկարծ կ'անդրադառնայ): *Գրագէտ Հայկունի՞ն*:

ՄԱՐԳԱՐ (ծաղրական).— *Այո՛, գրագէտ Հայկունին*: *Շարունակէ՛*. «Պայմանաժամէն վեց ամիս անցած է եւ հակառակ իմ կրկնակ դիմումներուս՝ կը մերժէ դրամս վերադարձնել»: *Նոր տող*. «Բարեհամբաւ հաստատութեանդ պատուին խնայելու համար կը դիմեմ ձեզի, փոխանակ ուղղակի դատարան յանձնելու անպարտաճանաչ ձեր ուսուցիչը, կոչեցեալն Հայկունի: Կը յուսամ, որ յանձնառու կ'ըլլամ վճարելու իմ պահանջած գումարս, ի հաշիւ պարոն Հայկունիի ամսաթոշակներուն, ազատելու համար զինքն սնանկացած պարտապանի ամօթալի վիճակէն»: *Նոր տող*. «Դատիարակ մը ինչպէ՞ս բարոյականի եւ պարտաճանաչութեան դասեր պիտի տայ իր աշակերտներուն, երբ ինքն զուրկ է բարոյական գիտակցութենէ: Ազգը ինչպէ՞ս իր մանկտիքը կրնայ վստահիլ մէկուն, որ պարտք ունի եւ չի վճարեր օրին...»:

ԼՈՒՍԻՆ.— *«Եւ չի վճարեր օրին»... քիչ մը խիստ չէ՞ն այս բառերը բանտարեղծի մը համար*:

ՄԱՐԳԱՐ.— *Գործիդ նայէ՛. ընդհակառակը, շատ մեղմ են այդպիսի ապերախտներու համար*: *Շարունակէ*. «Իրրեւ հոգաբարձական մարմին, կը յուսամ, որ կարեւորութեամբ ենթատի կ'առնէք այս չափազանց լուրջ պարագան եւ պարտն ու պատշաճը կը տնօրինէք ձեր անբարեխիղճ պաշտօնեային հանդէպ, կոչեցեալն Հայկունի: Հակառակ պարագային, ցաւ ի սիրտ ստիպուած պիտի ըլլամ դատական իշխանութեանց դիմելու, օրինական ճամբով իրաւունքս ձեռք բերելու համար... Մնամ յարգանօք, եւայլն...»:

Մեքենային ձայնը կը շարունակէ հնչել, մինչ վարագոյրը կ'իջնէ դանդաղօրէն:

(Շար. 3) *Մ. ԻՇԽԱՆ*

digitised by A.R.A.R.@

Ապրիլ ամսուան սկիզբը Հայաստանի մէջ մահացաւ հանրածանօթ թարգմանիչ եւ քանաչէր Արբուն Տայեան, 71 տարեկան հասակին։

Արբուն Տայեան ծնած է 6 Յունուար 1912ին, Թուրքիոյ Նիկոմիդիա նահանգի Գարտիզակ գիւղը։ Նախնական կրթութիւնը ստացած է Մաքրի գիւղի նախակրթարանին եւ Գատը գիւղի Մխիթարեան որբանոցին մէջ։ 1922ին մեկնած է Իտալիա եւ 1923-27 ժամանակաշրջանին ուսած վենետիկի Մուրատ-Բռափայէլեան վարժարանին մէջ։

1929ին Տայեան ներգաղթած է Հայաստան եւ իր մասնագիտութիւնը խարազուցած է Երեւանի պետական համալսարանին մէջ։

1947էն սկսեալ Արբուն Տայեան լծուած է թարգմանական աշխատանքի եւ հայացուցած բազմաթիւ մեծարժէք գործեր, ինչպէս Տանթէի «Աստուածային կատակերգութիւնը», Մոլիէռի, Գալսուորթի, Ա. Ֆրանսի եւ Փ. Մերիմէի շարք մը ստեղծագործութիւնները։

Սոորեւ էր ներկայացնենք Տայեանի գործը բնորոշող Ալիքսանդր Թոփչեանի վկայութիւնը եւ «Աստուածային կատակերգութեան» վերջին հատուածը, Արբուն Տայեանի թարգմանութեամբ։

ՄԵՐ ԴԱՍԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԻ ԿՈՂՔԻՆ...

Առաջին անգամ, դպրոցի աւարտական դասարանում, երբ կարդացի Տանթէի «Դժոխք»ի հայերէն թարգմանութիւնը, չգիտեմ ինչու ինձ թուաց, թէ թարգմանիչը՝ Արբուն Տայեանը, Մասհեանի կամ Նոյնիսկ նրանից առաջ ապրած մեր մեծ թարգմանիչների ժամանակակիցն է, որ այդպիսի տիտանական աշխատանք կատարող գժուար թէ մեզ հետ ապրող, մեր առօրեան կիսող մի ժամկանացու լինի։

Այս տպաւորութեան պատճառը որոշ չափով գուցէ գրաբարաբոյր տոհմիկ հայերէնը յիշեցնող լեզուն էր, գուցէ Կիւստաւ Դորէի՝ այլաբանութիւններով լի եւ ազդեցիկ նկարազարդումներն էին կամ գուցէ պատճառը հենց Տանթէի հանճարեղ գործն էր... Սակայն հետագայում, երբ բախտ ունեցայ ծանօթանալու եւ բազմիցս զրուցելու Արբուն Տայեանի՝ այդ բազմահմուտ էրուդիտ եւ աշխատասէր, միաժամանակ երեխայի պէս քաղուող ու համեստ մարդու հետ, իմ դպրոցական տարիների տպաւորութիւնը, ընկուելու փոխարէն, աւելի ուժեղացան։ Ես տեսայ, որ նա իր հետ կարծես բերում էր ինչ-որ բեկորներ մեր ոսկեդարից, որոնց վրայ ժամանակը դրել է սենեսանսեան իւնիվերսալիզմի կնիքը եւ մխիթարեանի իշխանական հայերէնն ու բարձր ոգին։ Եւ այս բոլորը չազախուած էր եւրոպական կուլտուրաների հմուտ իմացութեամբ։ Սակայն նա անցեալում կորած մարդ չէր. նա ապրում էր մեր օրերում, ունէր զարմանալի արդիական հոտառութիւն, հետեւում էր ընթացիկ գրականութեանը, բայց միաժամանակ մի քանի դարերի կենդանի վկան կարծես լինէր։ Ճակատագիրը զարմանալի կերպով նրան ամէն ինչ տուել էր Տանթէն հայերէն թարգմանելու համար։ Եւ միայն այս բարձրարուեստ թարգմանութիւնը բաւական է, որ նրա անունը մնայ մեր դասական թարգմանիչների անունների կողքին։

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹՈՓՉԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԵՐԳ ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ

●

«Ո՛վ դու կոյս մայր եւ դուստրը քո զաւակի,
Թանարի ու վեհ քան ամենայն արարած,
Սահմանանիշ յաւերժական խորհուրդի:

Դու մարդկային մեր բնութիւնը այնքան
Ազնուացրիր, որ ստեղծիչը նրա
Դարձաւ նրա ստեղծեալը սոսկական:

Քո արգանդում սէրը նորից բորբոքուեց,
Որի հուրով՝ խաղաղութեան մէջ յաւերժ՝
Դրախտային այս վարդն այսպէս բողբոջեց:

Աստ մեզ համար բացվաւ ջահ ես սիրոյ,
Իսկ աշխարհում, մահկանացու մարդկանց մէջ,
Դու անսպառ ու ջինջ աղբիւր ես յուսոյ:

Ո՛վ Տիրամայր, այնքան մեծ ես ու բարի,
Որ առանց քեզ շնորհ հայցել՝ կը լինէր
Ինչպէս թռչել ուզել առանց թեւերի:

Դու ոչ միայն քո բարութեամբ օգնում ես
Քեզ դիմողին, այլ շատ յաճախ ինքնակամ
Դու կանխում ես աղաչանքն ու հայցը նրա:

Դու գթութիւն, ողորմութիւն ես համակ,
Դու վեհանձն ես, եւ քո մէջ է խտացած
Էակների բարութիւնը բովանդակ:

Այս մարդը, որ տիեզերքի յատակից
Մինչեւ այստեղ տեսաւ վիճակը մէկ-մէկ
Հոգիների, որ հեռացել են կեանքից,

digitised by A.R.A.R.@

Պաղատում է քեզնից այնքան զօրութիւն,
Որ կարենայ բարձրանալ այն տեսութեան,
Որի մէջ է երանութիւնն աւարտուն:

Այդ տեսութեամբ ես չեմ այրուել դեռ այնպէս,
Ինչպէս հիմա նրա համար եմ այրուում.
Արդ աղօթքը վերընծայում եմ ես քեզ,

Որպէսզի նա քո օգնութեամբ ազատուի
Ամէն մուժից ու մշուշից երկրային
Եւ Գերագոյն Բարիքն իրեն յայտնուի:

Ո՛վ թագուհի, աղաչում եմ քեզ դարձեալ,
Որ անարատ պահես տենչերը նրա,
Տեսիլքներից յետոյ այնքան վերացեալ:

Հսկիր նրա մղումներին մարդկային.
Տես, ձեռնտուած աղօթքիս եմ միանում
Բեատրիչէն ու միւս սրբերն երկնային»:

Աղօթողին յառած աչքերն հիախանդ՝
Աստուածաբեալ Տիրամայրը ցոյց տուեց
Իր գոհութիւնն այդ աղօթքից չերմեռանդ:

Ապա ուղղուեց դէպի Լոյսը մշտավառ,
Ուր ոչ մի միտք չի թափանցի այնքան խոր,
Որքան նրա միտքը վճիտ ու պայծառ:

Ես, որ հասել էի բոլոր իղձերիս
Կատարածին, շատ բնական կը լինէր,
Որ զգայի իմ մէջ լրումն հրայրքիս:

Բեռնարդն այնժամ առաջարկեց ինձ ժպտով,
Որ նայէի վերու, սակայն ես արդէն
Նրա ասածն արել էի իմ կամքով:

Իմ հայեացքը դառնալով ջինջ ու յստակ,
Հետզհետէ թափանցեց վեհ Լոյսի մէջ,
Ուր է ինքնին ճշմարտութիւնը միակ:

Այստեղ տեսածս անկարող եմ պատկերել.
Չի մեր լեզուն, այդ տեսիլքին յանդիման,
Կարող է լոկ պապանձուել ու կարկամել:

digitised by A.R.A.R.@

Ինչպէս նա, ով քնում երազ է տեսնում
Եւ, զարթնելով, մտաբերում է միայն
Այն յուզումը, որ ապրեց իր երազում,

Այսպէս եւ ես. քանզի տեսիլքն իմ մտքի
Անհետացաւ, թէպէտեւ իմ սրտի մէջ
Դեռ տեւում է քաղցրութիւնը իր տեսքի.

Այսպէս ձիւնն է հալւում շողքից արեւի.
Այսպէս հողմից ցրւում էին Սիբիլեան
Պատգամները՝ գրուած վրան տերեւի:

Ո՛վ վերին Լոյս, անմատչելի մեր մտքին,
Քո պատկերից, որ երեւաց ինձ այնժամ,
Դէթ ցոյց տուր ինձ չնչին մասնիկ մի կրկին,

Եւ լեզուիս տուր այնպիսի ուժ գերակայ,
Որ կարենամ ես ասանդել քո հուրքից
Գոնէ մի կայծ սերունդներին ապագայ.

Թէ կարենամ մի բան յիշել տեսածից
Եւ որոշ բան այս տողերում հնչեցնել,
Մարդիկ մի բան կը հասկանան քո փառքից:

Թէ հայեացքս շեղուէր նրա տեսքից վառ,
Ապա նրա շողիւնների սուր ցայտքից
Ես շլացած կը մնայի անպատճառ.

Դրա համար յանդգնեցի այդ պահուն
Երկար տեղալ նրա տեսքին, մինչեւ որ
Զուլուեց հայեացքս իր էութեան հետ անհուն:

Ո՛վ յորդ շնորհ, որ ինձ դարձրիր ընդունակ
Սուզուելու խորքն ցաւերի Լոյսի, մինչեւ որ
Սպառուեցին իմ ուժերը բովանդակ:

Եւ ես տեսայ Նրա խորքում ընդգրկուած
Ու սիրայինն կապով զօդուած այն ինչ որ
Տիեզերքում երեւում է մասնատուած

Գոյեր, ձեւեր եւ կապն իրենց միութեան,
Բոլորն այնպէս առընչուած են իրար հետ,
Որ ասածս լոկ նշոյլն է իսկութեան:

digitised by A.R.A.R.@

Իրօք տեսայ այդ միութիւնն ընդհանուր,
Ըստ որում ես այս ասելով զգում եմ
Մի ցնծութիւն անպարագիր ու անլուր:

Մէկ բոպէում ես զարմացայ աւելի,
Քան Նեպտունը քան եւ հինգ դար առաջ,
Երբ բաց ծովում տեսաւ ոտաւերն Արգոյի:

Այսպէս միտքս՝ հիացումից կարկամած՝
Ուշի ուշով ու սեւեռուն նայում էր
Եւ տոգորում պաշտամունքով երկիւղած:

Այդ վառ Լոյսից հոգին դառնում է այնպէս,
Որ խզւում է ամէն ուրիշ բաներից
Եւ ձգտում է միայն նրան անձկակէզ:

Զի բարին, որ նպատակն է բոլորի,
Նրա մէջ է եւ այն ինչ որ թերի է
Նրանից դուրս, նրա մէջ է անթերի:

Այսուհետեւ լինելու է իմ լեզուն
Աւելի թոյլ իմ տեսածը պատմելու,
Քան թէ լեզուն երեխայի կաթնատուն:

Ոչ վասնզի այդ Լոյսի մէջ կենտուէտ
Դայիմ պէս-պէս, յարափոփոխ վիճակներ,
— Նա այնպէս է, ինչպէս եղել է յաւէտ —

Այլ զի միտքս, թափանցելով նրա մէջ,
Ի զօրու չէր միութիւնը տեսնելու
Նրա տարբեր ցոլացութեանց մէջ անշէջ:

Այն վեհ Լոյսի էութեան մէջ խոր ու ջինջ
Երեւացին երեք ծերեր իմ աչքին
Երեք գոյնի եւ միեւնոյն չափի ճիշդ:

Մէկը միւսի, ինչպէս Իրիսն Իրիսի,
Ցոլացումն էր, իսկ երրորդն էր հուրի պէս,
Եւ հաւասար արգասիքն էր երկուսի:

Օ՜, խօսքն ինչքա՜ն սակաւազօր է մտքից,
Իսկ իմ միտքը իմ տեսիլքի յանդիման
Այնքան թոյլ է, որ չի բաւի ասել «քիչ»:

digitised by A.R.A.R.@

Օ՜ ինքնաթռուխ ու ինքնագոյ ցաւերծ լոյս.
Դու ես աղբիւրն իմացութեան ամենայն,
Դու ես միայն ներշնչողը սէր ու յոյս:

Իսկ այն ծիրը, որ ցոլացումն էր քո վառ,
Ինչպէս լոյսից արտացոլված մի այլ լոյս,
Երբ դիտեցի ուշի ուշով ու երկար,

Նրա ներսում տեսայ պատկերը մարդու,
Ներկայացուած մասնայատուկ իր զոյնով.
Եւ յառեցի առ այն հայեացքն իմ հատու:

Ինչպէս ջանք է երկրաչափը գործ դնում
Շրջանակը չափելու եւ, ճգնելով,
Դրա հիմքը ամենուին չի գտնում,

Այսպէս եղայ այդ տեսիլքի առջեւ ես.
Ի զուր էի ճգնում գտնել, թէ ինչպէս
Մարդու պատկերն առընչուած էր ծիրին կոր.

Թերեւս հերիք չէին նման թռիչքի.
Բայց իմ մտքում մի լոյս ծագեց գերբնական
Եւ ինձ պարզեց խորհուրդը այդ տեսիլքի:

Այստեղ կասեց իմ զմայլանքն հոգեթով.
Բայց արդէն իմ սիրտն ու կամքը վարում էր,
Ամենայն ինչ ներդաշնակող կշռոյթով,

Սէրն՝ որ շարժում է արեւն ու այլ աստղեր:

Թարգմ. ՏԱՆԹԷ ԱԼԻԿԻԵՐԻ
ԱՐԲՈՒՆ ՏԱՑԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Ց· ՕՇԱԿԱՆ

ՍԱՀԱԿ ՊԱՐԳԵՒԵԱՆ

Ե՞րբ ու ինչպէ՞ս բացուեցաւ դուռը։

Օրիորդ Սոնա Գոհարեան

որ

արտում, կէս բարեւ, մտաւ ներս։ Զթօթուեց ձեռք։ Նայուածքին պիրկ չորութիւնը, ճակտին դծաւոր բռնուածքը աւելցան երկու մարդոց տագնապին։

Դրաւ աշխատանքի սեղանին նոթանեռու գլանիկը ու, կիսավարան, բոպէ մը ինքզինքը ամփոփելէ վերջ — բոլորովին ներքին այս շարժումը ինչո՞ւ զգալի եղաւ երկու այրերուն — յառաջացաւ դէպի պատուհան։ Անոր քայլին մէջ կը հնչէր իրմէն վեր բան մը, անպատմելի, որ մեծ որոշումներուն թրթիռն է կարծես, տարածուող՝ մեր մարմինին։

— Գարսն Մարան, ես ալ քեզ կը փնտռէի,— ըսեր էր անիկա, առանց նայելու երեսին։

— Այն ատեն բախտաւոր եմ, Սոնա։ Անհնարին պաղարի՛ւն, սա սրամտութեան մէջ, ա՛յնքան՝ որ Սահակ Գարգեւեանը տեսակ մը խոզտում զգաց սիրտին։ Նախա՞նձ, վա՞խ, կորուստի մօտալուտ ըզգայութի՞ւն։ Չէր գիտեր ո՛րն էր զինքը նեղողը։

— Պանդոկ հանդիպեցա՞ք։

Գա՛րզ, բոլորովին բնական, հարցուց Մարանին։

Երկու շէյտերուն սա տարբերութիւնը զգա՞ց աղջիկը, որ, կրկին, թեթեւ վարանքէ մը յետոյ, բան մը կուլ տալու նման, պրկեց դէմքը։ Անոր այտերուն ձուածիրէն բուսան զոյգ փոսիկներ, պատկերին տալով խենթեցնող անուշութիւն։ Կան բոլէնիր, երբ միսին մէջ փորուած այդ կաթիլը ամբողջ կիրը կ'ըլլայ։

— Թէեւ կ'ուզէի առանձին ըլլալ, — միշտ, առանց աչք դարձընելու անոր երեսին։

digitised by A.R.A.R.@

Մինաս Մարանին ճակատէն անցաւ փոքր ստուեր մը, բայց բաւով՝ որպէսզի կծկուէին գիծերը անոր դէմքին։ Անիկա, դառնութեան փայլակի մը մէջ, տեսեր էր իր տունի աղջիկը, Մելինէն, որ երէկ գիշեր կատուի հաշտութեամբ խօսք էր տուեր չաւրուելու «վարժուհիին» հետ, երբ կ'ելլէր ծոցէն, լուսդէմ, մօրը երթալու։ Խոստումը կիներուն մօտ անիմաստ բառ է։ Անիկա Սոնան ենթադրեց դասէն դարձող, այսինքն՝ իր վիլլայէն, գիտնալով հանդերձ, որ դասի չէր օրը։ Անիկա ենթադրեց կատուին — Մելինէին փաղաքշական վերագիրը — խոստմնագրուած բերանը բացուած, ըսելու համար Սոնային երեսին ի՛նչ որ կիներուն բնազդը կը զատէ, կ'առնէ այնքան անվրէպ արագութեամբ, սեռային «բովքէն»։ Անիկա փուշ-փուշ ապրեցաւ, իր արագութեան համեմատական հոծութեամբը, չարաթ առաջուան կատաղի տեսարանը, մէ՛կը իր փորձանաւտ ասպարէզին ամէնէն խորունկներէն, որուն մէջ տասնըհօթը տարեկան այդ էգը ցոյց էր տուեր ահաւոր անառնութիւն, հաստնութիւն, ուժգնութիւն, իր մարմնին ամէն մէկ ծերպերէն ու հեծքերէն լսելի ընելով կիներուն յաւիտենական զօրութիւնը, որով զգեստաւոր՝ տնոնք կը կոխեն այրերու վիզին ու կը պարտադրեն իրենք զիրենք։ Նախանձի այդ «ելո՛յթը», որով կ'արգիլուէր «հօրեղբայրին» (Մինաս Մարանը այս կարգի վերադիրներ գտնելու տաղանդին կը միացնէր սատիք բան մը ալ) ուզ կոխել առ անօթի աղջկան տունը։ Այսօ՞ր։ Տեղի ունեցա՞ծ էր անպատեհ բախումը։ Որքա՞ն՝ իրարու վրայ թափուածը, երկու աղջիկներէն։ Որքա՞ն՝ չըսուածը։ Արտակ Գասպարեա՞նը, որ առտուն կը պակսէր գործարանէն։ Իշխան Գօղոս Արծրունի՞ն, որ հասցէ չէր ձգած։

Մենք կը մտածենք արտակարգ արագութեամբ, երբ իյնանք զառիթափին։ Որոճալը պարապ բառ մը չէ։ Կարծես կը պարտադրէր ուղեղին երկանաքարերը։ Մինաս Մարանը քրտնեցաւ գրեթէ։ Աղջիկները անխելք են միշտ։

— Կ'ուզէի առանձին ըլլալ, բայց հոգ չէ,— կրկնեց Սոնան, նստիլ չկրնալով, թէեւ յոգնութիւնը կը թափէր իր մարմինէն անծածկելի կերպով։ Ցուզումը մանր էր անոր ձայնին իսկ համար։

— Անշուշտ, անշուշտ։

Միջամտողն էր Սահակ Պարզեւեան, պաղ, ամբարիշտ, քրտնած թթութեամբ մը, խուլօրէն պատրաստուելով անախորժ բաներու, բայց իր շեշտը խոտոր կը համեմատէր իր թթուած բեկումին, «տարբերուածութիւն»։ Մենք, երբ կամքի հիւանդներ ենք, իրողութիւններուն չափ, գուցէ աւելի, կը տառապինք անոնց լուրէն։ Այս է պատճառը, որ ճակատ ճակատի դուպար մը աւելի «փլէ» ջախտաւորը, քան սուերամարտը՝ ստուերէ ստուեր։ Այս է պատճառը, որ դէպքերու գրոհէն աւելի անոնց մտապատկերէն տարուին այդ հիւանդները, քառապատկելու հակազդեցութեան իրենց ճիգերը։ Հերոսները ուրիշ բան չեն շատ յաճախ, եթէ ոչ՝ իրենք իրենցմէ կրակուած «վարողութեան ամբարձումներ»։ Սովոր պայմաններու մէջ խմորի պէս կերպընկալ նկարագիրներ, ինքնասարսափի պրկումին մէջ կը պոզպատնան անոնք ու մեզ կ'ապշեցնեն։ Իր օրերուն խիստ մեծ մասին մէջ «հոսանքին անձնատուր» Սահակ Պարզեւեանը ընդունակ էր (եղած էր քանի՛-քանի՛ անգամներ) ամէնէն յախուռն, դիւցազնատիպ պոռթկումներու։ Իր չնականութեան եւ ահաւոր համբաւին դերն ալ

digitised by A.R.A.R.@

անշուշտ ունի կշիռ այս «ամբարձումներուն» մէջ։ Այս կարգի իր աբարքները անիկա կ'ուրանար, իր բնական հունին դառնալէ հոգը։ Իմնալով–էլլէլով, այսօր՝ կիներուն, վաղը՝ աղջիկներուն, միւս օրը յէղափոխականներուն կրկէսէն, դրեր էր կիրքերն ու բռնկումները հաստութեան փլանի մը։ Ու փորձուած, պիտակուած տրիբունի մը նման, որ ինքզինքը գիտէ սուղ ծախել, վեր մնալով պզտիկ յուզումներէն, անիկա կը լքէր ինքզինքը «էչպքերուն բռնութեան» ու կը ծառանա՞ր՝ վսեմ խենթութիւններու փառքը չակարկելով գլխուն (սկ գնով։ Անիկա կեանքը սկսած էր հոյակապ ապտակով մը։ Գիտէք ատիկա։ Ապտակած էր փաշա մը, երբ բորոտ, անօթի՝ ինկած էր Եգիպտոս։ Կերած էր գնդակը դաղափարի իր հակառակորդներուն, բայց անոնց անունը՝ ոստիկաններուն։

— Անշուշտ, Սոնա՛, անշուշտ։

Բարձր, խենթ ու տոնքիշոտ։

Աղջիկը գլուխը, բայց ոչ աչքերը դարձնելով Մարանին, ձայնով մը, որ լեղի էր ու չոր.

— Նէրեցէք, որ չկարենամ շարունակել դասը։

Մեր չեշտին ետին չատ բան կը պահենք։

— Որո՞ւ,— ընդմիջեց կրկին, «աշխարհէն անմասն» դրագէտը։

Մինաս Մարանը «հոն էր» սակայն։

Զպատասխանեց։ Անոր նայուածքը դուրսէն շրջուեցաւ դէպի ներս։ Բնազդական շարժո՛ւմ՝ որով օգնութիւն կը փնտռենք մեր պահեստներէն։ Ուզա՞ծը։

Ամբոխավարար մէկը նրեն-ամեայ իր փորձառութեանց դեղադիրներէն, որոնցմով դիմաւորած էր ան այս կարգի «պատահմունքները»՝ չէզոքացնելով արտաքին ժահրը ու անյայտ ընելով միքրոպները, պատիւին կամ գոյթակդութեան ճամբով եկած յարձակումի։ Բուզումնառատ իր ասպարէզին մէջ նոր չէր, որ կ'ունենար նման «քաւորդներ», ինչպէս կ'ախորժէր, օտար բառի մը հայացումով, որակել դժուար այդ վայրկեանները։

Ուզա՞ծը։

— Մէկը այն ճարտար խաղերէն, որոնք հրաշքը կ'իրագործեն հեռուէն գալու, զոհը փրկելու պատրուակով եւ անակնկալ շրջումով, շնորհի հարուածի մը նման, զոհին իսկ հաճութեան կ'արժանանան։ Այս դիծէ դեղահատներ անիկա ունէր մշտապատրաստ։ Գէտք չէ մոռնալ, որ անոր դրամը, դայն վաստկելու, մա՛նաւանդ վատնելու արձակութիւնը, որ մերիններուն նկարագիրն է յանախ, երբ օտարութեան մէջ կ'ապրին ու կը տիրակալեն, միջավայրը՝ բացառիկ՝ ուր իրենց լրումին կ'առաջնորդուին լաւ ու յոռի նախադիծերով ներկուած արարածները, անցնելով արտակարդ կատարելութեան տոնմատակի մը մէջ գլուխ կանգնելու աստիճան փառքին ու դրամին խայտաբղէտ կարաւաններուն, դայն չփումի էին դրած մարդերու չատ լայն խաւի մը մէջ, բան մը, որ ամէնէն կատարեալ հարստութիւնն է այս աշխարհին, ծանօթութեան, չփումին հարստութիւնը։ Գեղի թէ քաղաքիկի իր դպրոցին մէջ չէնք–շնորհք հայերէն մը չտրված — որովհետեւ պատեհութիւն չտուած — այդ «նախատահմանեալ» արիկան, Եդիպտոս իյնալէ վերջ, փոխանակ Գարդեւեանի նման բան ծախելու, տուեր էր ինքզինքը «լրացնելուն» իր ոգիութիւնը։ Գանի մը տարի

digitised by A.R.A.R.@

ու ահա դիւրաւ, չընելու համար ժողովուրդին բառերով՝ ցուրի պէս կը խօսէր եօթը լեզու, որոնցմէ մէկ քանին բացառիկ վայելչութեամբ։ Անիկա մարդը եղաւ, որ մոռնալ չդիտցաւ։ Ու չմոռցաւ բառերուն հետ շեշտը, ինչպէս ցեղային խաղը, որով լեզուն կը դառնայ բնական գեղում կարդ մը օտարականներու բերանէն։ Արաբերէնը, անոր կոկորդին «չափու զգեստի մը պէս» յարմար» կը բանար իր առջեւ դուռները ընկէր, մուք խաւերու, եօթն անգամ կալուածատէր, հազարաւոր ֆէտտանիներու արդիւնքը ծախսելու սպարդէզ փնտռող հանոյասէրներու։ Վայելչի ու գեղեցիկ անոր յաճախորդները, բարմադգի ու բարմադոյն, շոքոլա մոյքով հապէշ իշխանազուններէն սկսեալ մինչեւ գեղնամորթ մանտարինները ու մինչեւ կաթնեբեռ շուէտուհիները հեռաւոր Շուէտին հիացումով կ'ընդունէին անոր տաղանգը՝ «սեռային փորձանքները» շեղեցնելու անոնց մրցանքներէն։ Քանի՞-քանի՞ անգամ խմբակը կամ ինք առանձին, քիթէն բռնուած իրենց լրբութիւնը «խաբուած»ի, «զոհ»ի շղարշով պատապարած աղջիկներո՞ւ ոգառնալիքին մէջ, զարմանալի ճկունութեամբ մը կարգադրեր էր թիւրիմացութիւնը, վայրկեան մը ընդհատուած խրախճանքը տանելով իր կատարին։ Տաղանդ էր ասիկա ու մարդոց յաջողութիւնները՝ «հարթուած» թիւրիմացութիւններ։ Հո՛ն՝ ուր արեւելցիի չնորհը քիչ էր եկեր, անիկա հալեցուցեր էր դժուարութիւնը «դեղին հակայ նիւթով», մեծադոյն ու անմահ դեղը ով գիտէ ո՛ր Լոքմանին, ամենազօ՛րը՝ ցարդ ծանօթ տարրերուն։

Հերոս, բոյց կծկուած, լուրջ ու վճռական՝ անիկա գնաց դէմ բռնութեանը գալիքին։

— Ինդրեմ, Օրիորդ։

Հարուստ, գրեթէ դէդ, գրեթէ նուաճող՝ վասնզի իրաւատէ՞ր այդ չեշտը խենթեցուց աղջիկը։

— Կ'աղաչեմ, որ բան չխնդրէք ինձմէ, ոչի՛նչ, ոչի՛նչ, ոչի՛նչ, կը հասկնա՞ք։ Ոչ իսկ բարկութիւն։

— Ո՛չ մէկը իրաւունք ունի անբարեկիրթ ըլլալու, ամէնէն քիչը՝ Օրիորդ Սոնա Գոհարեանը։ «Հոգեզաւակը» մեր ազգին փառքերէն մէկուն։

Խօսած էր բնական, այս դիւրութիւնը քաղելով հազարաւոր իր փորձառութեանց ընդերքէն։ Չէր կարելի զանազանել շեշտին նկարագիրը, որով թռած էր «հոգեզաւակը» բերնէն։ Զարութի՞ւն, հեգնութի՞ւն, աւելի ահաւո՞ր՝ ակնարկութի՛ւն մը։ Անիկա զսպեց ինքզինքը։ Բայց չկրցաւ վայելել արդիւնքը իր աղուոր բառերուն, վասնզի Օրիորդին ձայնը, չես գիտեր ուրկէ խթանուած, մէկ հարուածով գտաւ անսպասելի վճռականութիւն, լիութիւն, բարձրութիւն։ Այդ շեշտով անիկա արդէն տէրն էր կացութեան։

— Ոչ ոք իրաւունք ունի սուտը, նենգութիւնը, լրբութիւնը, անպարկեշտութիւնը այսքան հպարտութեամբ, շնականութեամբ, տաղանդով հագնելու, որքան դուք, եւ անոնցմով ոգառնալու ուրիշներու, որոնք իրենց բարձրութեան մէջ թէեւ կորակործան (բացատրութիւնը նախասիրած բառերէն էր Սահակ Գարգեւեանին), դեռ կը հաւատան դրամէն ու վայելչէն դուրս բաներու։

— Թատրո՛ն,— մոլտաց Մինաս Մարանը,— առանց իմնելու իր դէդ ու չոր կեցուածքէն։ Մեր ձայնը հասակ ունի յաճախ ու շուք։

— Սքանչելի՛,— բացագանչեց Գարգեւեանը, որ իր չունչը,

digitised by A.R.A.R.@

ոնը, նախաղասութեանց դնացքն ու դարձուածքը կը հաստատէր Օ-ղիորդին բռնկած բերանէն։

— Այո՛, վասնզի ա՛լ անկարող եմ համբերելու։

Գրեթէ խոնարհեցան անոր աչքերը։

Իր զգայնութեան յորդ ու պիրկ այս զեղումը — ամէն զեղում աւելորդ կորուստ մըն է — կամքի մեծ մարզանքով մը հեռզհեռէ յաջողած էր մեղմել ու խնայել արցունքին տկարութիւնը, որ կ'ինկը կ'ընէ ծիծաղելի ու, ուելի յետոյ՝ անտանելի։ Մօրը վրայ հաստատած անոր աւերը, անիկա, հակառակ ոա պահուն այցուած ըլլալուն խոր ու կատաղի զգացումներէ, դարմանեց իր փղձկումը։ Բայց իր անձին վրայ գործադրուած այս բռնութիւնը թեթեւ մը հրթիռի հանեց անոր երեսներուն «բռնուած» կաղապարը, որ թացուեցաւ, բացուեցա՛ւ, դալկութեան հետ չփոթուելու ասոնցմէ։ Այն ատեն անոր կիսակապուտ աչքերը նմանեցան ձիւնի մէջ ինկող բռներու, այնքան չնորհալի ու զգլխիչ, որ այրերը վար առին իրենց հայեացքը։ Կիները ունին այս պահերէն։

Լռութիւն։ Բայց մթնոլորտը կ'եռար։

— Ի՞նչ կայ սակայն,— անկարող եղաւ չընդմիջելու հեռզհեռէ խանդավառուող գրագէտը, որ, քսան տարի կայ, Կաղանդներէն յետոյ, անպայման ձեռք կ'առնէր իր հնուց, աշխարհին ծանօթ մէկ թատերախաղը։ Գրած էր առաջին տարին երկու տեսարան, երրորդ արարէն, ինչպէս իր սովորութիւնն էր սկսիլ իր գործերը 2/3էն։ Այդ տեսիլներուն մէջ պոլսական թիփեր, չուկայիկ իրենց թանձրութեան եւ աւարտած նենգամտութեան մէջ, անոր հզօր տաղանդէն չը-քաշած, այսինքն՝ ծաղրանկարի վերածուած կը խօսէին գեղաբարբառ։ Գրողը տեղեակ էր ատոնց լեզուին ու զգացումներուն կեղծ ըմբռնումներէն, բայց գիտէր նոյն ատեն, թէ թատրոնը — արդի ըմբռնումով խաղը — չէր կրնար «եղծուիլ» ու կատակերգական անպատասխանատու զանցումներու մէջ հոպտանալ։ Բայց անոր արուած չէր չնորհը իր մարդերը ուրիշ կերպ քալեցնելու։ Այնպէս որ՝ երրորդ տեսիլը, տարիներէ ի վեր, կը մնար հոն՝ ուր էր։ Ցուսահա՞տ՝ այսքան գեղեցիկ ողբերգական նիւթ մը գլուխ հանելէ՞, որուն յղացումը, գլխաւոր իրադարձութիւնները ու կարեւոր տեսարանները պատմեր էր ամէնուն՝ գրած ըլլալու չափ լեցուն խանդավառութեամբ։ — Ո՛չ անշուշտ։ Ֆատատը երեսուներեք տարի արժեր էր պերման բանաստեղծին։ Ի՞նչ՝ հայերուն կէսթէն, պիտի յաղթահարէր դժուարահաճ իր «մուսան», որ գրգռիչ, ինքնամատո՛յց, մարդոց թերութիւնները երեսնուն պոռալու անհամբեր, մունջ ու թոթով կը դառնար, երբ կարգը կ'ունենար զոհերը, զրկուածները, խոնարհները խօսեցնելու, կամ կը սաւառնէ՞ր։ Անիկա իր տաղանդին սա դժնդակ անհաւատարմութիւնը պատժել էր փորձեր, զայն ստիպելով, բռնի, գրեթէ ծեծի տակ, գրելու պատմուածքներու շարք մը, վերցուած 96ի աղէտէն, բացառաբար կին հերոսներով։ Որոնց մէջ կը պատմէր իր շքեղ, ռոմանթիք ու կեղծ ոճովը — ուրիշ ամէն տեղ, մա՛նաւանդ պարտաւ ու յուշագրութեան մէջ անստգիտ, կենդանի այդ ոճը Գարպեւեանի ֆեթիշն էր, գիտէք ատիկա — մոռցածին էակներու գլխուն շատ իրական, քամնելի պատահարներ, որոնք նոյն այդ ոճին հրաշքովը կ'այլասերէին ու կ'ըլլային անտանելի։ «Հայ օրիորդը» իր գրքոյկը փաստ մըն է այս վրիպանքին։ Մշտապէս խարխուած երրորդ

digitised by A.R.A.R.@

արարի երրորդ տեսիլին մէջ, անիկա պիտի խօսեցնէր այդ տո-
ղերով, աղջիկ մը, ճիւղ ու ճիւղ գիծէն սա դէմի աղջկան, խաբուած,
անիրաւուած օրիորդ մը, որ մեծահարուստ հօրմէ մը կանուխէն որբ,
մեծցեր էր սանկ ու նանկ հօրեղբօր մը չուքին — պաշտօնապէս խը-
նամակալ — ու, անոր տղուն ճիրաններուն մէջ իր պատիւը բզկտել
տալէ ետք, ստիպուեր էր զայն պաշտպանելու հօրն ալ ճիրաններէն
ու, յուսահատ կատաղութեան բոպէի մը, փետելով, քովի սենեակին
մէջ գինքը կաչկանդող բաղուկները, կը նետուէր բեմ, ու կը մատ-
նէր ինքզինքը, հանդիսականներու սարսափին առջեւ։ Գրագէտը,
նրբաթափանց իր հոտառութեամբը կը զգար չքեղ սարսուռը այս տե-
սարանին, բայց իր բառերը, հակառակ իր տհաճութեան ու ճիգին,
կ'ըլլային փարթամ դիմառնութիւն, հռետորական զեղում, իբենց չոր
ու ոսին աղմուկովը վիրաւորելով պահին խոր յուզումը։ Սա վայր-
կեանին, Սոնան մարմնացումն էր անոր երեւակայութեան։ Այս յայտ-
նութիւնը խոր լքումով մը դառնացուց ինքնաթափանց գրագէտը, որ
չէր վարանած իր սիրտին անհունագէս սիրելի այս պատկերն իսկ
շահագործել, ի հաշիւ թուղթին, ի՞նչ՝ որ ուրիշները ծաղրելու ա-
տեն կ'ուրանար անոնց մէջ զգայնութիւնը ու իր մէկ քանի յաջողած
ընկերները «թուղթէ սիրոտ», «թուղթին համար ապրող», «փրակա-
նութիւնը թղթագործող ճարտարապետ-փերեզակներ» կը յորջորջէր։
Ուրիշ բա՞ն, ինք ալ, հիմա, երբ անոր առջեւ երիտասարդ աղջիկը
յուզումի, զայրոյթի, խզտուելու փոփոխ ստիճաններէն կ'անցնէր
ու կու դար։ Անոնք, որ գրելը կամքի ու միայն կամքի երեւոյթ կ'ը-
դունին, իրաւունք ունին որոշ չափով։ Գրական տիպարներուն (վէպի
կամ խաղի հերոսներ) մեծ մասը անշուշտ կու գայ իրականութեան
կարաւաններէն, բայց միւսնո՞ր։ Այսինքն՝ որոնք տրուած իրակա-
նութենէն կ'աւելնան։ Սահակ Պարգեւեան, դժբախտաբար իր զգա-
յութիւնները — այսինքն՝ զգայարանքներով որսացած տարրերը, ոչ՝
հանգիստօրէն կառուցած քմայքները — կը մոռնար մեծ արագու-
թեամբ, որպէսզի անոնք օգտագործելի մնային արուեստին համար։
Սոնիկա, գուցէ անոր համար, վասնզի իր գլխաւոր պարապումը, սըբ-
բազան ու անայլայլ պաշտամունքը իր անձն էր միայն, ամէն բանէ
վեր, ու ատ անձին ալ՝ մի՛ւս նիւթերեսը։ Ապրեր էր փորին, զգա-
յարանքներուն, ատոնց ճարուելիք սնունդին մատակարարումովը։ Կի՛նը
հացն էր անոր ու իր արուեստը, յարակից բոլոր տուրքերը տեսակ
մը մշուշ, որսորդի ճարտարանք այդ հացը ձեռք ձգելու։ Գուցէ
ճանչնար, ճանչցա՞ծ ըլլար զայն։ Վասնզի կինը տգեղ է մա՛նաւանդ
կիրքին խորը։ Բայց կը յաւակնէր մորթագերծ ընել կեղծիքը անոնց
«հոգեմաքէն», լախտահարելով զանոնք կիրքի տիաբազոնին վրայ,
պերճ, մարմարակերտ, ոսկեկոփ իր բառերովը, վայրագ այդ «հրէշ-
ներուն» բերնին հոսեցնելով ինքզի՛նքը։

Ու կը նայէր պատկերին, փոխն ի փոխ ու անգոյ, նման մար-
դու մը, որ կը տարուբերի երազին եւ իրականութեան մէջտեղ։

— Ի՛նչ կայ սակայն, ինչո՞ւ լուռ էք։

— Չէր գիտեր, թէ որու ուղղած էր իր հարցումը, այնքան
իր մտապատկերները կը վարէին անոր ուղեղը։ Տեսաւ, որ երկուքը
ոտքի էին ու ինք նստած, հատ իր փորէն՝ վարժուած ըլլալով դան-
պաղութեան։ Հարցումէն յետոյ անդրադարձաւ, որ Սոնան դեղնած
էր անծանօթ դալկութեամբ։

digitised by A.R.A.R.@

— Սոնա, ի՞նչ կայ։

— Անիկա գիտէ,— պատասխանեց աղջիկը՝ մտովի, բիրտ, երկա՛ր, ցոյց տալով Մարանը։

Տէ՛ղ, գրդի՞չ՝ մատի այս ցուցմունքը, որպէսզի քաղքենի կարգերու մէջ դատուէր իր գերազոյն անկրթութիւն, այնքան՝ որ չուարած պանդոկապետը ուժ գտաւ իր մէջ Օրիորդին «անկրթութիւնը» շահագործելու եւ ուեւցուց.

— Ապի ձեր կրթութի՛ւնը, Օրիորդ Գոհարեան։

— Լռեցէ՛ք, վասնզի ուրիշ բան է կրթութիւնը։

— Ի հարկէ՛, ի հարկէ՛...

— Փարիսեցիներ, «որ դուրս կլանէք եւ զմժղուկս քամէք»,— Գարգեւեանին օրական բնաբաններէն մէկը յեղյեղուած այնքան յաճախ, թատերական ու պատշաճ, որ փորագրուած էր Սոնայի յիշողութեան մէջ։

— Ի՞նչ կայ, կ՝ըսեմ ձեզի,— կրկնեց Գարգեւեան, դզրդալին ոտքի ելլելու փորձի մը վրայ, պարպելով իր բարկութիւնը, բայց մնալով փռուած իր երանգներուն։

— Գիտէ անիկա,— պատասխանեց Սոնան։

Ու կրկնեց մատնանիշ ցուցումը, որուն կ՝ընկերանար խոր ու վրդովիչ վիրաւորանք։ Անպատեալի՛ն։ Գուցէ, քանի որ Մինաս Մարանը ցատկած էր տեղէն, ու կորովի, բայց առանց բիրտ ըլլալու փակցուցած.

— Սովորութիւն չունիմ մատներու հետ խօսելու։

Սրամտութիւնը յաղթանա՞կ մը՝ն է, ինչպէս կ՝ախորժին տեսարանելէ անոր ասպետները։ Թերեւս։ Դիտուած է, որ երբեմն ասպարէզին մրցորդները սրամտութեան սիրոյն կը զոհեն կարեւոր շահեր, առաւելութիւններ։ Ու դիտուած է, որ նոյն այդ վարպետները, այնքան զգայուն՝ այդ կէտին, խուլ կ՝ըլլան ուրիշ շատ բաներու։

— Ու յետոյ,— վարանեցաւ, բայց նուաճեց ինքզինքը։

— Ու յետոյ, հոս եկած ենք օգտակար ըլլալու, ոչ թէ նախատուելու։

— Որո՞ւ օգտակար։

— Ձեզի՛։ Ուրիշ բան եղա՞ծ եմ արդեօք։

— Անշո՛ւշտ, «պատուական ու պատուաբեր» ազգայի՛ն, չէ՞ որ ազգին բարեբարն էք։

— Հոս չենք եկած նախատուելու, Օրիորդ Սոնա,— կրկնեց անիկա, ու նախատալից բան մը կար այդ հաստատումին մէջ։ Թոնէն, նայուածքէն հեռուելի էին չբսուած մեղադրանքներ։ Ապերախտի հետ խօսող մը, այս երանգով կը զատուի պարզ կշտամբողէն։

Ազդուեցա՞ւ Օրիորդը այս ակնարկութենէն։ Անիկա չէր իսկ անդրադարձած Մարանի նախադասութեան իմաստին։ Հեգնութիւնը, զայն առնելն ու տալը, կապուած է մասնակի զգայարանքի։ Շատեր զուրկ են անկէ։ Բայց կայ անիկա, ինչպէս կայ միւս մասնակի զգայարանքը, ա՛ն՝ որ բացառիկ ընկալչութիւն կը ներկայէ եղերական հոսումներու։ Մարդիկ, խմբուած այս եզերքուն մէջտեղը, կը կապմեն անտարբերներու փաղանգը, որոնք պիտի չնեղուին լացէն՝ ինչպէս ծիծաղէն։ Անոնք, որ Սահակ Գարգեւեանին նման երկու ասեղ-խոներ, օձի մը պոչին ու գլխուն նման, կը միացնեն իրենց վրայ, խոնարապէս զժբախտ արարածներ են։ Գիտի խնդան ուրիշներու թերու-

digitised by A.R.A.R.@

թիւններով, բայց պիտի տառապին իրենց առաքինութիւններէն։ Մեր ախորժակները մեր պատուհանները կը մնան։ Ու միասին է հոգին, երբ ամուլ է։ Պարզեւեան թիփէն, այդ մարդերը պիտի չապրին պարզ վայելքի կամ վայելչութեան մէջ միամիտներուն, սիրտբուխներուն ու համ չառնեն պիտի կնիկէն, որ անմոռնչ կը պառկի ու կ'ըլլայ լեղի՛։ Ժահրոտ՝ իրենց զգայութիւնները պիտի ոճաւորեն անոնց ներքին տիեզերքն ալ, ուրիշները կճելու թունաժէտ իրենց անգթութիւնը ի վերջոյ պիտի չխնայէ սեպհական միսին։ Ու պիտի խածնեն իրենք զիրենք ալ։ Պարապ տեղը չէ, որ ժողովուրդը բանաձեւած է, Պարզեւեանէն շատ առաջ,— «բարկ քացախը իր ամանին կը վնասէ»։

— Դուք ոչի՞նչ գիտէք։

Ոտքին մէկը, առանց իր գիտութեան, զարկած էր դեռնին, խնդա՞ց, թէ պոռաց, ահաւոր այլուրութեամբ մը, այնքան բարձր, որ ընկուեցաւ շքեղ ու դեղակերտ տեսիլքը մանկամարդ կնոջ։ Ցոյութեան այս ճառագայթումէն անիկա տգեղ էր իսկ, ու դուրս՝ մա՛նաւանդ ինքն իրմէ։

— Ոչի՞նչ գիտէք, հա,— ստիպուեցաւ բերանը բանալ քիչ մը աւելի լայն։ Շո՞ւնչը նեղ կու գար, թէ բառի փչրանքներ փակեր էին շրթներուն։ Անոր փոքրիկ թաշկինակը անցաւ, ջղագրգիռ ու խիտ, բերնին մօտերէն, կարծես սրբելու համար աղտը, որ կը լորձնանար վարէն դէպի վեր։ Կիրքի այս ասստկութիւնը, բոլորովին նոր, սա պառնուկի պէս քաղցր սիրտին մէջ։ Ու սարսող՝ անոր ամբողջ հասակը։ Մարմինը, երբ կը մասնակցի մեր բառերուն խռովքին, վերահաս է վտանգը։ Անոր լանջքը ուռեցաւ, ակնյայտ ճնշումով։ Փոքրացան աչքերը։ Բա՞ն կը փնտռէր, թէ կը փախցնէր անոնց դաշտերէն։ Կ'ընենք այս անգիտակից շարժումները բոլոր զարկին տակը կիրքին կիկլոնին, որուն թաթերը մեզ կը վրդովեն մինչեւ խորագոյն ծալքերուն մէջը մեր ներսի՝ ինչպէս դուրսի անձնաւորութեան։ Ու անոր փոքրիկ մատները կը դողային մեղրագոյն վիզին վրայ։ Այսպէս լարուած, յարձակումի անցած, տպաւորիչ էր ան խորապէս։ Երկու այրերը, անկախ՝ պարագայական իրենց ներկայութենէն, դարձուած իրենց անգիտակից եսերուն, կը հետեւէին անոր ձեւերուն արտակարգ խռովքին։ Սեռը՝ զգուած՝ կծիկ մը կոխ է։ Կոխը, արձակուած, ուրիշ բան չէ յանձին, եթէ ոչ շրջուած սեռ։ Փորին չափ, եթէ ոչ աւելի, սեռին դոհացումն է մարդերը հանած իրարու դէմ ու մղած փողոտումի։ Կնիկի մը ստացումին մէջ մարդ պիտի չայցոտի դութէն։ Ով գիտէ քանի՛ հազար դար կռիւին արդիւնքը գիրկ մը կնիկ է յաղթականներուն։ Օրիորդին դէմքին վրայ, գուշակելի՞, փոթորիկը։ Անոնք չհամարձակեցան, ընդմիջումով, պատռել մարմինը պատրաստուող թաթառին, մէկը՝ հիրնոսացած իր գեղեցիկ խաղին հեռապատկերէն, միւսը՝ այցուած այն խոր, վտանգաւոր, բայց հեշտախառն պահերէն, որոնք անոր դերագոյն յիշատակները եղան։ Վտանգին տեւողութիւնը իբր յիշողութիւն կրկնապէս քաղցր է, վասնզի ապահովութեան ալ նպաստը ունի հետը։ Անիկա փոխադրուած էր դժուար իր «քառորդներուն»։ Նոր չէր, որ աղջիկները կը դտնէր այս լարուածքին մէջ։

Փողոցէն մուրացկան մը ճուաց։

Զայրացին, Պարզեւեան պատուհանէն նետեց միլլիմ մը։ Անի-

digitised by A.R.A.R.@

կա կ'ասէր մուրացկանները, իր կարծիքով, իրենց դէմքին անտանելի ագեղութեանը պատճառով։ Ուրի՞շ՝ իրականութիւնը։ — Ո՛վ գիտէ։ Անիկա պաշտօնական մուրացկանն էր սեռին ու կը նեղուէր մտապատկերին բոլոր ճամբաներէն։

Էդ, թշուառ այդ սողոսկումը ձայնին խոռվէ՞ց աւելի թշուառ ա՞ խղճմտանքները։ Փողոցը հագաւ իր պարապութեան խմաստը։ Դէմի պարտէզին մէջ լռեց շարժումը։ Նոթաներուն գլանիկը ինկաւ գետին ու չոր՝ հեծկլտաց։

— Իրա՞ւ։ Դուք ոչի՞նչ գիտէք։

Ընկրկեցաւ։

— Հա, հա, հա՛։

Կարուկ, դաժան, սարսօրէն խիստ էր անոր արտայայտութիւնը։ Ճեղքուած՝ ձայնը։

— Կ'ուզեմ, որ չընդմիջէք զիս։

Գուացած էր գրեթէ։ Որո՞նց սակայն այդ հրաւէրը, երբ ոչ ոք մոքէն անցուցեր էր ասիկա։

Ապրումին արագութիւնը պատճառ է այս կարգի կայծակումներու։ Ջիղերը, մեծ ճնշումներու առեն, կը նմանին առաձիգ թելերու։ Փրթելէ առաջ կ'երգեն ու մենք հասկնալ կը կարծենք խուլ այդ չրչիւնը, մինչա մեր սրտին ներքեւ, մեր ուղածին պէս։ Անիկա կ'ապրէր ներսէն ինչ որ պիտի թափէր, ծրագրած էր թափել դուրս։ Ու կ'ապրէր ուժգին, լայն լոզումով։ Այնքան միասին էր եղեր գրագէտին խմացականութեան հետ, որ օրինակած էր, անզգալաբար, մտավայելքի անոր եղանակը անդամ, ու կը խօսէր ինքն իրեն, իր հարց-պատասխանին տանելով, աստուածային այլուրութեամբ, գրագէտին անզգածութեամբ, երբ ասիկա բառերով կը նաւաճէ ուրիշներուն կեանքը։

— Նա՛խ...

Կեցաւ, ամփոփուելու ձեւի մը մէջ, ինչպէս դիտեր էր Գարգեւեանի վրայ այնքան յաճախ։ Գրագէտը սովոր էր այդ յատկանշական ընկրկումին,— ձա՞յն, թէ թոյն հաւաքելու շարժումը դէպի ետ խոյանալու համար, կրկին դէպի առաջ, ընկրկումէն ստացուած թափին կշիռովը։

— Նա՛խ, պէտք կը դգամ ձեր ուշադրութեան ենթարկելու սահուր, միակատուր, անճառելի կապտութիւնը, որ կը կոչուի Օրիորդ Մելինէ։

Ինչ արագութեամբ բառերը եղան քիչ առաջուան ընդհանուր, քիչիկ մը արու իրենց գոյնէն, ըլլալու համար չոր, էջ, նախանձէն «կապուտ» հոգիի կտորներ, որոնք թափելով գետին՝ կը պաղին հետզհետէ ու կը չինեն մարդոց պատկերները, անոնց իրական, տեսակարար արժէքը։ Մենք չենք կրնար մոռնալ այդ կտորներուն լեզուն։ Օրիորդ Սոնա Գոհարեան թաւշապատ ատելութիւնն էր այդ պահուն։ Անիկա շարունակեց.

— Որ պատի՛ւը, ի՞նչ կ'ըսեմ, փառքը, ի՞նչ կ'ըսեմ, վեհափառութիւնը ունի ձեր տունին մէջ իր «թագուհիութիւնը» պատմունանելու։

Իր բառերը անդին էին նախանձէն ու իզութենէն։ Զուր տեղը չէր, որ աչակերտն էր Գարգեւեանին։ Իրազանցումը, ատոր ընդու-

digitised by A.R.A.R.@

նակ ըլլալը մեր մխիթարութիւնն է երբեմն։ Անանունդ ճպուռները նուազ երջանիկ չեն, քան մշտանօթի մրջիւնները։

— Պիտի լուէք։

Ձայնը վերցած էր աստիճան մը աւելի։ Ընդմիջո՛ղ չկար անշուշտ։ Բայց անիկա կը տեսնէր ատոնք։ Այնքան մղումը հզօր էր իր մէջ ու վախ ունէր առիթը փախցնելու, մէկ անգամ ընդմիշտ պարպելու իր ներսը։

— Ու պիտի լսէ՛ք ինծի։

Ու ներդաշնակ, խմուելիք բան մըն էր, ակնթարթի մէջ հէնք փոխող այս ձայնը հիմա (վանդի մտածեր էր իր վրայ), որուն մէջ բաները կը կորսնցնէին իրենց վիրաւորիչ, անկիւնոտ տարրերը, ըլլալու համար ջերմ, սիրաւէտ բան մը։ Կարդ մը կիներուն յուռութքն է ատիկա։ Քանի բարկանան, այնքան անդիմադրելի կը դառնան, հերիք է, որ յուզումին լարը չանցնի ուրիշին մարմինին ու մնայ խարբսխուած իրենց խորագոյն ալքերուն ծոցը։ Զգլխանքը, թէեւ ցանցառ, բայց իրողութիւն է՝ ինչպէս սրբութիւնը, նահատակի արիութիւնը։

— Ի՞նչ իրաւունք ունի, անսահման իր բոպիկութեան, գիւղացիութեան, անյատակ իր տգիտութեան մէջ այդ հերարձակ ոչնչութիւնը զիս ծաղրելու, ու ոչ, զիս նախատելու։

Շո՞ւնչը քիչ կու գար, թէ անգիտակցաբար կ՝օրինակէր հռետորը, որուն դիմախաղը, մարմնաշարժքը, բառական ու ձեւական ճօճումները կաղապարուած կը ցայտէին վրայէն, անթերի հարազատութեամբ։ Սուր ու կերպընկալ անոր իմացականութիւնը տարիներէ ի վեր կրեր էր այդ ամէնը, ամէնօրեայ չփումով ու իւրացուցեր, անքակտելի բնականութեամբ։

Օրիորդ Սոնա Գոհարեան անպարագիծ հիացում ունէր Սահակ Պարգեւեանի գրականութեան։ Պարապ տեղը չէ, որ ամէն տղայ բանաստեղծ է քիչ մը, ասանըվէնին ու աւելի կանուխ։ Պատանութեան զգայութիւնները ամէնէն խոր քանդակուածներն են մեր զգացական տանարի կամարներուն։ Տասնըհինգամեայ պսրման, գրագէտին բառովը՝ պարմանուհի, անիկա տարուեր էր գրագէտին փարթամ անձէն, նմանելու համար մօրը. ուրիշ կիներու ու միւսներուն, տարեկից ու յիմար, երբ անոր գէրը կը յաչշտակէին իրարմէ։ Տարուեր՝ խոր, մաղնիսող անոր ալքերէն, որոնք բոլորէն տարբեր հեղումով կ՝ողողէին անոր հոգին։ Տխո՞ւր, պատրանաթա՞փ, հեռո՞ւ, գի՞նչ գիտնարդ, այդ ալքերը ունէին բան մը, քաղցր ու խոնաւ, որ կը շոյէր, կը լցէր, կը բանար, կը քալէր միշտ դէպի ներս։ Ոմանց մօտ ձայն է, ուրիշներու մօտ՝ դէ՛մքը, հեղինակը այս հմայումներուն։ Անիկա, այս սկիզբի օրերուն, դոլրոց գացած առենն անգամ հետը կը տանէր անոր ալքերը, անջատ անոր դէմքէն, ու կը տանէր նախանձով ու լալով վախէն։ Որքան մտածեր էր անոր նորբաց ուղեղը՝ գտնելու համար կերպը, որով արժանաւոր ըլլար անիկա ընդունելու խուլ, յատակ, բայց անհպելի կրակը, որուն ծարաւն ունէր անոր նորազարթ էութիւնը։ Ցղութիւնը կարդ մը զգայարանքները կ՝աւելցնէ կիներուն։ Հոգեկան յղութի՞ւնը։ Եղած են ատոր ալ փաստերը։ Ժողովրդական հաւաք մը, տարին մէջ որոշ օր մը, ընկուզենին կ՝ընէ մարդկօրէն զգայուն, որպէսզի անոր կոճը առնէ իր հիւսուածներուն մէջ նկարը իր շուքին յամող կամ չարժող ընչաւորին։ Փայտին

digitised by A.R.A.R.@

նեարդներուն մէջ կաղապարուած այս տարօրինակ լուսանկարը թէեւ խիստ հազուադէպ, չի դադրիր հանդիպելի ըլլալէ ընկուզենիին կարգ մը ուռերուն մէջ, թերասուեր, բայց ամբողջական դծագրումով մը։ Երբեմն մոդէդ մը, երբեմն օրանին կիսագլան խողովակը, որուն վիրեւի մասին մանկան մը գլուխը կը հիւսուի թեւերուն կաթին մէջ։ Երբեմն հարսի մը կիսանդրին կը կարդան մարդիկ այդ ուռերուն coupeին մէջ։ Նմա՞ն՝ մեր հոգին, որպէսզի յարահոս իր ջուրերուն վրայ ուռկանէ դուրսին խաղտուն շաղերը, բայց սեւեռէ զայն անջինջ ու ընդմիշտ։ Թերե՞ւ...։ Գրագէտին հոսող այդ խրոմքն էր պատճառ, որ մօրը հակառակ, կարդար անոր բոլոր գրածները, երեք–չորս անգամ, իր սենեակին մէջ, ու կարդար բարձր, ձայնին տալով հեղինակին չեչտագիծը, ծաւալը, կշռոյթը։ Ու կը դողար, ինչպէս կ'ամչնար՝ ըրածին իմաստին առանց իմնելու։ Սէ՞ր։ Անիկա պիտի զգար անդրանիկ խոցն ալ անոր, եղերական առատուն, երբ մօրը հետ պիտի փախչէր անոր եաեւէն, քայթայուած, մահու չափ ատելով այդ մայրը, բայց լռելով։ Յետո՞յ։ Թողէք, որ կեանքը հոսի, զարարային մէջ ու չտեսնենք ամէն բան։ Այս ազդեցութիւնն էր պատճառ, որ մատաղ աղջիկը այնքան հարազատութեամբ իւրացուցած ըլլար գրագէտին արտայայտութեան բուռն, հատու, վիրաւորիչ կարծրութիւնը։ Աւելի յետոյ, ըլլալով աղջիկը իր մօր, կատարելապէս գիտակ գրագէտին հոգեկան անպարագիծ ամայութեան, մօրը նման չկարենար ազատել ինքզինքը անոր հմայքէն։ Ու տարուէ տարի, ամբանար իր խեփորին մէջ։ Երբ խօսէր, մանաւանդ վիճաբանէր, ինքնաբերաբար անիկա կը գտնէր ջերմ ու փաղաղիչ շեչտը գրագէտին պարարուին։

Մայրը մտաւ ներս։

Ննջասենեակէն առեր էր աղջկան ձայնը։ Ահաբեկ՝ վասնզի կը հաւատար Մարանին, Իշխան Պողոս Արծրունիի հեքիաթին. հազիւ ատեն դտաւ, ինքզինքը հաւաքելով, վազելու «տեսարանին»։

Այս մուտքը, բոպէ մը, թուեցաւ կասեցնել բախումին թափը։ Երկու այրերը իրենց պիրկ ունկնդրումէն քակուելու պէս եղան։ Կը սխալէին։ Սոնան, փոխանակ իջնելու.

— Ոչ մէյայն այդքան։ — Ուղղակի ազազակ մըն էր նետուածը։ Ո՞ւժ կ'առնէր մօրմէն, թէ ինքզինքը կ'եռապատակէր։ Ան չտեսաւ — կատարելապէս տեսած էր ամէն բան — մօրը աչացի, ողորմուկ նշանները ու շարունակեց.

— Ա՛ռ ձեր Օրիորդ Մելինէն կրնայ, ու, ազատ ալ է, ձեր ու

բար կրկնելով գրագէտին շարժումը, բամբասացութեան ատեն, վեհափառ ու գեղեցիկ, բառին կրակին մէջ հալեցուցած ամբողջ չարաւանքը իր անցեալին ու քուրայէն նոր ելած ոսկիի մը նման վիրաւորելով խղճմտանքները։ Խօսքին հմայքն է ատիկա։

Մինաս Մարանը, այնքան խելացի, լեզուանի, անդիմադրելի՝ այրերուն դիմաց, դառն փորձերու դասը ունէր իր պահեստին մէջ, կիներու հանդէպ, բառի կրկէսէն։ Քանի տարի է, անոր ընտանեն էր եղեր շմանել երբեք խօսքի կռիւին, որուն մէջ անոր պարտութիւնը, անխուսափելի՝ քանի որ երես ելած կինը Աստուծմէն չի վախնար, չի նրբանար, չի դառնանար, զինքը զատելու չափ աշխարհին համերէն, պատճառուած ըլլալով իրմով բարեբարեալներէն։ Այս կռիւները պարբերաբար ծայր կու տային, երբ աղջիկները, այսինքն՝ իր ձեռնասունները հասունային ու բռնանային։ Անիկա սարսափով կ'արտասանէր խորհրդաւոր իր ընտաններէն մէկը։ «Երբ կիները ելլեն լեզու...»։ Միշտ պարտական, անոնց մարդէն, անիկա կը լքէր ճակատը, ու կ'անցնէր հոն., հեռուէն պաշարող իր միջոցներուն առատութեանը վստահ։ Աղջիկներու հետ կռի՞։ — Ուղիղ յիմարութի՛ւնը։ Սոնայի՞ն հետ։

— Բայց ո՞վ է այդ ջղիկլին կտորը, որ մոռնայ այնքան շուտ իր անցեալը, լուացարար իր մայրը։

— Կեցիր հոդ,— պոռաց խռոված գրագէտը, որ աղքատութեան հանդէպ ունէր խոր յարգանք, ու յիշատակը՝ ուպասուհի իր մօրը։

— Սոնա, անարդար ես,— աւելցուց մայրը, որ յանախ, իր մենիկ լացերուն մէջ, նախանձով դիտեր էր լուացարար կինը, չորս զաւակներով, գինով էրիկով, բայց կ'ուտէր իր հացը, խաչակնքելով, օրհնելով Տիկինը, Աբարիչը, էֆենտին (Ս. Պարգեւեան), մաղթելով բոլոր աշխարհին աէր ու բռնտութիւն։

— Ո՛չ, մամա, ո՛չ, գիտեմ ըսածս։

— Անարդար ես։ Աղքատութիւնը ո՛չ մեղք է, ո՛չ ամօթ։

— Բայց սի՞րտը,— աւելցուց, փղձկելու մօտ յուզուած։

Սէ՞ռը։ Անշուշտ թէ՛ մեղք է, թէ՛ ամօթ։

Արա՛գ, ակնարկութիւնը բրաւ թափանցիկ Սահակ Պարգեւեանին։ Բայց, ընդոծին իր վատութիւնը արդիլեց գրագէտը միջամտելէ։ Անիկա կը վախնար իր հաշուոյն։

— Ես չեմ կրնար հանդուրժել, որ մոռնայ անիկա իր մայրը, քանի որ այդքան յաւ գիտէ ուրիշներուն մայրը նախատելու ատեն շատ աւելի ստորին, վիրաւորիչ բառեր գործածել։

Ակնթարթի մէջ երեքն ալ «հոն էին»։ Ու ողորմելի՝ Տիկին Գոհարեա՛նը, նոյն ատեն մայր ու սիրուհի։ Կրակէ անցած ապակիին նման անիկա գոյն առաւ ու տուաւ ու հարուածին ուժգնութիւնը ըզգալի էր այտերուն ալ վրայ, որոնք խոնարհեցին իրենց աչքերը գետին։ Սահակ Պարգեւեան շունչէն կը նեղուէր։

— Անիկա իրաւունք չունի ձեզմէ զատած երեսը գործածել ուրիշները անարգելու, լրութեան սա «լայնքով»,— ինչպէս գրած էր օր մը Սահակ Պարգեւեանը, չփացած գրողի մը հասցէին։

Անոր իւրաքանչիւր բառը կը դպէր, հեղհեղէ աւելի խիստ, վանդի կու դար «բեռնաւոր» մտիկ կռիւէն, դեռ չպաղած ուժգնութեամբ մը ու «հարուստ՝ ներքին բովանդակութեան չափ», պա-

digitised by A.R.A.R.@

բաղայական «համոյ»։ Երկու աղջիկներուն վէճը եղած ըլլալու էր չափազանց բուռն, դուիթէ անդարմանելի բեկումով, քանի որ խօսքին աճումը, երկարաձգումը կը գրգռէր դայն հետզհետէ։ Իրականութեան և անոր բառերով արտայայտման մէջ ոչ օրէնքը խորունկ հետեւանքներ զուշակելի կ'ընէ։ Երբ հա տուելու, «Քաղե՛ուշ համար կը վիճինք, քիչ-քիչ կը զղատանանք մեր հեղումէն, Դէպի կործանում, աղէտ, մեր կիրքը կը նուաճէ մեր բառերը ու կ'ամբինք ներսէն ու դուրսէն։

— Գիտնալու, գիտնալու էք սակայն, որ ամէն կին Ցիկին Մարի չէ։

Անակնկալն էր ասիկա։ Մինաս Մարանին վոնտուած կինը ո՞ր համբով կը մօտեցուէր Սոնա Գոհարեանին կամ անոր մօրը։ Մէկ հատիկ այդ բառով, բախումը կը ստանար նոր երանգ ու թաւալ։

Վա՛տ, լո՛ւռ՝ գրագէտը։

Մայրը փորձեց միջամտել.

— Քեզի ինչ, աղջիկ, ամէն ոչխար՝ իր սրունքէն։

— Ինծի ի՞նչ։ Բայց մամա, գիտե՞ս ինչ կ'ըսես։ Ցետոյ, շատ կ'աղաչեմ, որ չընդմիջես զիս։ Բաներ կան, որ երկու անգամ չեն ըսուիր կեանքի մէջ։

Կեցաւ, անիկա նորէն։

Անիկա ողողուածի պէս էր, դալուկ գոլով մը, որ գէմքէն չէր բխեր։ Անոր բառերը, կպչուն կաղերու վերածուած, կը մնային անոր ոլորտին մէջ։ Ու փաթթուած անտես այդ շրջբչին մէջ, անիկա սորվրուած բան մը պատմելու տպաւորութիւնը կու տար դուրսէն դիտողին։

— Դերասա՞ն,— պիտի մտաբերէր դայն թեթեւ ճանչցող ու հասարակ ականատես մը։

Սահակ Պարգեւեան տուած բարձին, խորասոյզ՝ իր երագին ուրուագծերուն մէջ, դուրս էր գրեթէ վէճին անմիջական, իրական մթնոլորտէն, տարուած՝ Սոնային զգեցուցած փարթամ ու թրթռուն պատմուճանով։ Մենք ենք, որ կը տեսնենք, ոչ թէ ուրիշները՝ որ կը տեսնուին։ Ճիշդ է ասիկա, բայց հիշդ է երբեմն միւս ձեւն ալ, որով կ'այլայլին պատկերները կիրքին հեղումով։ «Կիսամեռ մարդն իսկ կրակ կ'առնէ անոր լեզուին տակ», կը խորհէր գրագէտը ու կ'երազէր երբորդ արարին հաչակաւոր տեսիլը։

— Կը բաւէ, Սոնա, նայէ ինչպէս կը դողաս։

Մտիկ չընրաւ անիկա մօրը, չէր կրնար։ Կռուայոյզ, կէս մը առաջ հակած, թոքը լիովին պարպել կարենալու համար, որպէսզի իր բառերը ստանային անհրաժեշտ կորովը, չարութիւնը, «արիւնը», աւելցուց.

— Ես, սանկ ու նանկ ճարուած, կէս որդիդիր, տեղ ու ծագումով անծանօթ, հիմնովին գռեհիկ ու այդքան լրբօրէն «ծաղիկ» աղջիկէ մը արժանի չեմ ստորնանալու, մա՛յր։

Կուլ տուաւ բա՞ն մը,— թո՞ւքը, թէ ամօթխածութիւնը։

— Քու աղջիկդ կ'ամբաստանուի...

Կեցաւ։ Մատները բռներ էին ուժգին, իր կոկորդը։

— Ու կ'ամբաստանուի իրեն հայրագիր, մեր տունին բարեկամ սա մարդուն հետ։

Գրեթէ մեռած՝ ցոյց տուաւ անոր մասը Մինաս Մարանը։

digitised by A.R.A.R.@

Վեհափառ գրագէտը ուրախ էր վերջապէս։

— Ցեխաղի՛ճ,— դառաց անիկա, բռունցքները զարնելով բազմոցին կռնակին։ Զէր հեւար, մոռցած ըլլալով չունչը։

— Սուրբ Ստեփանոս, Սուրբ Ստեփանոս...

Տիկին Գոհարեանն էր, իզմիրցիներուն մէջ ընդհանրացած այդ բացագանչութիւնը (անոնց եկեղեցին կը յորջորջուէր այդ անունով), զարմացական՝ ինչպէս պաղատական, անդգալարար դանելով։

Մինաս Մարա՞նը։

Լո՛ւռ։ Շլմորած՝ վեհափառ զայրոյթէն, որով գրագէտը ժայթքեր էր ինքզինքը այս վէճին վրայ։

Բայց, ամէնէն եղկելին, ինքը՝ Օրիորդ Գոհարեանն էր։ Դեպ դեղին, անիկա կը դոգար մինչեւ իսկ «մազերէն», ինչպէս գիտեց անոր մայրը։ Բայց այս տեղատուութիւնը տեւեց քիչ։ Ցուզումին կոհակը կը վերադառնար, աւելի ուժգին, ողողելու, սրբելու այդ տըկարացումը։ Ինքն իրմէ դո՞ւրս։ — Գրեթէ։ Ու տարօրինակ էր զարկը անոր ձայնին, երբ պոռաց.

— Լսեցէք, պարո՛ն պանդոկապետ, ինծի չ'իյնար հայելի մը բռնել ձեր հոգիին դէմ։ Այդ հայելին արդէն ինկած է ձեզմէ դուրս, շատ ուրիշներու ձեռքով։

Նախատինքը, երբ դորձ ըլլալէ աւելի մոռածում է, թեթեւ կը ճնշէ։ Ան էր պատճառը թերեւս, որպէսզի անալգուած «բարերարը» բանար բերան ու հարցնէր.

— Ի՞նչ ըսել կ'ուզէք։

— Գիտի իմանաք։ Գիտի իմանաք՝ ինչ որ դեռ չեմ համարձակած ըսելու ձեր երեսին։ Գիտեմ, որ ամչնալու չէք զիջանիր, ինչպէս կը պարծենաք ձեր շրջանակներուն մէջ։ Ու ձեր կինը դատապարտելու համար՝ ձեզմով ապրող ձեր արարածներն ալ չեն զիջանիր այդ բանին։ Ու ձեզմէ սորվելով, չեն զիջանիր ամչնալու ծախուած աղջիկներ, որոնք ձեր տունին մէջ կը մնան բռնի ու կը դրաւեն տեղը ուրիշին։

— Օրիորդ, ես պատիւ ունիմ։

— Ի՞ հարկէ, բացայայտ է ատիկա։ Ի՞ հարկէ ձեր փոխանակիպիրները չեն մերժուիր պանքաներէն։ Ձեր հայը չի մերժուիր առաջնորդէն։ Ձեր ըմպելիները չեն մերժուիր այս գաղութին ծաղիկը կազմող զարգացած, «մտաւորական» երիտասարդութենէն։ Կ'օրհնուին ձեր բարերարութիւնները ու թերթերը, մեր թէ օտար, դրուատիք ունին ձեր կարողութեանց ու երկրին՝ ինչպէս մեր համայնքին մատուցած ձեր ծառայութեանց մասին։ Դուք էք հանդէսներու եւ ներկայացումներու անզուգական դամասան, թատրոններու մէջ ձեր օթեակը կը հագնի բացառիկ իմաստ ու բոլոր արուեստագէտները ձեզ կ'ընդունին իրենց անզուգական պաշտպանը։ Ու բոլոր երգչուհիները հիւր կ'ըլլան նախ ձեր պանդոկը, յետոյ ձեր վիլլան։ Էջեր չեն բաւեր՝ արձանագրելու համար ձեր բարեգործութիւնները։ Ոչ իսկ մէկ տեւ տո՞ղ, որ յանդգնէր ստուեր ածելու ձեր արտաքին համբաւին։ Ուրիշ ի՞նչ է արդէն պատիւ ըսուած բանը այս ժողովուրդին մէջ։

— Ապերախտութիւնն ալ պատիւ մըն է հիմա։

— Որո՞ւ կ'ուզէք այդ մեղադրանքը։

Անոր ձայնը եկած էր բոլորովին կոկորդին սահմանէն։ Այդ ճի-

digitised by A.R.A.R.@

չով անիկա կանխած էր վրդովումը մայրիկին, որ բացի դաշնակին պատահարէն, կ'անդիտանար գրագէտին ընդարձակ մակաբուծութիւնը ու հպարտ դիտէր ինքզինքը, քանի որ ապրեր էին առանց ուրիշին «ճիտ ծռելու»։

Մինաս Մարանը անճարակ կու գայ դուրս։

— Ո՞ւր՝ այս մարդուն համբաւեալ ոսգանդը «գէշ քառորդները» եղի պէս հայեցնե՛ու։ Անճարա՛կ։

Ի պատիւ իրեն պէտք էր աւելցնել, որ անիկա առաջին անգամ գործ կ'ունենար այսքան բարդ կացութեան մը մէջ։ Սառա ու իրենց Բանձրութեամբը միայն չահեկան իր արկածներէն — դրէք ածականը — ոչ մէկը դրած էր զինքը սա դժնդակ «քառորդին» մէջ։ Զգացա՞ծը։ Ո՛վ գիտէ։ Տառապա՞նք։ — Բառ է ասիկա, առաձիգ ու անհասատ, մարդէ մարդ հակընդդէմ նոյնիսկ։ Ո՞ւր՝ այս մարզուն համբաւեալ դիրքանցութիւնը։ Ինչո՞ւ չէր անդրադառնար, որ ինք քիչ, շատ վե՛ր էր այդ ապերախտ բերանէն, ամէնէն առաջ՝ անոր տունը նայողի բարերար մեծանձնութեամբ մը։ Կու գա՛յ պահը, երբ օտար տան մը կնիկին կամ աղջիկին սիրոյն թաքնօրէն մեզ պարտադրած մեր գոհողութիւններէն կը սրբենք մեր հաշիւներուն ցանցը, վերարկուն ու կ'անցնինք հակադիր դատումին, մեզ խաբելով արդա՛ր պատրանքով։ Մեր բարեբարնե՛րը, երբ Մինաս Մարանին գիծէն ղըսպանակներով կը շարժին։ Բայց դուք դիտէք անոր հաշիւները Տիկին Գոհարեանին վրայ։ Ու անոր արդու համբերութիւնը։ Ուրիշ ի՞նչ բանի պիտի խորհէր անիկա տունէ մը ներս, ուր աղքատութիւն, գեղեցկութիւն, մեղք ու վայելքի ծարաւ կու գային առաջին գիծի, քան անոր աղջիկին։ Ի՞նչ՝ որ Արեւելքի արքաներուն պէս կին կը փոխէր։ Մի մոռնաք, որ այս պատմութիւնը կ'անցնի Եգիպտոս։ Ու մի մոռնաք, որ մեր պատմութեան վերջին դարերը բաղմակին քաղաքակրթութեան մը համատարած ճնշումով հոլովուեցան։ Աւելի մօտ չըլլանի մը, մեր ամիրաները, Պոլիս թէ Գահիրէ, վայելքի ձեւին մէջ խորութիւն չըրին, երբ իրենց մեծազործութիւնները իրր պատուար դնեցին ջոնացին ընդմէջ ցեղին բարքերուն եւ իրենց ախորժակներուն։ Անունները, տխուր, քան պիտի չաւելցնէին այդ արժանիքներուն։ Անունները, տխուր, բան պիտի չաւելցնէին այդ արժանիքներուն որոնք թոյլատ է Մինաս Մարաններու համբով։ Ինչ որ անոնց տրամադրելի եղաւ իշխանութեան պողոտաներէն, անոնց յաջորդներուն մատչելի եղաւ ոսկիին ակօսովը։ Վերագրումը չի տարածուիր այն հաստատ, պարզ, «պատուական» դասակարգին, որ օտար ափերու վրայ մեր ցեղին առաքինութիւնները կը յաւերժէ մինչեւ այսօր ու կը պահէ մաքրութիւնը իր առագաստին։ Բայց այս խոնարհ, անմահ խրմորը չի կրնար հերքել փառքամոլութիւնը բոլոր այն մեծ քիչերուն, որոնք Մինաս Մարանին նման չեն զիջանիր ամչնալու, հազիւ կը մընան իրենց սեղին եզերքուն ու իրենց զաւակները արդէն իսկ հեռացած են անկէ։ Ամէն զատ, մնալով նոյնիսկ սահմանին մէջը իր ժողովուրդին, Մինաս Մարանները չեն մնար անոր զգայնութեան մէջ։ «Նոր հանդէպ» մեղրը Արեւելքի մէջ մչուշոտ է քիչ մը։ Այրերը պիտի չզիջանին ատով։ Իրականին մէջ, ի՞նչ է ինքնին կարծեցեալ, փառաբանեալ սա անդրածութիւնը։ Արժէ՛ք ունի՝ բացակայելն։ Երբ մեզի կը յաջողուի բացակայիլ մեր մեղքերէն, այսինքն՝ զանոնք դիտել կամ լսել հեռուէն, դիւրաւ կը դանենք մեր հաւասա-

digitised by A.R.A.R.@

բակչութիւնը։ Դէմ դէմի՞, անոնց հետ։ Ուրիշ պիտի ըլլայ պատասխանը։ Պէտք է աւելցնել հոս բացառիկ պարագայ մը։ Մինաս Մարանը իր ընկերներուն կողմէ նմանցուած էր այն որսորդին, որ իր կենդանիներուն քիթին կամ ոտքին կ'ապաստանի, քան սեպհական նշանառութեան։ Բացի հեռաւոր, պէյրութեան առամնաբոյժին աղջիկէն, որ անհանգիստ, այսինքն՝ անվերծանելի տեղութիւնն էր, անիկա գործեր էր միւս բոլորին հետ դեղին հակայ նիւթով։ Զե՞ւը։ Հարկաւ։ Բառորդ դարէ ի վեր, մայր իր զբաղումը կիներու առեւտուրը ըլլալուն հակառակ, չունէր անիկա մէկ հատիկ յաղթանակ, զոր վաստակած ըլլար, «ճակատին քրտինքովը», ինչպէս կը սրախօսէին վայելչի իր ընկերները։

Զո՞վ, օդը։

— Անչուշտ։

Բայց թաց էր կոնակը Մինաս Մարանին։ Խեղճ, եղկելի, ծիծաղելի։ Ո՛վ անդթութիւնը կիներուն, երբ կ'ուրանան ոչ անշուշտ իրենց մեղքերը, այլ՝ անմեղութիւնը իրենց բարիք միայն կամեցողներուն։ Սոնային վերջին բառերը քայքայիչ էին.

— Զեր պատի՛ւը։ Անշուշտ, այնքան առատ, որ կը յորդի ձեր տունին սեմէն եւ կ'երկարի մինչեւ պարտիզները(*), նեղոսեան կըզիները, անապատին աւեր մեհեանները ու Սաքքառայի բուրգերը։ Այնպէ՞ս։

Անիկա դրաւ ափին մէկը աչքերուն, կապի նման։ Ճակատը ազատ։ Կու լա՞ր։

Երկու այրերը չափեցին իրար։

Շատ թափանցիկ այս ակնարկութիւնները ո՛ր աղբիւրէն կու գային։ Ո՛վ էր դատաւորն։ Գրագէտը կը սարսռար, վախնալով Նայիլ Մարանին։ Մայրը, զարհուրած.

— Սուրբ Ստեփանոս... Սուրբ...

Եղաւ անդոհոտ լռութիւն։

Զգացին իսկ լոգեկառքին ժամանումը։ Սուլիչը, պարպուիլը։

Ինչ յոյսերով սկսած օրը կը սառնար չարաշուք դարձուածք։ Ամէնէն պազարիւնը, նորէն, Մինաս Մարանը, որ փորձեց բերանը բանալ։ Անոր լեզուին վրայ, դունտի պէս կլոր, թափելու պատրաստ, կը դողդողար գերագոյն նախատինքը, որ ռումբի մը նման կարող էր խորտակել ամբարհաւաճ կեցուածքը Օրիորդին ու տապալել ամբողջ այս թուղթէ կայսրութիւնը։ Լռեց անիկա։

Դուրսէն ոռնաձայն։

Ցնցուեցան բոլորը։

ՑԱԿՈԲ ՕՇԱԿԱՆ

(Շար. 13)

(*) Պարած = Գահիրէի մօտ, Նեղոսի ջուրերը խմբող մեծ կառոյց, նշանաւոր իր պարտէզով եւ հաճոյքի խորշերով։

digitised by A.R.A.R.@



ԳԱՆԳԱՏՆԵՐՈՒՆ ՀՈԼՈՎՈՅԹԸ...

«Բագին»ի նախորդ թիւով մենք խօսեցանք մեր հայրենիքի այն դեղեցիկ իրագործումին մասին, որ «Հայոց լեզուն եւ գրականութիւնը դպրոցում» երկամսեայ հանդէսը եղաւ։ Այս ձեռնարկը, իր առաջադրութեանց հունին մէջ մնալու պարագային անշուշտ, կոչուած է բախտորոշ դեր մը կատարելու, եւ Հայաստանի մատղաշ սերունդները անպայման շնորհակալ ըլլալու պատճառներ պիտի ունենան անոր՝ մեր գանձերու գանձին եւ անով կատարուած յայտնագործութիւններուն հաղորդուելու համապարհին։

Այս խոստմնալից հեռանկարին առիթով մեր ուրախութիւնը արձանագրելէ ետք, մենք չենք կրնար անտես առնել այն միւս հարցերը, որոնք տապնապալից համեմատութիւններու հասած են եւ անոնց բարւոք լուծումը բացառաբար կախում ունի Հայաստանի պատկան մարմիններու կամքէն։

Ակնարկուած հարցերէն գլխաւորը Հայաստանի ռուսական վարժարաններուն ներկայացուցած բարդութիւններն են, որոնք աւելի քան քառորդ դարէ է վեր կը յուզեն Հայաստանի մտաւորականութիւնը, բայց կը շարունակեն իրենց դոյութիւնը նոյն բնոյթով։

Թարմացնելու համար հայրենի մամուլին հետեւող ընթերցողին յիշողութիւնը՝ ամփոփենք այդ երկարամեայ կնճիռին պատմութիւնը։

Ուղիղ քառորդ դար առաջ, Երեւանի «Գրական թերթ»ին մէջ լոյս տեսաւ քննիչներ Բ. Աբրահամեանի եւ Հ. Վարդանեանի ստորագրած «Ի՞նչ են ցոյց տալիս փաստերը» խորագրուած յօդուածը, ուր աշակերտներու ծուլութեան եւ ուսուցիչ-դիրեկտոր-ուսումնավարներու աչքապուրութեան հետեւանքով առաջացած լեզուական անհեթեթութիւններուն ու գրական ապիտութիւններուն կողքին՝ կար նաեւ սա ճիչը.

«Ցաւօք սրտի, այս հարցը առաջին անգամը չէ, որ առաջ է քաշւում։ Ռեսպուբլիկայի մամուլում բաւական ժամանակ է, ինչ արծարծւում է այն, խօսւում է նաեւ այն մասին, որ Հայաստանի ռուսական դպրոցներում շատ վատ է հայերէնի ուսուցման դրուածքը, ինչպէս հայկական դպրոցներում վատ է ռուսաց լեզուի դրուածքը։ Սակայն տարիները անցնում են, իսկ վիճակը մնում է նոյնը»։

1957ին վրայէն տարիներ թաւալեցան, ամբողջ քառորդ դար անցաւ, բայց վիճակը, ըստ հիմնաւորուած նոր գանգատներու, նոյնը մնաց, հիմա

digitised by A.R.A.R.@

ալ «Հայաստանի ռուսական դպրոցներում շատ վատ է հայերէնի ուսուցման դրուածքը, ինչպէս հայկական դպրոցներում վատ է ռուսաց լեզուի դրուածքը»:

Համեմատութիւնները նոյնը չեն հարկաւ, պիտի տեսնենք քիչ անդին, որ հայկական դպրոցներուն մէջ ռուսերէնի ուսուցումը այնքան տկար չէ, որքան անմխիթար է ռուսական վարժարաններուն մէջ «հայերէնի ուսուցման դրուածքը»:

Շատ չէ փոխուած նաեւ գրական մշակոյթի «դրուածքը»։ Քննիչներ Բ. Արշակեանի եւ Հ. Վաբոյեանի կատարած ախտաճանաչումներուն պէս՝ հիմա ալ հայկական միջնակարգ վարժարանի չրջանաւարտները բանաստեղծը վիպագիրին հետ կը շփոթեն, երգիծագիրը՝ թատերագիրին հետ, դաւանանը՝ որբանուն հերոսին հետ, քաղքենին՝ դեղջուկին հետ, 19րդ դարը՝ 20րդ դարուն հետ:

Այս ամփոփումին մէջ հնարաւոր չէ ժամանակին հետ քայլ պահել եւ մատնանշել տարուէ տարի արձանագրուած փաստերը: Բաւարարուինք հետեւարար կարեւորներով:

Վերոյիշեալ քննիչներուն լոյս ընծայած արդիւնքէն եօթը տարի ետք, դարձեալ «Գրական թերթ»ին (1965, թիւ 35) մէջ, երեւցաւ «Հայկական ՍՍՌ լուսաւորութեան մինիստր ընկ. Շ. Սիմոնեանին» ուղղուած բաց նամակ մը, զոր ստորագրած էին Երեւանի պետական համալսարանի եւ Խաչատուր Աբովեանի անուան մանկավարժական ինստիտուտի 16 ուսուցիչ-մատուռականներ, ինչպէս եւ հինգ գրողներ՝ Բաղիշ Ցովսէփեան, Սերօ Խանզադեան, Հրաչեայ Յովհաննիսեան, Հաւօ Մահեան եւ Պարոյր Սեւակ:

Նամակագիրները թիւերու լեզուով կը խօսին Խ. Աբովեանի անուան մանկավարժական ինստիտուտի տարբեր բաժանմունքներուն համար դիմում ներկայացնող 1297 ուսանողներու մասին, ցաւագին շեշտով մը եզրակացնելով, որ «Այդ 1297 հոգուց հայոց լեզուի գրաւորից դրական գնահատական ստացան միայն երկու հարիւր յիսուն հոգի, իսկ երկու հարիւր յիսուն հոգուց քանի քանիսը կտրուեցին հայերէնի բանաւոր քննութեան ժամանակ: Բացի այդ, դրական գնահատական ստացածների ամենի քան 95 տոկոսը բաւարարուեց միայն «բաւարարով»: Իսկ «բաւարար» գնահատականը նոյնպէս, ինչպէս գիտէք, իմացութեան ստորին ցուցանիշն է եւ ոչ թէ բարձր»:

Անոնք, բանաստեղծ-արձակագիր եւ ցանասիրական գիտութիւններու թեկնածու մատուռականները կը յայտնեն նոյնպէս, որ պատկերը գրեթէ նոյնը եղած է պետական համալսարանի ընդունելութեան քննութիւններուն, երեւոյթին մէջ կը խորանան ասոնց մը ուսիլ.

«Մի կողմ թողնելով հազարաւոր արտառոց, անհեթեթ սխալներ, որ գրաւոր եւ բանաւոր քննութիւնների ընթացքում թոյլ էին տալիս քննութիւն յանձնողները, ասենք միայն, որ նրանցից ոմանք նոյնիսկ չէին կարող բառերը իրար շաղկապելով կազմել հայերէն նիշդ նախադասութիւններ: Քննական յանձնաժողովները ամբողջ քննութիւնների ընթացքում ցուցաբերել են անհրաժեշտ հոգատարութիւն, մանկավարժական եւ անհատական մօտեցում ամէն մի քննուողի նկատմամբ: Բայց, այնուամենայնիւ, արդիւնքը, ինչպէս տեսնում ենք, գոհացուցիչ չէ»:

Այս ողբերգութիւնը պատճառ մը ունի հարկաւ, ու պատճառը չէ խուսափած նամակագիրներու ուշադրութենէն.

«Եւ դրա պատճառը հիմնականում այն է, որ լուսաւորութեան մինիստրութեան որոշմամբ վերջին տարիներին հայոց լեզուն որպէս առարկայ, հանուել է 8դից բարձր դասարաններում, մինչդեռ 9դից բարձր դասարաններում է, որ աշակերտը հասունանալով, «բերանացի» անելուց անցնում է

digitised by A.R.A.R.@

գիտակցական ընկալմանը, այսինքն՝ մնայուն գիտելիքներ ստանալուն: Եւ հենց այդտեղ էլ լուսաւորութեան մինիստրութիւնը խնկական սկիզբը համարել է վերջ եւ դրել է իր վերջակէտը»:

Ի՞նչ ըրաւ արդեօք «խնկական սկիզբը վերջ» համարող մինիստրութիւնը, բարեփոխութիւն մը մուծե՞ց իր եղերական վերջին մէջ, թէ Հայաստանի տարին բաւարարուցած մտաւորականներուն տրտալին ձայնը մնաց ձայն բարբառոյ յանապատի:

Հարցումին պատասխանը կը տեսնենք քիչ անդին: Հոս աւելի հետաքրքրական է հայրենի մտաւորականներուն բաց նամակին սա բացսիրտ առաջարկ-բաղձանքը.

«Մեր կարծիքով, մայրենի լեզուի ուսուցման մեթոտները բարելաւելու հետ միասին, անհրաժեշտ է հայ գրականութեան զուգընթաց 9րդ եւ 10րդ դասարաններում եւս դասաւանդել Հայոց լեզու: Դա ո՛չ միայն խիստ անհրաժեշտութիւն է, այլեւ հրամայական պահանջ, եւ չենք կարծում, թէ դուք, յարգելի ընկեր մինիստր, առարկութիւն կ'ունենաք»:

Յարգելի ընկեր մինիստրին առարկութիւնները չենք կարծեր, որ մարդ իմացաւ, բայց, ըստ երեւոյթին, ամէն ոք հանդիպեցաւ անոր քար անտարբերութեան:

Հայրենի մտաւորականներու ստորագրած բաց նամակէն երկու տարի անց, «Գրական թերթ»ին (1967, թիւ 36) էջերուն երեւցած զրոյցի մը մէջ, Երեւանի պետական համալսարանի եւ համեմատական լեզուական ամպիոնի վարիչ փրոֆեսէօր Էդուարդ Ազայեան, իր կարգին, եւ նոյն հարցին կապակցութեամբ, ըսաւ գրեթէ նոյն դիտողութիւնը.

«Այդ կապակցութեամբ մի դիտողութիւն ունեմ: Ընդունելութեան քննութիւններին պատրաստուելու համար դժուարութիւն է ստեղծում այն, որ միջնակարգ դպրոցի 9րդ–10րդ դասարաններում հայոց լեզու բոլորովին չեն անցնում: Շրջանաւարտներն այդպիսով ստիպուած են լինում երկու տարուայ ընդմիջումից յետոյ միայն եւ շատ կարճ ժամանակամիջոցում վերյիշել իրենց անցածը: Մեր կարծիքով, անհրաժեշտ է դպրոցի վերջին դասարաններում եւ, թէկուզ փոքր քանակով, սակայն անպայման ժամեր տրամադրել հայոց լեզուին»:

Արձանագրուած ձախողութիւններուն պատճառները հիմնաւորող ու դարմանը նշող փրոֆեսէօր Էդուարդ Ազայեանի խօսքէն տարի մը անց՝ նոյն տրտունջը դարձեալ, այս անգամ հանրապետութեան վաստակաւոր ուսուցիչներէն մէկուն կողմէ, Դ. Գազազեան, ըստ որում՝

«Դարձեալ ու դարձեալ չի լուծուած մայրենի լեզուի ուսուցումը 9րդ եւ 10րդ դասարաններում շարունակելու վերաբերեալ բազմաթիւ ուսուցիչների, աշակերտների, ծնողների եւ բարձրագոյն ուսումնական հաստատութիւնների աշխատողների պահանջը (9րդ դասարանին 1ին կիսամեակում յատկացուած է շաբաթական երկու ժամ)» («Գրական թերթ», 1968, թիւ 26):

Հանրապետութեան վաստակաւոր ուսուցիչը, աւելի վարի դասարաններուն համար, հայոց լեզուին յատկացուած դասաժամերուն տակիթով եւս ըրած է նկատողութիւն մը, բաղդատական եղրերու հիմամբ, որ սիոփարար չէ հոլչն.

«Հայկական դպրոցներում հայոց լեզուին յատկացուած է շաբաթական 48 ժամ՝ ՌՍՖՍՀ դպրոցներում մայրենի լեզուին յատկացուած 53ի փոխարէն»:

Ռուսականը ամէն տեղ իբրեւ օրինակ կ'ընդունուի մեր երկրին մէջ, ամէնէն օրինակելին, սակայն, ինչպէս կը տեսնէք, օրինակ չէ դարձած...

Գրողներուն, փրոֆեսէօրներուն ու վաստակաւոր ուսուցիչներուն

digitised by A.R.A.R.@

յայտնած վերի բաղձանքներուն, դիտողութիւններուն ու պահանջներուն վերայէն անցան չուրջ տասը տարիներ, բայց 9րդ եւ 10րդ դասարաններուն սահմանուած պատիժը թեթեւցնող նախաձեռնութեան մը դեռ ոչ ոք հանդիպեցաւ,— իսկ ուսերէնի համեմատութեամբ հայոց լեզուին նուազ ժամեր յատկացնելու մեղքին վերացման փոխարէն՝ լուսեցաւ նոր ողբ մը, թէ՝ «դրպրոցական ծրագրերում պակասել են հայոց լեզուի եւ գրականութեան ժամերը»:

Շարունակենք փաստերուն մէկտեղումը.—

28 *Յունուար* 1974*ին, Հայաստանի գրողներու կուսակցմակերպութիւնը գումարեց ժողով մը, նիւթ ունենալով* «Հայոց լեզուն եւ գրականութիւնը դպրոցական ծրագրում» *հարցը: Այդ ժողովին մէջ զեկուցումով մը հանդէս եկաւ գրող Կարէն Սիմոնեան, իսկ կրթական նախարարութեան ծրագրա-մեթոդական բաժնի վարիչ Ս. Ղալթախչեանը խօսեցաւ միջնակարգ դպրոցներու ծրագիրներուն մէջ վերջին տարիներուն կատարուած փոփոխութիւններուն մասին՝* «մասնաւորապէս հայոց լեզուի եւ գրականութեան ուսուցման ուղղութեամբ»:

Թէ՛ զեկուցաբերները եւ թէ ելոյթ ունեցողները, ընդունելով հանդերձ, որ բարելաւման ուղղութեամբ որոշ աշխատանք կատարուած է, շեշտեցին դարձեալ, որ «ներկայ վիճակը դեռեւս գոհացուցիչ չէ»:

Աւելի՛ն.

«Մասնաւորապէս ճշուեց, որ դպրոցական ծրագրերում պակասել են հայոց լեզուի եւ գրականութեան յատկացուած ժամերը: Իսկ 9րդ եւ 10րդ դասարաններից ընդհանրապէս հանուած է լեզուի ուսուցումը: Հետեւանքը լինում է ա՛յն, որ մեր պատանիներից ու աղջիկներից շատեր միջնակարգ դպրոցն աւարտում են լեզուական խիստ ցածր գիտելիքներով: Այդ են ապացուցում նաեւ բուհական ընդունելութեան քննութիւնների արդիւնքները: Ոմանք անտեսում են այն հանրայայտ ճշմարտութիւնը, որ իւրաքանչիւր մարդ, գիտութեան որեւէ բնագաւառ ուսումնասիրելու համար, պէտք է լաւ իմանայ իր մայրենի լեզուն, թատրոններում, հեռուստատեսութեամբ եւ ռատիոյով տրուած հաղորդումների ժամանակ երբեմն կոպիտ կերպով աղաւաղում է հայերէնը, մեր հանրապետութեան մայրենի լեզուն: Լեզուական մեղանչումների կարելի է հանդիպել մեր կեանքի շատ բնագաւառներում» («Գրական թերթ», 1974, *թիւ* 5):

Ի տես եւ ի լուր տարբեր մարդերու մէջ դրսեւորուած լեզուական մեղանչումներուն, որոնք հետեւանք են տեղ մը հայերէնին քիչ ժամ յատկացնելու եւ ուրիշ տեղ մը անոր բնաւ ժամ չյատկացնելու քաղաքականութեան, մեր մասնագէտները յանախ կ՚ընդգծեն այն նուիրական պարտքը, որ «իւրաքանչիւր մարդ, գիտութեան որեւէ բնագաւառ ուսումնասիրելու համար, պէտք է լաւ իմանայ մայրենի լեզուն»: *Դեռ վերջերս,* «Հայոց լեզուն եւ գրականութիւնը դպրոցում» *հրկամսեային առիթով, նոյնը կը պնդէր նաեւ Հայաստանի թիւ մէկ քաղաքացին, Կարէն Դեմիրճեան, թէ՝* «Ամէն մի աշակերտ, անկախ իր հակումներից, անկախ այն բանից, թէ վաղը իր համար գործունէութեան ինչ ոլորտ կ՚ընտրի, դպրոցում սովորելու տարիներին պէտք է խոնարհէս, կատարեալ տիրապետի մայրենի լեզուին, զգայ նրա ամբողջ գեղեցկութիւնն ու հմայքը, սովորի ճիշդ, արտայայտիչ խօսել, յստակ շարադրել իր մտքերը»:

Մասնագիտական ու պետական դէմքերուն յայտնած այս բաղձանքներուն ետին ենթադրելի է այն պայքարը, որ կը մեկնի վերը մատնանշուած երեւոյթներէն ու նաեւ հայերէն լեզուն ի միջի այլոց բան մը նկատող այն հոգեբանութենէն, որ բաւական ծաւալ ստացած ըլլալ կը թուի:

digitised by A.R.A.R.@

Այս «արատաւոր երեւոյթ»ին մասին նոր փորձառութիւն մը ստորագրած է Երեւանի պետական համալսարանի սովետահայ գրականութեան ամպիոնի վարիչներէն Սերգէյ Աթաբեկեան, «Գարուն» ամսագրին (1983, թիւ 1) մէջ, դառն փորձառութիւն մը, հետեւեալը.

«Նկատուում էր մի շատ արատաւոր երեւոյթ եւս· ոչ հասարակագիտական փակուլտետների դիմորդները, չգիտես ինչու, մտածում են, թէ հայերէնը կապ չունի իր բաժնի հետ, որ կարեւորը իր ընտրած մասնագիտութիւնն է: Այսինքն՝ ինքը կարող է նաեւ վատ գրել, իրեն պարտաւոր են ներել· չէ՞ որ ինքը, ասենք մաթեմատիկայից կամ ֆիզիկայից «լաւ» կամ «գերազանց» է ստացել:

«Բերեմ մի օրինակ· գրաւոր քննութիւն էր երկրաչափական փակուլտետում: Մի երիտասարդ արտագրում էր: Երբ մեր պատկառելի գիտնականներից մէկը վերցրեց նրա ծածկագրերը, դիմորդը շատ զարմացած ու «անկեղծ» ասաց, թէ հայերէնը իր ինչի՞ն է պէտք, իր մասնագիտութիւնը բանասիրութիւնը չէ:

«Յաւելք, այս գիտակցութիւնը խանգարեց շատ շատերին»:

«Արատաւոր երեւոյթը» ինքնաբերաբար առաջ չեկաւ հարկաւ, ու չի չքանար Հայաստանի մտաւորականութեան առաջարկած դրմանը անտեսելով· կը լուծուի հայրենասիրական մղումներով, քաջութեամբ, որոնք կը թուի, թէ պակսեցան երկկուսան պատասխանատուներուն եւ այսօրուանները բարի բաղձանքներով կը կարծեն կատարել իրենց ուսերուն ծանրացող պարտքը:

Շարունակենք:

Դրողներու բաց նամակէն, փրոֆեսէօր ու վաստակաւոր ուսուցիչներու դիտողութիւններէն, ծնողներու եւ ուսանողներու բաղձանքներէն եւ, մա՛նաւանդ՝ գրողներու կուսակցական երպութեան ժողովին մէջ հանուած եզրակացութիւններէն ետք, կը կարծուէր, որ կրթական նախարարութիւնը հաշուի պիտի առնէ 9րդ եւ 10րդ դասարաններուն մէջ հայ լեզուի դասընթացքը վերահաստատելու հասունցած հարցը, բայց կը պարզուի, որ զայն հանրութեան սեփականութիւնը դարձնող առաջին ճիշերէն տասնրհինգ տարի ետք, դեռ նոյն տեղն ենք:

«Գարուն» *ամսագիրը, իր 1978 Նոյեմբերի համարին մէջ,* «Խորհրդածութիւններ ընդունելութեան քննութիւններից յետոյ» *ընդհանուր խորագրին տակ, տպագրելով ընդունելութեան քննութեանց արդիւնքներուն անդրադարձող Մայա Աւագեանի եւ Թաֆայէլ Իշխանեանի յօդուածները, դարձեալ ուշադրութեան յանձնեց լուծման կարօտ նոյն հարցը, իր բառերով՝* «Քանի որ խօսքը վերաբերում է մեր երիտասարդ սերնդի բարոյական դաստիարակութեան եւ կրթութեան պրոբլեմին, ուստի դրանք ներկայացնում են ընթերցող լայն հասարակութեան, բուհերի դեկավարութեան եւ Լուսաւորութեան Մինիստրութեան ուշադրութեանը»:

Յօդուածագիրներէն առաջինը, բանասիրական գիտութիւններու թեկնածու եւ նոյն տարին հայոց լեզուի եւ գրականութեան քննական յանձնաժողովներէն մէկուն նախագահ Մայա Աւագեան, համարեա՛ բառացի կը կրկնէ տուեալ նիւթին անդրադարձող նախորդ մտաւորականներուն ախտաճանաչումները.

«Ամէն տարի խօսում է այս առարկաների դրուածքի մասին: Կայ հանրապետական մեթոդ-կապիներ, կայ ուսուցիչների կատարելագործման ինստիտուտ, կայ «Հայոց լեզուն եւ գրականութիւնը դպրոցում» ամսագիր, ուսուցիչների ամենամեայ հանրապետական խորհրդակցութիւններ, վերջապէս,

digitised by A.R.A.R.@

այս առարկաների ուսուցիչների մի մեծ զօրաբանակ։ Եւ, այդուամենայնիւ, ոչ մի փոփոխութիւն մայրենի լեզուի ու գրականութեան դասաւանդման մէջ։ Եթէ կայ որեւէ շարժում, ապա միայն ետընթաց՝ դատելով դպրոցաւարտների խօսքի մշակոյթի ցածր մակարդակից, հայ գրականութեան ամենանշանաւոր դէմքերի ու գործերի անգիտութիւնից։

«Կրկնենք բազմիցս ասուած այն ճշմարտութիւնները, թէ պատեհ չէ լեզուի դասաւանդումը վերջակէտել 8րդ դասարանում, թէ հայ գրականութիւն առարկան, որ միւսներից ուելի է կոչուած կրթելու եւ ձեւաւորելու գալիք սերնդի բաղաքացիական ու հոգեւոր դիմանկարը, պէտք է ծառայեցնել իր նպատակին...»։

Քանի որ հայոց լեզուի դասաւանդումը 8րդ դասարանին մէջ «վերջակէտուած» է, ուրեմն, չէ յարգուած վերի երկու դասարաններուն առիթով յայտնուած համընդհանուր բաղձանքը։ Այս կը նշանակէ, նոյն տեղն ենք դարձեալ, չէ կատարուած որեւէ շարժում, իսկ «եթէ կայ որեւէ շարժում, ապա միայն ետընթաց»։

Դժբախտաբար, կացութիւնը նոյնը կը մնայ մինչեւ այսօր։

Ահա վերջին արձանագրութիւնը, «Գրական թերթ»ի այս տարուան ու այս ամսուան (3 Յունիս 1983) առաջին թիւին մէջ, Ռաֆայէլ Ալթայեանի «Գեղեցիկ խօսքը դպրոցում» խորագրեալ գրութեան արանքին.

«Օդի ու ջրի պէս անհրաժեշտ է տուեալ դէպքում նոր տիպի ուսումնական ձեռնարկ, որտեղ գտեղուած բնագրի ընթերցումը օգնէր գեղեցիկ խօսքի ընտիր նմոյշների իւրացմանը, յատկապէս շարահիւսական ունակութիւնների զարգացմանը, մա՛նաւանդ՝ որ 9րդ եւ 10րդ դասարաններում մայրենի լեզուի յատուկ ժամեր չկան այլեւս»։

«Չկան այլեւս»։

Բնա՞ւ պիտի չըլլան արդեօք։

Գիշեր-ցերեկ ժողովուրդին մասին կը խօսին հոն, ժողովուրդի շահերուն մասին խօսիլ կու տան գիշեր-ցերեկ, հոգեւոր բարգաւաճման մասին կը խօսին մեծաբարբառ կարգախօսներով, բայց, ինչպէս ցոյց կու տայ վերը ամփոփուած ժամանակագրական պատկերը, անտես կ'առնուին նոյն ժողովուրդին ամէնէն նուիրական զգացումները եւ անարձագանգ կը ձգուին ժողովուրդին ներկայացուցչական դէմքերուն խոհերը, բանաստեղծներուն, գրագէտներուն, փրոֆէսէօրներուն, վաստակաւոր ուսուցիչներուն ու գիտութեան թեկնածուներուն հեռանկարային խորհրդածութիւնները։

Եւ զարմանալին այն է, որ Երեւանի մէջ ապրող եւ արտամօտ նիւթի մը մասին արտագին իր ձայնը Երեւանի մէջ նախարարին լսելի դարձնելու զօրութենէն զուրկ այդ մտաւորականները, երբեմն, իրենց հայրենասիրական բաղձանքները անարգող նոյն պաշտօնեաներուն ճնշումով հարկաւ, կը սաւառնին հեռու-հեռուները եւ կը յաւակնին աշխարհը վերափոխելու երազներուն մէջ դեր ունենալ. «Գեղ հետ եմ, Զիլի»։

Երբ տեղ մը ժողովուրդի մտածող խաւին խօսքը կը զրկուի կշիռէ եւ անոր կատարած ստոյգ ախտանանաչումներուն դարման գտնելու տրամադրութիւն մը չի ցուցաբերուիր, հետեւանքը կ'ըլլայ ա՛յն՝ որուն ողբերգական պատկերը ուրուագծուեցաւ վերը,— առաջընթացի փոխարէն՝ տեղի կ'ունենայ «ետընթաց», ինչպէս պիտի ըսէր Մայա Աւագեան։

Հայաստանի մտաւորականներուն խօսքին այս անզօրութեան մէջ դեր մը չունի՞ն արդեօք անոնց զուրգուրանքին ու նախանձախնդրութեան հակադրուող անփոյթ ու հաշուենկատ միտները։

Անտաբակոյս։

digitised by A.R.A.R.@

Ի դէմս միւս մասուրականներուն, մենք նկատի ունինք այն գրող-բանաստեղծները, որոնք իրենց գաւակները կամ թոռները կը գրկեն Հայաստանի ռուսական վարժարանները։ Կը նշանակէ, որ սոոնք, իրենց այս արարքով՝ ո՛չ միայն հայկական միջնակարգ վարժարաններու 9րդ եւ 10րդ դասարաններէն հանուած հայոց լեզուին ժամերուն մտահոգութիւնը չունին, այլեւ առհասարակ հայոց լեզուին բախտով շահագրգիռ չեն։ Սոոնք, իրենց այդ նախընտրութեամբ, մէկ կողմէ պատճառ կ'ըլլան իրենց գաւակներուն ու թոռներուն ներքին ամայութեան եւ, միւս կողմէ՝ էջսի կ'ինջեցնեն նախանձախնդիր հոգիներուն ուժը։

Հայոց լեզուին կապուած փշոտ հարցերուն առընչութեամբ հոս արդէն կը մտնենք տարբեր ոլորտի մը մէջ, որ նուազ տխուր պատկեր մը չի պարզեր, քան միջնակարգ վարժարաններու 9րդ եւ 10րդ դասարաններէն հանուած ժամերուն հետեւանքները։

Մանրամասնենք։

Ասկէ շուրջ մէկուկէս տարի առաջ, «Ազդակ-Շաբաթօրեակ»ի (ԺԲ. տարի, թիւ 47) մէջ լոյս տեսաւ Անցորդ ստորագրութեամբ գրութիւն մը, որ կ'անդրադառնար Հայաստանի գրողներու միութեան անդամ եղած ու եղող որոշ դէմքերու պարզած վերոյիշեալ ոնյարիք կեցուածքին, կատարելով նոյն առեն սա խորհրդածութիւնը.

«Աւելի՛ն. ռուսական դպրոցէ շրջանաւարտ մը շատ աւելի դիւրութեամբ կրնայ իր ուսումը շարունակել համալսարաններու մէջ, մանաւանդ անո՛ր համար, որ ռուսերէնը պետութեան կողմէ փնտռուած, բաջալերուած ու բարձր դասու լեզուն կը համարուի։ Եւ նիւդ այս առաւելութիւններուն համար ալ ժողովուրդը կը փորձուի իր երեխաները զրկել ռուսական դպրոց, պատճառ հանդիսանալով հայկական դպրոցներու աստիճանական նուազման ու մակարդակի անկման եւ անոնց փոխարէն ռուսական դպրոցներու բազմացման»։

Անցորդի յօդուածին մէջ կատարուած վերի եւ յարակից խորհրդածութիւնները նորութիւն չունեն հայ մարդուն համար։ Հայրենի մամուլին խմբագրական նիւթերուն մէջ յաճախ տեսանելի են անոնց նմանակները եւ մասնաւորապես որոշ խաւի մը համար՝ աղբիւր մնայուն տառապանքի։ Իսկոյն որոշ խաւի մը, որովհետեւ Անցորդի յօդուածին բուն նիւթը, պիտի ըսէինք՝ ցաւագին նորութիւնը նոյն մասնաւորականութեան միւս խաւին պարզած պատկերն է, զառածումը՝ հարազատ միջավայրէն, դաւաճանութիւնը՝ ազգային անհատականութեան ամէնէն ապահով կռուաններէն համարուող հայ վարժարանին, Հայաստանի հողին վրայ ծնած իր որդին կամ թոռը ռուսական վարժարան յանձնելու փաստով։ Անցորդ կազմած էր անուանացանկը 120 գրողներու, որոնց կէսէն աւելին, վաթսունվեց դէմքեր, ընդ որս եւ Գուրգէն Մահարի, Հրաչեայ Քոչար, Գէորգ Էմին, Սիլվա Կապուտիկեան, Մարօ Մարգարեան իրենց գաւակները զրկած են ռուսական վարժարան։

«Հայ լեզուի եւ հայ գրականութեան պաշտպան հանդիսացող գրողներու կողմին,— *կը կարդանք Անցորդի կազմած տախտակին մէջ,*— իրենց երեխաները ռուսական դպրոց կը զրկեն Նաեւ Ակադեմիայի թղթակից անդամ, սաղանդաւոր լեզուաբան, հայ լեզուի դասախօս Արտաշէս Պապոյեան, Անդրանիկի մասին ծանրագոյն գիրք գրած պատմաբան Մատուռ Ադայեան, Ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսեան, Երեւանի պետական համալսարանի տնօրէն

digitised by A.R.A.R.@

Սերգէյ Համբարձումեան, աշխարհահռչակ աստղագէտ Վիկտոր Համբարձումեան եւ ականաւոր ու հեղինակաւոր ուրիշ մտաւորականներ»։

Ճիշեալ անունները, առանց բացառութեան, ապշութիւն կը պատճառեն հայ մարդուն, ու ապշութիւնը կը վերածուի վհատեցուցիչ բեկումի, երբ ցանկին մէջ կը տեսնէ նաեւ անունը Վիկտոր Համբարձումեանի, որուն հանդէպ, բոլոր հայերուն պէս, երկիւղած յարգանք ունեցած ենք միայն ու առիթ չենք փախցուցած հրապարակայնօրէն ընդգծելու գիտութեան բարձունքներուն ցուցաբերած իր խոնարհութիւնը, ազգային արժէքներուն դիմաց թրթռացող ու ներշնչող ոգին, արիւնին խայտանքը։ Ու նաեւ...

Խօսքը տանք հանգուցեալ Նայիրի Զարեանին.

«...ես կ'ուզենայի իմ եւ իմ գրական բարեկամների կողմից շնորհակալութիւն յայտնել Հայաստանի գիտութիւնների ակադեմիայի պրեզիտենտ ակադեմիկոս Վիկտոր Համբարձումեանին, որ ռուս մեծ լեզուի գիտակ եւ բարեկամ լինելով հանդերձ, ակադեմիայի հիմնարկներում հետեւողականօրէն գործածութեան մէջ է պահում հանրապետութեան ազգային լեզուն» («Սով. գրականութիւն», 1967, թիւ 4, էջ 101)։

Ժամանակակից ստեղծագործութեան երկնակամարին ամենավառ աստղերէն մէկն է Վիկտոր Համբարձումեան եւ այդ բարձունքէն, հայ մարդուն պատճառած հպարտութեան չափ, Նայիրի Զարեանի ներկայացուցած տիպարը աքանչացումով ու ինքնավստահութեամբ կ'ողողէր ամէն հայու սիրտ, մինչդեռ տարբեր բան կ'ըսուի մեզի հիմա, տարբեր բան կ'ըսէ որդին ռուսական վարժարան յանձնելու իր արարքը, որ համբարձումեանական չէ բնաւ, որովհետեւ օրինակելի չէ։

Անցորդի ստորագրած յօդուածին վրայէն հազիւ հինգ ամիս անց, «Ազդակ-Նարաբօրեակ»ի (ԺԳ. տարի, թիւ 10) միջոցով դարձեալ, հանրութեան սեփականութիւնը դարձաւ Հայաստանի կուսակցական մէկ ժողովին արտասանուած անստորագիր գրութիւն մը, ըստ կռահելի կարգ մը տուեալներու՝ Սիլվա Կապուտիկեան, որ նոյն երեւոյթին մասին կը խօսէր եւ իբրեւ հերոս նոյն դասը ունէր դարձեալ՝ վերնախաւը, երաժշտութեան, գիտութեան, շարժանկարի ու բժշկութեան ասպարէզներուն մէջ գործողներ, որոնք ճիշդ Անցորդի պատկերացուցած հերոսներուն պէս, իրենց զաւակները ռուսական վարժարաններ յանձնելով՝ կը զօրացնեն ռուսական դպրոցները եւ, նոյնին բանիւ, կը հարուածեն հայկական վարժարանը, պատճառ դառնալով, որ անիկա, Հայաստանի սրտին, ընկալուի «որպէս Արշակաւանի»։ Հայաստանի կուսակցական ժողովին մէջ արտասանուած այդ խօսքին մէջ ուրուանկարուած հերոսները, կ'ըսուի մեզի, «արդէն վաղուց ո՛չ իրենց հետ, ոչ էլ ընտանիքի անդամների հետ վէճ ու տարակուսանք չունեն եւ այնքան վճռական են այդ հարցերում, որ կարծես երեխային հայկական դպրոց տալը չի նախատեսւում պրոտոկոլով»։

Մեր գրողներուն, արուեստագէտներուն ու գիտնականներուն կողմէ ռուսական վարժարաններուն տրուած այս նախընտրութիւնը, բնական է, կ'անդրադառնայ լայն խաւերուն մտայնութեան ու հոգեբանութեան վրայ եւ կը ստացուի ա՛յն սարսափելի կացութիւնը, որ պատկերուած է յիշեալ խօսքին հեռեւեալ պարբերութիւններուն մէջ.

«Եւ ահա ստեղծւում է ոչ գեղեցիկ, մեր ժամանակների համար ոչ սազական պատկեր, որն արդէն ունի սոցիալական զուսաւորում, հայկական դպրոցը ընկալւում է որպէս Արշակաւանի պէս մի բան, ուր հաւաքուած են «անզօրների», սոցիալապէս «ցածր» խաւերի երեխաները, ուր ոչ մի մակարդակ չկայ, եւայլն, եւայլն։

digitised by A.R.A.R.@

«Ընկալումների այպիսի հիմքի վրայ էլ ձեւաւորւում է հետագայ քննադատւում մօտեցումը հայկական կրթութիւն ունեցողների նկատմամբ, երբ նրանց, ռուսերէնի իմացութեան դէպքում էլ, արդէն աշխատանքի դժուար են ընդունւում, երբ հիմնարկ ձեռնարկութիւններում, հաւաքոյթներում, խորհրդակցութիւններում մի տեսակ վերից են նայում հայերէն խօսողներին, որպէս ոչ բարձր ինտելեկտի տէր մարդկանց եւ հարցականի տակ են դրւում նրանց փրոֆեսիոնալ ունակութիւնները, երբ դեկավար աշխատանքի են նշանակւում գերազանցապէս ռուսական կրթութիւն ունեցողները: Ուրիշ. հայերէն լաւ չիմանալը, հայերէն չխօսելը կարծես թէ դարձել է կուլտուրական համարուելու նշան»:

Երեւանի կուսակցական ժողովին արտասանուած խօսքին այս բաժինը, ռուսերէն կրթութիւն ունեցողներու բացուած վարկին դէմ, դարձեալ, ուղղակիօրէն կ'արձագանգէ ռուսական դպրոցներէ չրջանաւարտներուն ընծայուած քաջալերանքին առիթով Անցորդի կատարած խորհրդածութեան եւ, միւս կողմէ՝ «հայերէն լաւ չիմանալը, հայերէն լաւ չխօսելը» արժանիք համարող արտածներուն ըրած ակնարկով՝ մօտէն կը յիշեցնէ ուղիղ քսան տարի առաջ արձանագրած Պարոյր Սեւակի գայրոյթը, այլասերումի նոյն սխալով սնունդ տուող ախտաւորներուն առիթով.

«Այս դատապարտելի վիճակին են հասել,— *կը դրէր Պարոյր Սեւակ*, — կրկնում եմ, որովհետեւ օտար բառերի գործածութիւնը դարձել է մի տեսակ կիրք լինելու, զարգացածութեան, խելքի նշան, մինչդեռ դա պիտի ընկալուի իբրեւ տգիտութիւն, կիսագրագիտութիւն, մտաւոր խեղճութիւն, որովհետեւ որեւէ լեզուով ինչ թէ շատ կարգին (ուրեմն նաեւ՝ մաքուր) խօսել չկարենալը այլ բան չի նշանակում»:

Քսան տարի առաջ օտար բառեր գործածելը կը համարուէր զարգացածութեան նշան, իսկ քսան տարի ետք՝ «հայերէն լաւ չիմանալը, հայերէն լաւ չխօսելը»: Ուրեմն, ստորակայութեան ախտէն աւելի մաքրուելու փոխարէն, աստիճան մը աւելի խորացուած է օտարամոլութեան ախտը, ու տգիտութեան, կիսագրագիտութեան ու մտաւոր խեղճութենց վերջ դնելու տեղ, աւելի լայն տարածում գտած են տգիտութեան, կիսագրագիտութեան ու մտաւոր խեղճութեան մանրէները:

Այն հոդերանութիւնը կրողները եւ կրելով առաջնորդները ոչ մէկ արդարացում ունին հարկաւ, բայց կարելի չէ անտես առնել երեւոյթին իրական պատճառը, նոյնի՛նքն ռուսական դպրոցներուն առկայութիւնը Հայաստանի մէջ, եւ ռուսական կրթութեան ծաւալումը: Երբ վերջին չափանիշը ռուսերէնն է եւ ռուսերէնին լաւ տիրապետող գիտնականին, երգահանին, դերասանին, արհեստագէտին եւ միւսներուն աւելի լայն ասպարէզ կը բացուի, բնական է, որ կարգ մը խաւեր բռնեն այլասերման ուղին: Եւ եղածը տարբեր չարժաւորի մը չունի արդէն:

Ի հարկէ, մենք եւս խիստ անհրաժեշտ կը դանենք ռուսերէնին ուսուցումը Հայաստանի մեր վարժարաններուն մէջ: Պուշկինի, Տոստոեւսկիի, Թոլստոյի, Կոկոլի ու Կորքիի լեզուն է ռուսերէնը, մեծ ժողովուրդի մը լեզուն, բարեկամ ժողովուրդի մը լեզուն, ու եթէ հաճելի է որոշ ակնարկներու, ընդունինք այդ անհրաժեշտութիւնը ըստ Մայակովսկիի, որ «առաջարկում էր ռուսերէն սովորել միայն նրա համար, որ ռուսերէն էր խօսում Լենինը»: Բոլոր պարագաներուն, հայ մանուկը, հայրենի երկինքին տակ, պէտք է հիմնապէս սորվի ռուսերէնը, արմատէն, կատարելապէս: Ասիկա հարցին մէկ

digitised by A.R.A.R.@

կողմն է, միւս կողմը՝ աղէտալի։ Երկու կողմերուն ամփոփ պատկերը՝ վերոյիշեալ ճառէն.

«Տարեցտարի մեր բաղաքներուն նուազում է հայկական դպրոցների աշակերտական կազմը, երբ մեր մայրաքաղաքի հայկական դպրոցների մեծ մասը դժուարութեամբ կոմպլեկտվում — *աշակերտներու օրինաչափ թիւ* — հաւաքում, մինչդեռ մերձակայ ռուսական դպրոցները ունեն 4–5 առաջին դասարան, իւրաքանչիւրը 40–45 աշակերտով։ Ինչքան էլ լայնախոհ լինենք, հպարտանանք մեր բնածին ինտերնացիոնալիզմով, այս՝ տարեցտարի անող միտումի հետևում տանող հետեւանքները չեն կարող մեզ չմտահոգել»։

«*Տարեցտարի անող այս միտումին հետեւանքները*», արդարեւ, *չեն կրնար չմտահոգել ոեւէ հայ մարդ։*

Աշխարհի բոլոր մայրաքաղաքները, ինչպէս նաեւ ոստանները, իրենց ծոցին կը հաշուեն օտար ժողովուրդներու թիւ մը եւ օտարները, ամէնուրեք, արտօնուած են ունենալ իրենց թիւին համապատասխան վարժարաններ, ուր հիւր ազգերու զաւակներուն հետ որոշ թիւով բնիկներ ալ կը յաճախեն, մօտիկութեան, օտարամոլութեան կամ այլ պատճառով մը։ Հայաստանի մէջ եւս ռուսեր կը բնակին եւ օրինական է, որ Հայաստանի ռուսերը Հայաստանի մէջ ունենան իրենց վարժարանները։ Չկայ աշխարհի վրայ հայ մը, որ այդ իրաւունքը պանայ Հայաստանի ռուսերուն։

Բայց, ըստ երեւոյթին, այդպէս չէ «դրուածքը»։ Հայաստանի մէջ ռուսական դպրոցները ռուս աշակերտներուն համար չեն բացուած այնքան՝ որքան հայ աշակերտներուն։ Ա՛յս է, որ ըմբռնելի չէ, ու տարապիլին միւսը, ա՛յն՝ որ Հայաստանի մտաւորականութիւնը գործնապէս կը մասնակցի վերանգներով լցի այդ վարժարաններուն թուական ու որակական աճման...

Երբ մեր 1500 վարժարաններուն մէջ մայրենի այբուբենին հետ միաժամանակ կ'ուսուցուի ռուսական այբուբենը, այլեւս դժուար է ըմբռնել, թէ ի՞նչ կարիք կայ Հայաստանի մէջ այդքան մեծ թիւով ռուսական վարժարաններ հաստատելու, մեր վարժարաններուն մօտիկ-մերձաւոր վարժարաններ, ա՛յն աստիճան, որ թոյլ կը տրուի զանոնք օժանդակ դուրընթաց չորս-հինգ դասարաններով, իսկ մերիններուն տահմանելով արշակաւանային բախտ մը։

Անկէ ուղիղ տասնրեօթը տարի առաջ, «Հայրենիքի ձայն» (1966, *թիւ* 35) *շաբաթաթերթին մէջ, Երեւանի Կրուպսկայայի անուան դպրոցի մնօրէնուհին, Նինա Զիլիգուզարեան*, «Մարդուր եւ գեղեցիկ հայերէնով խօսելու համար» *խորագրին տակ կը գրէր.*

«Երեխաներին գինել խոր ու կայուն գիտելիքներով, դաստիարակել ընդանց պայծառ հայրենասիրութեամբ, աշխատասիրութեամբ, ազնուութեամբ։ Այս է եղել մեր մանկավարժների նշանաբանը։ Բայց մեր առաջին մտահոգութիւնը եղել է եւ է ա՛յնպէս սովորեցնել մայրենի լեզուն, որ աշակերտների բանաւոր ու գրաւոր խօսքի ժամանակ փայլատակի մեսրոպաշունչ հայերէնի հզօր հարստութիւնը։ Մեր շրջանաւարտները խօսում են մարդուր ու գեղեցիկ հայերէնով։ Միաժամանակ նրանք ազատ տիրապետում են ռուսերէնին»։

Նման հաստատումները պարզապէս ուրախութիւն կը պատճառեն մարդուս, իրենց թէ՛ մէկ եւ թէ միւս երեսով, թէ՛ մեսրոպաշունչ հայերէնի հզօր հարստութեան հանդէպ ցոյց տրուած գուրգուրանքին համար, թէ՛ ռուսերէնին ազատ տիրապետող աշակերտներուն հաշուոյն եղած հաւաստումով։ Կարելի էր, կը կարծենք, Երեւանի Կրուպսկայայի անուան դպրոցին օրինակը ընդհանրացնել եւ միաժամանակ լուծել կրթական բոլոր խնդիրները, խնայելով մեր ժողովուրդին արդէն աղէտալի համեմատութիւններու հասած այս նոր բարդութիւնները։

digitised by A.R.A.R.@

Քանի մը էջ առաջ, հանրապետութեան ազգային լեզուին ընծայած Վիկտոր Համբարձումեանի մեծարանքին առիթով, դուք տեսաք Նայիրի Զարեանի ապրած բերկրանքը: Հազուադէպ չեն Հայաստանի մտաւորականներու դրութեանց մէջ ցնծալից նման արտայայտութիւնները: Սահմանադրութիւնն ալ հայերէնը կը դաւանի պետական լեզու, առաջին մայրենի, իսկ երկրորդ մայրենի՝ ռուսերէնը: «Հայոց լեզուն եւ գրականութիւնը դպրոցում» հանդէսին խմբագրականը ինք եւս կը հաստատէ նոյն կարգը.

«Այսօր եղբայր ազգերի մեծ ընտանիքում բարգաւաճում ու ծաղկում է մեր մեսրոպատառ հայերէնը՝ գօրավիգ ունենալով սովետական ժողովուրդների երկրորդ մայրենի լեզուն՝ ռուսերէնը» (էջ 3):

Գործնականին մէջ, սակայն, կարգ մը տեղեր այս դասաւորումը չի պահեր իր ուժը: Առաջինը կը դառնայ երկրորդ, եւ երկրորդը՝ առաջին:

Հայկական միջնակարգ վարժարաններէն ոմանց ձեռք բերած հրճուալի արդիւնքները համապատասխան արամադրութեամբ մը պարզելէ ետք, «Հայաստանի աշխատաւորուհի» հանդէսին (1976, թիւ 6) մէջ, Ռաֆայէլ Իշխանեան կը նշէ նոսա արդիւնաւորին հակապատկերը, տխրալիր իրականութիւնը, սա՝.

«Բայց այս ամէնը վերաբերում է հայկական միջնակարգ կրթութեանը. մինչդեռ չէ՞ որ մեր հանրապետութիւնում տասնեակ հազարաւոր ազգիկներ ու տղաներ արդի գիտութեան հիմունքները՝ հանրակրթական առարկաները մայրենի լեզուով չեն սովորում: Հայերէնն անցքնում են իբրեւ երկրորդ լեզու»:

Հայերէնին երկրորդական տեղ մը տրուած ըլլալու պարագայ մը կը յիշէ նոյնպէս հանրապետութեան վաստակաւոր ուսուցիչ Դ. Գազազեան, իր վերոյիշեալ գրութեան մէջ.

«Ռուսական դպրոցներում հայերէն լեզուին յատկացուած է շաբաթական 28,5 ժամ եւ, պէտք է ասել. որ զարմանալիօրէն առաջին դասարաններում հայոց լեզուին ժամեր չեն տրամադրուած: Եթէ ուսումնական պլանները կազմող ընկերները կարծում են, որ առաջին դասարանի երեխային հեռար դժուար է միանգամից երկու լեզու սովորել, ապա այդ դէպքում ինչպէ՞ս հայկական դպրոցների առաջին դասարանի աշակերտը յաջողութեամբ սկսում է սովորել հայերէնն ու ռուսերէնը զուգընթացաբար եւ մեծ դժուարութիւնների չի հանդիպում»:

Արդարեւ, ինչո՞ւ:

Հայերէնը՝ առաջին մայրենի:

Հայերէնը՝ հանրապետութեան պետական լեզու:

Շատ աղէկ:

Բայց լսուա՞ծ բան է, որ պետութիւն մը իր սահմաններուն մէջ բարձրացած օտար վարժարաններուն զիջի իր պետական լեզուին անդրանկութիւնը երկրորդ լեզուի մը:

Ռուսական վարժարաններու առաջին դասարաններուն հայ լեզուին ժամեր չարամադրելու փաստը, զարմանալիօրէն, կը կրկնուի նաեւ վերջին դասարաններու պարագային:

«Երեւանի համալսարան» հանդէսին (1977, թիւ 2) էջերուն տորագրած «Մայրենի լեզուն հոգատարութիւն է պիրում» անուն յօդուածին մէջ, Ռաֆայէլ Իշխանեան կը գրէ.

«Այս առիթով կարելի է նշել, որ անհրաժեշտ է հայոց լեզուի դասընթացը վերականգնել համալսարանի ռուսական բոլոր բաժիններում: Շատ տարիներ այդ դասընթացը օգտակար դեր է կատարել մայրենի լեզուն չիմացող

digitised by A.R.A.R.@

կամ թոյլ իմացող ուսանողներին հայերէն սովորեցնելու գործում: Իսկ այդ բաժիններում հիմնականում հայեր են սովորողները»։

Ուրեմն,

Հայաստանի ռուսական վարժարաններու առաջին դասարաններու մանուկներուն հայերէնի ժամը չեն յատկացուած, իսկ համալսարանի ռուսական բաժիններէն հանուած են «նախկինում» գոյութիւն ունեցած հայերէնի դասընթացները։

Կը նշանակէ, թէ ռուսական վարժարաններուն ու ռուսերէն բաժիններուն մէջ հայերէնը տեսակ մը միջանկեալ բան է եւ ասիկա հեռանկարային բնաւ չէ։

«Գիտեմ,— *կը շարունակէ նոյն յօդուածին մէջ Ռաֆայէլ Իշխանեան,* — նաեւ ոչ քիչ համալսարանական հայ աղջիկների ու տղաների, որոնք մեր բոլոր մէկ տան անգամ չգիտեն։ Իսկ նախքան հայոց լեզուն ռուսական բաժիններից հանելը վիճակը այդպիսին չէր։ Այլազգիներն իրենց կամքով եւ նախաձեռնութեամբ են հայերէն սովորում, հայ ուսանողների մէջ, ցաւօք, յանախ բացակայում է նման կամքն ու նախաձեռնութիւնը»։

Կ'իմանանք, որ հոս ներկայացուած հայ ուսանողները Հայաստանի հողին վրայ ծնած ու սնած աղուտ ու աղջիկներ են, մեր երկինքին տակ բուսած նոր քաղքենիներուն ճեռերը, հաւանաբար զարմերը գրագէտ, բանաստեղծ, գիտնական, կուսակցական ու պետական այն մարդոց, որոնց այլասերման դրսեւորումներուն հանդիպեցանք անդամ մը։ Հայերէնին ու հայութեան հանդէպ աննախանձախնդիր հոգեբանութեան շաղախումը ասո՞նց գործն է, որովհետեւ՝

«Կան այնպիսիք, յատկապէս այլ հանրապետութիւններից եկած, որոնք փափաքում են մայրենի լեզու անցրնել (ոմանք նաեւ այդ ակնկալութեամբ են եկել Երեւան), բայց աւարտում են Երեւանի համալսարանը՝ առանց հայերէն մէկ տող սովորելու»։

Միւս հանրապետութիւններուն անունները չեն յիշուած Իշխանեանի յօդուածին մէջ, բայց ենթադրելի է, որ Երեւանի համալսարանը փութացած ուսանողներուն մէջ կան Ռուսաստանի երկու մեծ քաղաքներուն մէջ ապրող 365 հազար հայերէն քանի մը տղայ կամ աղջիկ։

Ու կան Վրաստանի մէջ ապրող 443 հազար հայերէն ուրիշներ։

Ու կան Ադրբէյճանի մէջ ապրող 475 հազար հայերէն։

Ու Թուրքմենիստանի մէջ ապրող 27 հազարէն, ինչպէս եւ Ռոստովի, Խարքովի, Կրասնոդարի եւ Մինչին Ասիոյ մէջ «ապրող տասնեակ հազարաւոր հայեր»էն քանի մը տղայ ու աղջիկ, որոնք, անտարակոյս, Երեւանի համալսարանը կու գան իրենց պակսածին, ղլացուածին տէր դառնալու, հայերէն քանի մը բառի խորհուրդին հաղորդուելու, բանաստեղծութեան, պատմութեան մէջ ձուլուելու, կարօտաւառ իրենց հոգիին հարազատ կշռոյթը գտնելու համար գուցէ, եւ ոչ թէ իրենց դիտելիքները ռուսերէնով պակելու կամ հոգին լեցնելու ռուսերէնով, որուն սովէն չէին տառապեր հարկաւ Մոսկուայի կամ Լենինկրատի մէջ, Թուրքմենիստանի մէջ, Ռոստովի, Խարքովի, Կրասնոդարի մարզին մէջ կամ Ասիոյ տափաստաններուն։

«Եթէ մենք,— *կ'ըսուի Երեւանի պատասխանատու ժողովին արտասանուած խօսքին մէջ,* — արդէն մի կերպ հաշտուել ենք, որ Սով. Միութեան տարբեր անկիւններում՝ Ռոստովում, Խարկովում, Կրասնոդարի մարզում, Մինչին Ասիայում ապրող տասնեակ հազարաւոր հայերը, որոնք հայրենական պատերազմից առաջ ունէին իրենց ազգային թատրոնը, թերթը, դպրոցները, հիմա այդ վայրերում, ասենք՝ Աշխարհաղում, չունեն մի փոքրիկ անկիւն,*

digitised by A.R.A.R.@

հաւաքատեղի, գրադարանի ծայրում դրուած հայերէն գրքերի մի պահարան, որտեղ հայ բանաստեղծուհին կարոտանայ թողնել իր հետը նուէր բերած հայերէն գրքերը,— կրկնում ենք, եթէ մենք այս իրողութեան հետ մի կերպ հաշտուել ենք, — ապա չենք կարող եւ չպէտք է հաշտուենք, որ մեր բուն հողի վրայ, հայ գիր ու խօսքի յոյս ու միջնաբերդ հանդիսացող Սովետական Հայաստանում, բացատրելի թէ ոչ բացատրելի պատճառներով, թէկուզ մասնակիօրէն, թէկուզ ինչ որ չափով վտանգուած լինի մայրենի լեզուն, մայրենի գիրն ու կրթութիւնը»:

Ուրեմն, ո՛չ հեռու–հեռաւոր վայրերու մէջ ապրող տասնեակ հազարաւոր հայերուն նախկին դպրոցները վերարանալու կամ նորեր հաստատելու փոյթ մը կայ եւ ոչ ալ նոյն հեռուներէն Երեւան եկած հոգիները մայրենի լեզուին բանալու նախանձախնդրութիւն մը:

Ո՛չ հոն հայոց դպրոց, ո՛չ Հայաստանի համալսարանին մէջ հայոց լեզու:

Այս բախտորոշ երկու զրկանքներուն դիմաց՝ խորապէս ըմբռնելի է հայ մտաւորականութեան դառնութեան բուն պատճառը, որ որակական հիւծումի վտանգ է, որովհետեւ լեզուն կորսնցնող մարդը կը կորսնցնէ նաեւ մտածողութեան ինքնուրոյնութիւնը եւ մտածողութեան ինքնուրոյնութիւնը կորսնցնողը պատկանելիութեան տոմարին մէջ հազիւ կրնայ թիւ նկատուիլ:

Ուրուագծուող վտանգը չի խուսափիր ոչ ոքի ուշադրութենէն:

Թաֆայէլ Իշխանեան կը շարունակէ իր դիտողութիւնը.

«Յայտնի է, որ հայկական միջնակարգ կրթութիւն ստացածի լեզուամտածողութիւնը հայկական է, յանախ թէկուզ բառօգտագործումը հայկականից հեռացող, մինչդեռ այդպիսի կրթութիւն չստացածների լեզուամտածողութիւնը հայկական չէ, բառօգտագործութիւնը՝ նոյնպէս: Նրանք հայերէն խօսելիս մտքում թարգմանութիւն են անում եւ իմացած հայերէն բառերը դնում այլ լեզուական կապակցութիւնների մէջ, ընդ որում, այդ իմացածը նեղ շրջան ունի: Օրինակ, նրանք չեն ասում շինարարական կամ իրաւաբանական, այլ՝ ատրախտելնի եւ իւրիդիչեսկի, փոխառեալ բառերն էլ հայերէն չեն արտասանում. օրինակ, ասում են ոչ թէ շոկոլադ, այլ՝ շըկալադ»:

Արձանագրուած փորձառութեան մէջ պարզ կ'երեւի օտար լեզուով ու մշակոյթով ողողուելու իրականութեան անխորհուրդ բովանդակութիւնը, որ կը սպառնայ աճեցնել ծագումով հայերու թիւը ո՛չ միայն Խորհրդային Միութեան սահմաններուն, այլեւ՝ Լուսաւորչի աստղին տակ:

Հայաստանի ռուսական վարժարանները յաճախող այդ աղջիկներէն ու տղաներէն ոմանք, ինչ–ինչ պատճառներու բերումով, բարձրագոյն կրթութեան համար կը դիմեն հայկական բաժինները եւ վերադարձի համբուն վրայ կը դրսեւորեն այնպիսի ահաւոր վիճակ մը, որ սիրտ կ'արիւնէ պարզապէս:

Այդ մասին վկայութիւն մը, Թաֆայէլ Իշխանեանի ոտորագրութեամբ դարձեալ, «Գարուն»ի (1978, թիւ 11) էջերէն.

«Ի դէպ, հայերէնի ուղղագրութիւնից անհամեմատ աւելի անտեղեակ էին Հայաստանի ռուսական դպրոցների որոշ պատանիներ ու աղջիկներ, որոնք բուհերի հայկական բաժինները ընդունուելու համար միասների նման չեն գրում 4–5 էջանոց շարադրութիւն, այլ գրում են մէկ, մէկուկէս էջանոց թելադրութիւն, եւ որոնք հայերէն ամենասովորական բառերը գրել գիտեն այսպէս՝ պարկել, կաբչել, կաամիռ, բեռ, բաշկոն, թերեռել, աղբիւռ, մանկաղ եւայլն»:

digitised by A.R.A.R.@

Ուղղադրութիւնը՝ այսպէս, չարադրութիւնը՝ այնպէս, լեզուամտածողութիւն՝ ոչ մէկ բանի պէս։ Եւ այս ամէնքը՝ Հայաստանի արտին վրայ...

«Իր զուակներն օտար համալսարաններն ուղարկող Հայաստանն այսօր, — կ'ըսէ Սիլվա Կապուտիկեան իր «Խնամնկար»ին (էջ 14) մէջ,— ինքն է իր համալսարաններում ընդունում ուրիշ երկրներից եկած ուսանողներին»։

Այդ ճիշդ է, հոյակապ է, սիրտ ուռեցնող է, բայց այդ մի՞ւսը ինչ է։ Եւ ո՞րն է աւելին արդեօք, դուրսէն ընդունուած աշակերտներո՞ւն թիւը, թէ ներսէն օտար վարժարաններուն յանձնուածներուն թիւը...

Կը հրճուինք, ի սրտէ, առաջիններուն դիւրութիւն ընծայելու ուժ կուտակած եւ իմաստութիւն ունեցող հայրենիքին համար, ինչպէ՞ս զսպենք ապկայն այն դառնութիւնը, որ նոյն հայրենիքը իր ծոցին մէջ արիւնաքամ կ'ընէ իր երկինքին տակ հասակ նետող մտաղաշ հոգիները եւ երեսի վրայ կը ձգէ միւս հանրապետութիւններէն իրեն գիմող կիսով կամ ամբողջովին ուծացած հայ աղջիկներն ու տղաքը։

Հայաստանի Գիտութեան ակադեմիայի լոյս ընծայած «Հայ ժողովրդի պատմութիւն» չորքին եօթներորդ հատորին մէջ, «Հայկական Սփիւռք»ի մասին խմբագրուած միտումնաւոր չեղչակոյտին ծալքերուն կան մեր ապրած փորձառութիւններուն եւ անոնց դառն հետեւանքներուն վերաբերող մէկ-երկու ճիշդ հաստատումներ, որոնք միաժամանակ լոյս կը նետեն ռուսերէնի տիրապետութեան կապակցութեամբ Հայաստանի մտաւորականներուն ապրած տագնապին խոր պատճառներուն վրայ.

«... Ֆրանսիայում եւ Ամերիկայում դժուարանում է հայկական դրպրոցի ստեղծումը։ Կատարւում են յամառ փորձեր, բացւում են նախակրթարաններ, դպրոցներ մասնաւորապէս Մարսելում, Փարիզում, Ամերիկայի Միացեալ Նահանգների մի քանի քաղաքներում, բայց տարիների ընթացքում բոլորն էլ փակւում են եւ հայ երիտասարդութիւնն ստանում է բացառապէս օտար դաստիարակութիւն, տագնապալից արագութեամբ տեղի տալով օտարացման, ձուլման վտանգին» (էջ 581)։

«Հայ ժողովրդի պատմութիւն» հատորին պատմածը մեր կեանքն է, որ իր դառնագոյն մանրամասնութիւններով ծանօթ է մեզի։ Այդպէս եղաւ։ Կարգ մը երկիրներու մէջ չկրցանք դպրոց ոտեղծել, ստեղծուածը չկրցանք պահել ու մեր երիտասարդութիւնը «տագնապալից արագութեամբ տեղի տալու օտարացման, ձուլման վտանգին»։ Այսքանը գիտէինք, աւելին նոր գիտցանք, ա՛յն՝ որ օտար դաստիարակութիւնը, Ֆրանսայի մէջ ըլլայ թէ Ամերիկայի, եւ կամ Հայաստանի արտին՝ կը յանգի նոյն ողբերգութեան, մենք կ'ունենանք աղջիկներ ու տղաք, «որոնք մեսրոպեան մի տառ անգամ չգիտեն», կ'ունենանք ուրիշներ, որոնք մեր չինարարականը կամ իրաւաբանականը կը վերածեն կոկորդ պատռող ատրպիտելնի եւ իւրիդիչեսկի, եւ ուրիշներ, որոնք չեն կրնար ա՛նգամ մուրճին երկուրեակը ճիշդ գրել, կը գրեն մանկաղ, եւ յեղափոխութեան խորհրդանշան գոյնին կու տան անճանաչելի տեսք մը՝ կարմիր...

Հայկական վարժարաններէն անցած ու հայ ուսուցիչի մը կամ ուսուցչուհիի մը չունչը հեղ մը զգացած տղան, որքան ալ հեռու մնացած ըլլայ ապառուած արդինքէն, պակսած ժամերով խոցուա՛ծ ըլլայ մայրենի լեզուին հաշուոյն կուտակած իր տարիքը, չի կրնար բոլորովին անոյշ մէկը ըլլալ, կրնայ իր մտքին ու հոգիին բաց մնացած անկիւններուն համար լրացուցիչ տարրեր հաւաքել ամէն վայրկեան, տեսնել պատմութիւնը ամէն վայրկեան,

digitised by A.R.A.R.@

զգալ գրականութիւնը, լսել լեզուն, ձուլուիլ անոր մէջ, ձուլել անոր տարերքը իր էութեան, որովհետեւ հոն՝

Ծառերը հայերէն են խօսում,
Քարերը հայերէն են խօսում...

Հայաստանը Հայաստա՛ն է ի վերջոյ, եւ Հայաստանի հայկական վարժարաններէն է, որ մեզի եկած են Մուշեղ Գալշոյեանն ու Բազմիկ Դաւոյեանը, Հրանտ Մաթեւոսեանն ու Հենրիկ Էդոյեանը, Վարդէս Պետրոսեանն ու Արմէն Մարտիրոսեանը, Պերճ Զէյթունցեանն ու Ալբերտ Կոստանեանը, Նորայր Աղալեանն ու Ալեքսանդր Թոփչեանը, այս, բարոյական բովանդակութեամբ թոյլ եւ նիւթական առումով թերի, այնուամենայնիւ բացառաբա՛ր հայկական վարժարաններէն եւ ոչ թէ ի վնաս անոնց զօրացած, զօրացուած ռուսական վարժարաններէն։ Երեւակայել անգամ հնարաւոր չէ, որ ռուսական վարժարանները կրնան նման ընձիւղներ տալ մեր ժողովուրդին, ինչպէս չի կրնար տալ օտար որեւէ վարժարան։ Հայկական վարժարան յանախած յիշեալ արձակագիրներուն, բանաստեղծներուն, քննադատներուն եւ իրենց ընկերներուն օրօք ռուսական վարժարան յանախած «տանեակ հազարաւոր» տղոց ու աղջիկներուն մէջ ի վերուստ օժտեալ ով գիտէ քանի՛ խմորներ կային, որոնք խամրեցան՝ իրենց թաքուն դանձերուն յարութիւն տալու անընդունակ օտար լեզուին ու ժլակոյթին հետեւանքով, եւ ով գիտէ քանի՛ ուրիշներ կը խամրին այսօր, նո՛յն պատճառներով, երբ մենք, մեր դաժան բախտին զոհաբերած ընտիրներուն պարապը լեցնելու հարկի մը տակ կը գտնուինք, թարմութեան պէտք ունինք, հայրենիքէն միայն ակնկալելի լոյսի՛, եւ բնաւ չենք կրնար մեր հնարաւորութիւնները յոմպէաս վատնել, զոհել քաղքենի բարքերու։

Բոլոր պարագաներուն՝ մատնանշուած վէրքը թեթեւ չէ, ու պատճառը միշտ նոյնն է,— ռուսական վարժարաններուն ցանցը, ուր «կը յանախեն տասնեակ հազարաւոր աղջիկներ ու տղաներ», որոնց ո՛չ բառը առողջ է (վերն է պատկերը), ո՛չ լեզուն որակ ունի (զգացիք աւելի առաջ), ոչ ալ լեզուամտածողութիւնը հայկական է (բո՛ւն աղէտը)։

Մենք յաղեցած ենք օտար վարժարաններու հետ ունեցած մեր յարաբերութեանց դառն հետեւանքներէն, Սիփիւռքէն շատ առաջ, հարիւր տարիներու երկայնքի մը վրայ, հայահոծ գաղութներէն մինչեւ հայրենի Սոփաց աշխարհը ու մինչեւ Կիլիկեան ափերը, միսիոնարական Ռոպերթ, Եփրատ եւ նոյնաբնոյթ գոլէճներուն առուած անհաշուելի մեր հարկերով։

Ահա, այդ իրողութեան կսկծալի մէկ պատկերը, Յ. Օշականի գրչով, «Համապատկեր»-ի առաջին հատորին մէջ.

«Ու կը ծանրանամ ուրիշ փաստի մը, այս անգամ կրօնականէն անդին տարողութեամբ մը։ Ատիկա Պոլսոյ մէջ շրեղ միջնաբերդն է, հանրածանօթ Ռոպերթ գոլէն անունով, որուն մեծատարած փառքը չէ, որ կ'ուրանամ — թող հոգին լուսաւորէ Տէրը այդ միլիոնատէրին, բայց չմոռնայ անկէ պահանջելու, դատաստանին օրը, հաշիւը իր դրամով գործուած չարիքներուն, քանի որ այդ անունով կանգնած հաստատութիւնը Արեւելքը ապասարկելի զատ բիչ բան ըրաւ — այլ մեր գրականութեան վրայ անուղղակի ի գործ դրած չարաղէտ ազդեցութիւնը կը ջանամ հասկնալ։ Ոչ ոքի գաղտնիք է, որ 1876էն առաջ (այս թուականը այդ գոլէճին հաստատումն է Պոլսոյ գեղածիծաղ ատիւնմենրուն), Արեւմտահայ գրականութիւնը գեղեցկութիւն մըն է, վարկ մը, նոյնիսկ փառք մը։ ...։ 1876էն ետքը, միշտ այդ չարաշուք ուսումով, մեր առեւտրականներու, ուսուցիչներու, աւագանիին միտքը տարուեցաւ հանրային*

digitised by A.R.A.R.@

սպասէն ձեռնթափ ըլլալու քաղաքականութեան մը, եթէ երբեմ այդ սպասը կրօնականէն տարբեր նպատակներ ունենար։ Մեր հարուստներուն տղամը, մեր մտքին ամէնէն ընդունակ տարրերը կորզուեցան մեզմէ, շատ-շատ՝ պատուելիներու, տրտմունակ, բրածոյ փրոֆեսէօրներու փոզանգ մը պարգեւելու համար մեզի, երբ կարօտ էինք այնքան իրաւ ուժերու։ Ու փաստերուն փաստը· մեր գրականութիւնը, իր սպասին համար, եղաւ ստիպուած գոհանալու անհատական խեղճ ու պատառ ձեռնարկներէ (Շահնազարեան, Պէրպէրեան, Մէզպուրեան վարժարանները· աւելի ուշ՝ կեդրոնականը) դուրս եկած կամ պարզագոյն նախակրթութիւնն իսկ չունեցող տղոց ուժերուն, մինչ ամէն տաբի տասնեակներով առուտրականներ կը հանդիպուէին միշտ այդ գոյէնին մէջ պանքաներու, դիւանագիտական ասպարէզներու, միջազգային մեծ ընկերութիւններու գործածութեանց, մեր հասարակութեան լաւագոյն ուժերը այս կերպով մեզմէ գողնալով։ Ոչ մէկ անուն, որ մեզի ըլլար եկած այդ իմաստի վառարանէն» (էջ 107–108)։

Հիմա աւելի փայլուն չէ մեր կացութիւնը, կեանքը Ռոպերթ եւ Եփրատ գոլէճներու վերածեց նոյնիսկ մեր ամէնէն փայփայած վարժարանները, որոնցմէ շատ աւելի թիւով պատուելիներ դուրս կու գան ու պատուելիի հեռանկարով տեսակ մը մարդեր, դիւրակեցութեան ուխտաւորներ, եւ քիչեր միայն, շատ քիչերը կը փորձեն ապասարկել մեր գրականութեան, մշակոյթին ու հաւաքական ճակատագրին։ Ինչ ճիգեր կը վատնենք ամէն օր, որքան մեծ զոհողութիւններու յանձնառու կ'ըլլանք ամէն տարի եւ թաւալող ժամանակին հետ որքան կը ծանրանայ բեկումներու շղթան մեր ուսերուն։

Մղուած աշխատանքին համեմատ շատ քիչ արդիւնքներու կը հասնինք հոս, շատը կը սպառենք Հայաստանէն, ու Հայաստանը՝ ուրիշ ցաւ։

Ճիշդ կ'ըսէ Հայաստանի մէջ արտասանուած խօսքը·

«Նշենք թէկուզ այն անդրադարձը, որ կ'առաջանայ արտասահմանի հայութեան թէ՛ բարեկամ, թէ՛ հակառակորդ շրջանակներում, երբ մի օր հաստատուի այն իրողութիւնը, թէ հայ մշակոյթի, հայ գիր ու խօսքի յոյս եւ պատուար հանդիսացող Սովետական Հայաստանում, թէկուզ ինչ որ չափով, թէկուզ որոշ ծնողների հաշուենկատութեան հետեւանքով վտանգուած է մայրենի լեզուն եւ մայրենի լեզուով կրթութիւնը»։

Տեղ մը իր ապրած ամբողջական զրկանքին եւ այլուր ստացած քիչ արդիւնքներուն առիթով, հայ ժողովուրդը իր սրտաբեկումներէն ոմանք յաճախ հակակշռած է՝ հայրենիքին յառելով իր հայեացքը, եւ դիւրին չէ իրապէս ականջալուր ըլլալ հայրենիքին մէջ պաթղուած հայրենական արքութիւններուն անմիջաբար կացութիւնը յուշող նման ճիչերու...

digitised by A.R.A.R.@

Ա.Ի. ԻՍԱՀԱԿԵԱՆ

Գ.– ՆԱՄԱԿՆԵՐ՝

ՍԻՄՈՆ ՅԱԿՈԲԵԱՆԻՆ

21

12 յունվ. [1]922, Վենետիկ.

Սիրելի Սիմոն,

Ստացայ նամակդ. լաւ կը լինի, որ տանս հասցէին գրես, որ շուտ ստանամ:

Համաձայն եմ, որ «Արաքսի ծնունդը»ի վերջին երկու տունը հանես, սակայն վրան գրես թէ «Ուս.[տայ] Կարօից, եւ աշուղ Վշտալիի վրոյցը», որովհետեւ ես այնպիսի գոյն եմ տուել, որպէս թէ պատմողը աշուղ է, այլակերպ(1) ուրիշ տեսակ գրած կ'լինի: Հարկ չկայ որ առաջին էջերի վրայ(2) շարես:

Երեւի ստացել ես արդէն Սասմայ Մհերը. եթէ տպելու ես, եւ ուշ չէ, խնդրում եմ վերջի պարբերութիւնը այսպէս փոխես:

...«Երբ ռամիկ ուզենայ
այս երկու տողը.

Դուրս կուգամ էն պահ՝
Աշխարք աւերեմ,
Ռամկութիւն բերեմ,
Ռամկի իրաւունք
Եւ մարտիրոսիմ
Մէջ էդ սուրբ կռիւն»:

Սակայն եթէ սուրբ բառը գտնես ռոմանտիկ(3), ճոռոմ, պաթեթիկ(4), կ'ուզես այսպէս տպիր.

Ու մարտիրոսիմ
Էդ կռի միջին:

digitised by A.R.A.R.@

Ինձ թւում է, որ սուրբը տեղին է, յարմար է. մի խօսքով երկմիտ եմ: Այլեւ ոչ մի փոփոխութիւն: Իսկ վերեւի երկու տողը անպատճառ. առաջին վարիանտը արձակ զոյն ունի:

Սրա հետ ուղարկում եմ այս պրոյցը. **Սփոփանքը** (5):

Գրիր, ի՞նչ ես անում, ի՞նչ ես գրում: Բարեւներ եւ համբոյրներ.

Քո ԱՒԵՏԻՔ.

A. Issahakian.
2266, Dorsoduro.
De Marchi.
Venezia.

---

(1) *Բնագրում՝ ապագա։*
(2) *«Արեգ» հանդէսի։*
(3) *Ֆրանս.* romantique։
(4) *Ֆրանս.* pathétique։
(5) *Նա երկերի ժողովածուի՝ «Ինչո՞ւմն է սփոփանքը»։ Բոլոր ընդգծումները մերն են։*

22

20 յունվ. [1922], Վենետիկ.

Սիրելի Սիմօն, մեծ ուրախութեամբ ստացայ նամակդ եւ գրքերը. միայն շա՜տ ցաւ պատճառեց, որ տնից գէշ լուրեր ունես. ի՞նչ է արդեօք, քաղցած են թէ մահ կայ... Ես էլ շատ գէշ լուրեր ունեմ.բայց պիտի տանել. դարը լիքն է թոյնով. պարապմունքի մէջ պիտի գինովնալ ու մոռանալ. ուրիշ ճար չկայ:

Քանի որ շա՜տ հաւանել ես Մեները, ուստի դա նուիրում եմ քո սիրելի անւանը, անպատճառ. վրան գրիր.

Սիրելի Սիմօն Յակոբեանին,
Սրտագին նուէր հեղինակից:

Այս նոր աւելցրած կտորները խնդրում եմ իր տեղերին դնես (1). թէ աւելի կը նպաստէ Մեների հոգեբանական պարզացման, եւ թէ կ'գեղեցկանայ ու կը ճոխանայ: Այդ պոէմը գրել եմ երեք-չորս օրուայ մէջ, եւ հակառակ իմ սովորութեան իսկոյն յանձնեցի հրապարակման. եթէ մօտ (2) պահէի մի-երկու ամիս, շա՜տ ուղղումներ կ'անէի: Հիմա այդպէս եմ վարւում գրածներիս հետ, իսկ առաջ՝ թանաքը չչոչորացած՝ հրապարակ կհանէի: Եթէ օրը գայ, որ առանձին տպեմ, այդ միջոցին սրբագրութիւններ կանեմ:

Կը խնդրէի ապատ ժամեր գտնես, եւ նկատողութիւններդ անես. ես էլ ուզում եմ, որ սա անպակաս բան լինի, քանի որ գաղափարը միջի՝ մեծ է, ոգեւորիչ. անմահ. եւ գէշ չէ գրած՝ սեղմ է, ուժեղ:

Եթէ Աստուած կեանք տայ, դեռ շա՜տ բան կը գրեմ.

digitised by A.R.A.R.@

«Քանի ողջ է Սայեաթ Նովան,
Հա՛տ բան կտեսնիս, քամանչա՛յ»:

Օբլոմով պէտք չէ, արդէն կարդալու շա՞տ բան ունիմ:
Բարեւներ Սոֆիից, համբոյրներով

Քո ԱՒԵՏԻՔ

Խնդրում եմ շուտով պատասխանես մի բաց նամակով ստանալնիդ (3):

(1) *Մեր ենթադրութեամբ* (1920 *թ.*) *փետր. 8ին Ս. Յակոբեանին արդէն գրել էր, թէ «Գրում եմ հիմա Սասունցի Դաւթի որդու Մհերի պոէմանց», Քանի որ չգիտենք, թէ ո՛ր նամակի հետ ո՛ր յաւելումներն է ուղարկել, ուստի գրանք միատեղելինք այս տարուայ փետր. 10ի կամ ստորեւ 27րդ նամակից յետոյ։ Սակայն 29, 30, 31, 33 եւ 35րդ նամակներում էլ յաւելումներ եւ ուղղումներ կան։*

(2) *Կարդա՛ «մօտս»։*

(3) *Կարդա՛ «ստանալդ»։*

23

21 *յունվ.* [1922, Վենետիկ]

Սիրելի Սիմօն,

Երէկ ուղարկեցի նոր կտորներ Ս[ամայ] Մհերին. այսօր էլ ներփակները (1):

Վախենամ ուղղումների մասին խճճուես. խնդրեմ ուշադիր լինես:

Կը ստանաս եւ «Գարունը». եթէ չհասանես, խնդրեմ յետ ղրկես, կը պահեմ մի ուրիշի համար:

Մոռացար գրել Նարինեանի հասցէն, եւ հանգուցեալ Հ. Բարնաբասի (2) մօտ թողած գրքերիս մասին: Եթէ անյարմար է, ասա, ես գրեմ, ո՞ւմ գրեմ:

Բարեւներով քո ԱՒԵՏԻՔ

(1) *Տե՛ս ստորեւ 27րդ նամակից յետոյ։*

(2) *Ակրաէա, փոքր. Բասնապասի։*

24

23 *յուն.* [1922, Վենետիկ]

Սիրելի Սիմօն,

Նորից ուղղումներ (1). հոգիդ հանեցի. պատճառն այն է, որ շա՞տ ըշտապ ուղարկեցի քեզ. եւ նկատում եմ, որ շա՞տ բացեր կան պոէմի մէջ. հիմա թւում է ինձ լրիւ:

Սակայն թէ չես կարող մէջէն ելլել՝ կը գտնես խճճուած ուղղումներս,

digitised by A.R.A.R.@

լաւ կ'անես բոլո՛ր ինձ յետ ուղարկես բնագրի հետ (սրանով չորս նամակ), մի լաւ ուղղեմ, եւ յետ ուղարկեմ քեզ. (շա՛տ էջերը չունեմ մօտս, թղթերը կորած են):

Բերդի մասին փոփոխելս շա՛տ հիմնաւոր է. Գարեգ[ին] Եպիս. Յովսէփեանի(2) վարիանտով Մեր Զկիրու գետը բարի Նպատակով է երկու մասի բաժանում, իսկ բերդը շինում է Սասուն (թէեւ այնտեղ էլ է շինում բուրջ-բալակ), եւ մինչեւ այսօր էլ կոչւում է Մեերի տապան:

Այս խմբագրութիւնը աւելի յարմար է. եւ ճիշդ:

Հօրեղբօր վարմունքն էլ պարզել անհրաժեշտ էր, որ կուզէին Մեերի տեղ իրենց որդին ժառանգել տալ Զոչենց աթոռքին:

Հ. Արսէն Ղապիկեանը(3), որ հասկացող մարդ է, նրա մօտ կարդացի, հիացաւ, ասաց որ աննման պօէմ է, թէ ձեւը, թէ գաղափարը: Հա՛տ ուրախ եմ:

Միայն խնդրում եմ ուղղումներս չարհամարհես. եթէ բնագիրը չես կարող ղրկել, խնդրում եմ անպատճառ սրբագրութիւնը ինձ ուղարկես մի օրինակ, որ տպելուց առաջ տեսնեմ, թէ կարգին ես տեղաւորել:

Կուզէի, որ առանձին գրքոյկով արտատպենք, գոնէ մի 1000 օրինակ, գրիր՝ ինչքան ծախս կը նստի. թերեւս ի վիճակի լինեմ ծախսը քաշելու: Տառերը կը դնես «Բանաստեղծի երգի» տառերը. լաւն է:

Սպասում եմ նամակիս պատասխանին:

Էլ ուղղումներ չեմ անի. միամիտ կաց:

Թէ կինս եւ թէ տղաս ողեւորուած են պօէմով. կինս կուզէ որ տպուի առանձին: Բայց չմոռանաս քո անուանդ(4) նէրը դնել:

Համբոյրներով Քո ԱՒԵՏԻՔ

Արտատպման թուղթը լինի «Արեգ»ի թղթից. կարծում եմ, որ 1000 օրինակը շատ շուտ կը վաճառուի. մանաւանդ Կովկասում:

---

(1) «Մասմայ Մհերում», տե՛ս տարեւ. 27րդ նամակից յետոյ։

(2) Գարեգին Յովսէփեան (1867–1952), *մշակութային գործիչ, մանկավարժ, հայագէտ, կաթողիկոս Մեծի Տան Կիլիկիոյ* (1943, *օծումը* 1945*ին* — 1952 *թթ.*)։ *Աւ. Իսահակեանը նկատի ունի նրա «Փշրանքներ ժողովրդական բանահիւսութիւնից» հրատարակութիւնը* 1892*ին, որից են «Մասմայ ծռեր» դիւցազներգի նոր պատումները։*

(3) Հ. Արսէն Ղազիկեան (1870–1932), *վենետիկ — Մ. Ղազարի Մխիթարեան Միաբանութեան անդամ, մատենագէտ, թարգմանիչ, բանասէր, մանկավարժ։*

(4) *Դարձեալ է կարդալ նաեւ «անուանդ» բնագրում։*

25

2 փետվ. [1922], Վենետիկ

Սիրելի Սիմօն,

Ծրարդ հէնց այսօր առաւօտ ստացայ, ճաշից յետոյ ուղարկում եմ. չգիտեմ ինչո՞ւ էր փոշտը(1) ուշացրել:

Նարինեանի թերթը(2) ստացայ. գոհ եմ հռանգից, ուզում եմ մասնակցեմ, խիղճս մի քիչ վրդովուած է... Քրիստափոր, Սիմօն Ռոստոմ, Վա[...՞] ... վախենամ քանդուի դաշնակցութիւնը. գուցէ եւ վերանորոգի. դեռ մտածում եմ, մտածում... դրա մասին յետոյ:

digitised by A.R.A.R.@

Դառնանք «Միերին».

Մի քիչ էլ ուղղեցի. հիմա գոհ եմ:

Կարծում եմ, որ երկու նաագով տպիր. ա. բ. գլուխները, մինչեւ 19 էջը, մնացածը երկրորդ անգամին: Բայց սա աւելի քեզնից է կախուած, դու գիտես թերթիդ տեխնիկան (3):

Առանձին տպագրութեան համար. եթէ «Արեգիդ» թուղթը չգտար, նմանը գտիր. շապիկը պայծառ լինի, կապուտ (երկնի), կանանչ, դեղին, կամ վարդի-գոյն. ոչ՝ մռայլ:

Տառերը նոյնը: Ֆորմատը (4) փոքրիկ. հանդէսդ մեծ է. ֆրանսական գրքերի ֆորմատով: Ծախսերին կ'մասնակցեմ, գրի՛ր թէ ինչ կը նստի, 1000 օրինակ. քաւ է:

Գրուածքի ժանրը (5) չ'որոշեցի. չեմ ուզում «Պոէմ» բառը դնել, ոչ էլ քերթուած, լեգենդ (6), եւայլն, գուցէ հաւանես, եթէ կոչեմ «Վիպասք կամ Վիպերգ» (7) կամ պարզապէս «Վէպ» — ուզում եմ ասել՝ Էպոս (8): Ստամիդ կարդ, տես ո՞րն է յարմար, եւ դիր.

«Աւ. Իսահակեան.
Սամայ Միեր.
Վ...
Իմ սիրելի Սիմօնին
սրտագին նուէր» (9).

Կէտերի վրայ հսկիր. տեղին դի՛ր, ես շտապեցի: Կարծեմ ֆրանս. ֆորմատն էլ մի քիչ մեծ է. այնպէս լինի, որ բաւական հաստ թաւ, մօտ մի 50 երես (10):

Շտապում եմ, որ փոստին հասցնեմ:

Համբոյրներով

ՔՈ ԱԻԵՏԻՔ

---

(1) *Այսինքն՝ փոստը, թղթատարը, ֆրանս.* poste.

(2) «*Բանուոր*» *կոմունիստական թերթ, Ամերիկա, խմբագիր՝ Սիմէոն Նարինեան (համակ 35, ֆ. 5)*:

(3) *Առանձնայատկութիւնը, ձեւաւորումը, պատրաստելու ձեւը*:

(4) *Ֆրանս.* format, *չափերը*:

(5) *Տեսակը, ֆրանս.* genre.

(6) *Ռասպել, ֆրանս.* légende.

(7) 1922 *թ. առանձնատիպի անուանաթերթում այս բառն է*:

(8) *Ֆրանս.* épopée «*դիւցազնավէպ, դիւցազներգութիւն*»:

(9) *Ընդծումը մերն է*:

(10) *Առանձնատիպը* 54 *էջ է*, 19,5 × 14,5 *սմ*:

[Նամակի վերջում, Աւ. Իսահակեանի կնոջ ձեռագրով]

Սիրելի Սիմօն.

Ինձ շնորհաւորում էք որ Աւետիքը ամուսնանալուց յետոյ էլ տալիս է գեղեցիկ գործեր. բայց մոռանում էք որ հէնց ամուսնանալուց յետոյ է որ նա տուել է իր գեղեցիկ գործերը եւ մնայունը, օրինակի համար «Աբուլ Ալան», «Ուստա Կարօն», եւայլն:

Ջերմ բարեւներով
ՍՈՖԻ ԻՍԱՀԱԿԵԱՆ

(Շար. 5)

digitised by A.R.A.R.@

«ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԱՍՊԵՏՆԵՐ»

(ԿԱՐՕ ՓՕԼԱՏԵԱՆ)

Ֆրանսահայ արձակագիր Կարօ Փօլատեան անցեալ տարի (1982) լոյս ընծայեց «Արդարութեան ասպետներ» խորագրով թատերախաղը, որ թատերականացումն է իր «Կրակէ շղթիկը» վէպին։

Սոյն գործը, իր ընդգրկած հինգ հատորներով, կը ներկայացնէ Ֆրանսա գաղթած հայ ընտանիքի մը ողբերգութեան հետ կապուած ազգային թէ համամարդկային բնոյթ ունեցող կարգ մը վիճակներ։

Գլխաւոր հերոսը՝ Վրէժ, թելադրուած բարոյական սկզբունքներէ՝ կը տարապի թատերախաղը հունաւորող հիմնական չորս տագնապներու հաշուոյն եւ կը ձգտի յաղթահարել զանոնք՝ արդարախոհ նախանձախնդրութեամբ։

Այսպէս, առաջին հերթին, ան կը տագնապի խորհրդաւոր պայմաններու տակ խենթացած եւ ֆրանսական հիւանդանոցի մը մէջ գտնուող դոյութեան մը մասնուած եղբօրը՝ Սերօրի ճակատագրով, որուն պարագան կը պարզուի նախ հիւանդապահուհիին եւ ապա եղբօրը հետ ունեցած զրոյցով։

Վրէժի երկրորդ տագնապը կը վերաբերի իր ամուսնական դժբախտ կեանքին, որ կը քողարկուի Արթին Ճակաբեանի կողմէ՝ հիւանդանոցի պարտէզին մէջ իրենց պարագայական ծանօթացումով։ Մինչեւ Արեւելքէն Ֆրանսա գաղթած աւանդական հայու տիպարն է Արթին Ճակաբեան, որ չհանդուրժելով Ֆրանսացի սուհակի մը հետ իր կնոջ ապօրինի կենակցութեան՝ այս վերջինս ծեծած ըլլալու ամբաստանութեամբ, նեռուած է հիւանդանոց՝ իբրեւ խելագար։

Եղեռնէ յիշատակութեան գծով ստեղծուած տագնապը Վրէժի եւ հօրը՝ Արմէնի միջեւ, զարմեալ հիւանդանոցի պարտէզին եւ ապա սրճարանի մը մէջ, կը գոյացնէ հակադիր մօտեցումներով բնորոշ կացութիւն մը, ուր Վրէժ կը մերժէ Ապրիլեան ազատանին առիթով խօսք առնելու հարը առաջարկը, ա՛յն համոզումով, թէ Եղեռնը, ոչնչացման հանդիսութենէ մը աւելի՝ յարատեւ պայքարի դիտակցութիւն է։

Չորրորդ տագնապը, իր մարդկային առանձնայատուկ դիմագծով՝ կ'ազդարարուի իտալացի սրբազան հարանատիրոջ՝ Անճելոյի ընտանեկան դժբախտութեան հետ, որուն աղջիկը՝ Անիթան, վեց շաբաթներէ ի վեր լքած է տունը եւ հեռացած՝ Ֆրանսացի կաւատի մը հետ։ Երիտասարդ զաւակին վերահաս մահէն եւ կնոջը անբուժելի հիւանդութենէն ետք, յաւելեալ բեռ մըն է իր աղջկան անմիջիջոր կորուստը, զոր վերապահելու մղձաւանջով կը տագնապի ծերունի Անճելոն։

Կ. Փօլատեան վերոյիշեալ չորս տագնապները կը զարգացնէ դէպքերու եւ տեսարաններու յաջորդական եւ լրացուցիչ շաղկապումով, որով հասարակաց դժբախտութեան մասնուած ենթակաները ի վերջոյ կը խմբուին միատեղ, իւրաքանչիւրը իրագործուած իր բողմանքին համապատասխան ոգեւորութեամբ։ Գերագոյն պահը Ապրիլ 24ի ոգեկոչման օրն է, որ կը հանդիսանայ յուսաշրջիլ եղբայակումը արդարութեամբ խորհրդանշուած իրենց բարոյական յաղթանակին։

«Արդարութեան ասպետներ»ու հիմնական թեման թուրք մը ահաբեկելու արարքն է, որուն չուրջ կը թաւալին թատերախաղին միւս տագնապները, իրենց յարակից գործողութիւններով։ Վրէժի ամբողջ մասնակցութիւնը կեդրոնացած է Եղեռնէն թելադրուած վրիժառու այս արարքին վրայ, զոր իբրեւ անբուժելի դժբախտութիւն անհրաժեշտ կը նկատէ ենթարկել «վիրաբուժական գործողութեան»։ Հետեւաբար, բացարձակ գաղտնապահութեամբ կը ձգտի իրագործել այդ գործողութիւնը», որուն զուգահեռ միւս տագնապները եւս կ'առնեն ընթացք նոյն գաղտնաբաղ պայմաններուն տակ՝ մինչեւ աւարտը թատերախաղին։

Հինգերորդ կամ վերջին արարին մէջ միայն բոլոր գործողութիւնները կը հասնին իրենց լրու-

digitised by A.R.A.R.@

մին, կը գտնեն իրենց զգացական բիւրեղացումը, ուր ամէն ճշմարտութիւն կը քողազերծուի իր յետին մանրամասնութեամբ եւ ամէն տագնապ կը փոխակերպուի կենսախայտ ցնծութեան։

Այսպէս, Անահիտ Մարգարեան, յայտնելէ ետք Հիւսէիք եւ Իզաակ Նահապետներով քոզարկուած իր ինքնութիւնը, կու տայ անհրաժեշտ լուսաբանութիւն այն արկածին չուրջ, որուն պատճառաւ ո՛չ միայն կը խաթարուի Սերոբի մըտային գրութիւնը, այլեւ տարաբախտ հայուհին եւս կը առանց անշնչելի վերք մը՝ իր ականջին եւեն։ Անահիտի համոզիչ փաստարկութիւնը եւ հայկական կաղմակերպութեան է ապա տրամադրած նիւթական իր համեստ մէկ ինայողութիւնը առաւել եւս կը ջերմացնեն նոյն ձգտումով պայծառացած մթնոլորտը։

Ջհանդուրժելով կնոջէ՝ Սիւքիէն ապաբտոյ վարմունքին՝ վրէժ կ՚ամուսնալուծուի օրինական ճամբով եւ կը վերամուսնանայ Անահիտին հետ։

Շնորհիւ Հայ մարտական տղոց՝ Անիթան կ՚ազատագրուի Ֆրանսայի կաւատին ճիրաններէն եւ հօրը հետ կը նուիրուի հայանպաստ գործունէութեան։

Եւ, վերջապէս, թուրքի մը ահաբեկման լուրը անխառն ոգեւորութեամբ կը մաղթեցնէ Ապրիլեան խորհուրդով պարուրուած պահը, որուն համազգային ըմբռնումը կը գրեւորուի վրէժի Եղրափակիչ այն ճառով, թէ՝ «Վերջացա՞ծ է նրկարատեւ սուգի ժամանակաշրջանը։ Հայոց փոքրիկայոյզ ու փառապանծ պատմութեան մէջ՝ այսօր կը բացուի նո՛ր էջ մը։ Ա՛ն պիտի գրուի ցեղասպան թշնամիին արիւնով, ու մնա՛ւ, եթէ հարկ ըլլայ, մե՛ր արիւնով։ Այլեւս չկա՞ն Հայկ, Անդրանիկ, Սուրէն ու Վրէժ, այլեւս չկան Սիրանոյշ, Անահիտ եւ Աստղիկ, այլ կա՛ն, կրակէ շապիկ հագած, իրենց կեանքը մեր Սրբազան Դատին նուիրած՝ Արդարութեան Ասպետներ» (էջ 126)։

Ինչ կը վերաբերի իր դերին Թատերագրական ձեւին, նկատելի է, թէ Փօլատեան չորս արարներէ բաղկացած լոյն բաժին մը կը յատկացընէ իր հարցադրած չորս տագնապներուն զարգացման հղանակին, պատկերացնելով զանոնք ուրուագծային տարտամութեամբ կամ համառօտ ակնարկութիւններով, ինչպէս կը պարզուի Սերոբի խաթարուած յիշողութեան եւ Անիթայի առեւանգման զարգացումներով։ Եթէ այս վերապահութիւնը կը թելադրուի թատերախաղը հետաքրքրական դարձնելու հեղինակին դիտաւորութենէն, այսուհանդերձ, նկատելի է դէպքեր եւ վիճակներ պատմողական ընոյթով ներկայացնելու իր գրելակերպը։ Փօլատեան չէ կիրարկած ոգեւալ նիւթ մը երկխօսութեամբ թատերականացընելու միջոցը, սակայն թէ ինչու իր հերոսները կը պատմեն ասելիք, քան թատերական գործողութիւններով կը յայտնաբերեն իրենց համապատասխան տագնապները։ Ցատկանշական է Անճելոյի պարագան, որ բարոյագիտական կարծիքներու փոխանակումով կը պատմէ իր սեփական գժբախտութիւնը։

Այսուհանդերձ, «Արդարութեան ասպետներ»ը իրապաշտ գծերով կը պատկերացնէ յետեղեռնեան պայմաններու տակ, օտարութեան մէջ, օտար քաղքերու ենթակայ հայ ժողովուրդի զանազանութեան ապառնացող ձուլումի վտանգը։

Գլխաւոր երկու տագնապներ կը հիմնաւորեն Փօլատեանի գործին ազգային երանգը։ Պահել տոհմիկ նկարագիրը մեր ցեղային աւանդներուն եւ, մեր հոգային պահանջներուն գծով՝ արծարծել պայքարի՝ ոգին՝ իւրաքանչիւր հայու սրտին մէջ։

ԲԱԿՈՒ ՄԱՆՈՒԿԵԱՆ

«Հ ԹԱՏԵՐԱԽԱՂ»

(ՄԿՐՏԻՉ ՀԱՆՃԵԱՆ)

Առանձին կերպով պիտի չարժէր անդրադառնալ Մկրտիչ Հանճեանի «Հ թատերախաղ» հատորին, եթէ անիկա իրեն հետ չբերէր մեր մշակութային կացութիւնը կամ պատկերը ցոլացնող որոշ երեւոյթներ։

Մկրտիչ Հանճեան որոշ չափով ծանօթ անուն է սփիւռքահայ իրականութեան մէջ։ Նկարիչ, եւ բաժշտական քննադատ, բանաստեղծ, թարգմանիչ, պատմուածագիր, թատերագիր եւ քիչ մը ամէն բան...։ Ամէն պարագայի, տասնամեակներէ է վեր, ընթերցողը կը հանդիպի իրեն մեր մամուլին մէջ, քիչ մը ամէն տեղ...

Նկատի ունենալով գրական մեր նիրկայ կացութիւնը Սփիւռքի մէջ՝ նման ուրիշներու կարելի էր իրեն հանդէպ եւս հանդուրժող ըլլալ, եթէ չտնտիպեր, որ նման հատորներու գրական արժէքներ կը տրուին, ինչ որ գրական արժէքներու խախտում կը առեղծէ եւ կասկածելի կը

digitised by A.R.A.R.@

գործնական այլ մրցանակներու վաւերականութիւնը նաեւ...

♣

Երկու թատերախաղերը իրարմէ կը բաժնուին ժամանակային յոյժ մէջոցով մը։ «Կնատնացը» գրուած է Գոլիս, 1948ին, իսկ «Աստղահարը»՝ 1980ին, հաւանաբար Մեքսիքա։ Երկուքին մէջ ալ կայ Փիրանելլոյով ակած (Փիրանելլո, Աբբը Միքը, եւայլն) այն փորձը, որ կը միտի հեղինակ-ոճիպար եւ հեղինակ-հանդիսատես յարաբերութիւնները բանալու։ «Կնատնացին» մէջ, արարներու ընթացքին, հեղինակն ու հանդիսատես մը կը զրուցեն, ապաւորութիւններ ու կարծիքներ կը փոխանակեն, իսկ «Աստղահարը» առնուն թատերախաղի սկիզբը հեղինակն ու իր գլխաւոր հերոսուհին՝ Մարթա, կը վիճաբանին, թէ հեղինա՞կը ստեղծած է զինք, թէ ինք գոյութիւն ունեցած է արդէն...։ Այսպէս, Մարթա կ'ըսէ.

«Սուտ կը խօսի։ Ա՛ն չէ, որ ստեղծեց զիս։ Շատ ուշ եկաւ զիս դուքս հաշելու համար ոչինչէն, որուն մէջ գոյութիւն ունէի՝ առանց ստոր գիտակցութիւնը ունենալու։»

Անշուշտ, ընթերցողը արագօրէն պիտի տեսնէ, որ Փիրանելլոյի «Հինգ տիպարներ, որոնք հեգինակ մը կը փնտռեն» թատերախաղին սկիզբը արծարծուած հեղինակ-ոճիպար յարաբերութեան մէկ այլ դրսեւորում-կապակցումը կը ներկայացուի այստեղ։ Սակայն, այս ազդեցութիւններէն առնին, այս բոլորը ինչի՞ կը միտին, կամ՝ ի՞նչ գիծով կը գարգանան՝ չատ ալ չի յատակաբար տուեալ գործերու ուսումնասիրութեան, պարզապէս կը մատնայ ժեւականերութեան առհմաններէն ներս։

Սակայն՝ երկու թատերախաղերու մէջ ալ ունինք տեսիլական տիպարներու, ոչ-համոզիչ կացութիւններու եւ անկարելի երկխօսութիւններու շարք մը։ Մարթայի, Ալէնի կամ Ցակոբի վերաբերումներուն կամ արտայայտութիւններուն մէջ, տատիպոմ-մասոչիզմի անուշադրի դրսեւորումներէն առկախ, գրեթէ ոչինչ կը գտնենք։

Ցակոբին հետ՝ պոլսական սալոնային չրջապատն ու բամբասանքներու մթնոլորտը կու գայ որոշ չափով, իսկ գործին վերջաւորութեան, գլխաւոր ոճիպարը՝ Ցակոբ, արարչագործութեան իր վարկածը կը բերէ, խնդրելով հանդիսատէն, որ հեղինակին չնափահարէ՝ զինք նման դիծազիլ դիրքի մը մատնած ըլլալուն համար։

Իսկ «Աստղահարը» թատերախաղին պարագային՝ Ալէնի եւ Մարթայի մէջեւ զարգացող ամբողջ պատահարը ոչինչ ունի համոզիչ։

Ամէնէն հիմնականը, սակայն, ունինք թատերախաղ մը, որ թատերական ոչ մէկ յղացք ունի, ո՛չ գաղափարական, ո՛չ արդիական (պրեխթեան, Անհեթեթի թատրոն կամ այլ)։ Թատրոն մը նաեւ, որ յատակ չէ, թէ ի՞նչ կ'ըսէ եւ որո՛ւ է՞ուղղուած, կամ մեր իրականութեան եւ ներկայի տագնապներուն հետ ի՞նչ աղերս ունի (ազգային թէ համամարդկային առումով), քայլ՝ եթէ 30-40ական թուականներուն Գոլոյ որոշ սալոնային բարքերը չահեկան կը գտնենք տակաւին...

Այս բոլորէն ետք, կրկին հարց կու տանք՝ ուրկէ՞ կու գայ նման գործերու մրցանակ տալու չարժառիթը, եւ կամ՝ անընթեռնելի եւ անբեմադրելի թատերախաղեր ստեղծելու դիւրահաճութիւնը...

ՑԱՐՈՒԹԻՒՆ ՊԷՐՊԷՐԵԱՆ

digitised by A.R.A.R.@

«ՀԱՍԿ» ՏԱՐԵԳԻՐՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՆԸ

«Հասկ» հայագիտական տարեգիրքի երկրորդ եւ երրորդ տարուան (1981-1982) միացեալ թիւը լոյս տեսաւ վերջերս, Կիլիկիոյ Կաթողիկոսաւորեան Անթիլիասի տպարանէն, մեկենասութեամբ Աբա Երեւանեանի։

608 մեծադիր էջեր հաշուող միջակ հրատարակութիւնը, ինչպէս իր նախորդը, ընթերցողին կը ներկայանայ ճոխ բովանդակութեամբ։ Հատորին հայիւէն, ֆրանսերէն եւ անգլերէն լեզուով գրուած ուսումնասիրութիւնները կը շօշափեն պատմական, գրականագիտական, իմաստասիրական, լեզուաբանական, գեղարուեստական, պատմական եւ այլ նիւթեր, որոնք առհասարակ խմբագրուած են գիտական աչալուրջ ճառեցումով։

Ստորեւ կու տանք բովանդակութիւնը տարեգիրքին.

ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ՝	«Մարդու բնութեան ըմբռնումը հայ շարակամներու մէջ»,
ԱՐՏԱՒԱԶԴ ԱՐՔ. ԹՐԹՌԵԱՆ՝	«Գրիգոր Նարեկացիի համամարդկային ոգին արտայայտուած Աղօթամատեանի յոտկապէս Գ. բանին մէջ»,
ISAAC KECHICHIAN, S. J.՝	«La Prière des vingt - quatre heures»,
BISHOP GORIUN KOJABABIAN՝	«The conversion of Armenia and Georgia to christianity»,
ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ՝	«Եզնիկ Կողբացու երկի հրատարակութիւնների պատմութիւնից»,
ՀԵՒՈՆ ԽԱՉԵՐԵԱՆ՝	«Ուճիքոռական (միաբարական) շարժման դէմ Գլաձորի համալսարանի պայքարը»,
ՍԻԴԱ ՊԱՐՍԱՒՄԵԱՆ-ՏԱՏՈՒՃԵԱՆ՝	«Շահան Գէրպէրեան՝ արուեստի էջերուն ընդհանուր խմբագրական դիրքը»,
ՄՈՒՇԵՂ ԻՇԽԱՆ՝	«Դանիէլ Վարուժան»,
ԱՐՇԱՒԻՐ ԴԱՊՊԵՆՃԵԱՆ՝	«Արփիար Արփիարեանի գրական տեսակէտները»,
ՊԷՊՕ ՍԻՄՈՆԵԱՆ՝	Գեւառի տրուեստագէտը՝ Թլկատինցի»,
KRIKOR CHAHINIAN՝	«Exil et création littéraire»,
ՄՈՎՍԷՍ Ս. ՀԵՐԿԵԼԵԱՆ՝	«Համաստեղ վկայ հայ ոգին»,
ՆԵՐՍԷՍ Ճ. ՊԱՐՍԱՒՄԵԱՆ՝	«Ալեքսիմ Իսահակեան եւ արաբ բանաստեղծ Ապուլ Ալա էլ-Մաարրի»,
ԱՐՇԱՇԷՍ ՅԷՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ՝	«Էջ մը հայ մամուլի պատմութենէն — Գալոսոյ «Ազդակ» շաբաթաթերթը»,
ԱՆՈՒՇԱՒԱՆ Վ.ՐԴ. ԴԱՆԻԷԼԵԱՆ՝	«Զեռագիր գայլ Մաշտոցներ»,
ՏՈՒԳԲ. ԱՐՄԵՆԱԿ ԵՂԻԱԶԵԱՆ՝	«Բացայայտիչը աշխարհաբարի մէջ»,
ԳԵՐՃ Մ. ԿԱՐԱԳՈՅՏԵԱՆ՝	«Հռոմկլայի եւ անոր ազկման պատճառները հայ եւ օտար աղբիւրներու համեմատմամբ)»,
ՎԱՉԱԳԷՆ ՂՈՒԿԱՍԵԱՆ՝	«Սնեփաճոս Կաթողիկոս Զուլոյեցի»,
ԿՆԳՏԱ ԹՈՓԱՂԵԱՆ՝	«Հրաբիւն ապ Սիւնիք (Աքսիքին)»,
HAGOP L. BARSOUMIAN՝	«The honorific amira: Its origin and usage»,
ROBERT H. HEWSEN՝	«Three Armenian noble families of the Russian Empire»,
AIDA K. BOUDJIKANIAN՝	«Les Arméniens de l'agglomération de Beyrouth: Etude humaine et économique»,
Ա. Ղ.՝	«Երիմեան Հայրիկի արխիւէն»,

digitised by A.R.A.R.@

ARTHUR BEYLERIAN՝

ZAVEN MESSERLIAN՝

Ա. Տ. Խ.՝
ԱՆԻԹԱ ԹՈՓԱԳԵԱՆ՝
ՏՈՔԹ. ԱՐՄԵՆԱԿ ԵՂԻԱԶԵԱՆ՝
ԼԵՒՈՆ ՉԱՐԴԱՆ՝
ՑԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՐՈՍԵԱՆ՝

«Témoignages inédits sur les massacres arméniens de Trébizonde en 1895»,
«A United Nations report in 1948 related to the Armenian genocide»,
«Տիրան Զրաքեանի Եդիպտոս այցը»,
«Gregorius»,
«Գուրգէն Սեւակ»,
«Հայերէնը այլեւազգայնոյ բերնին մէջ»,
«Հարթ տապանաքարերու եւ փորագիր դեղապատկերներու ծագումն ու զարգացումը»։

Հատորի վերջին բաժնին մէջ, ակնարկներ եւ դրախօսականներ տորագրած են Գէորգ Աճեմեան, Արտաշէս Տէր Ղազարեան, Շուարշ Թորոսեան, Արշաւիր Գապպէնճեան եւ Նարեկ աբեղայ Այիէմէղեան։ Տարեգիրքը կը փակուի մահագրական թիւններու բաժինով, որ կը ներկայացնէ վերջին երկու տարիներու մէջ կարգ մը կորուստները։

ԿԱՐՄՐԱՄՈՐԹԻ ՄԸ ԲՈՂՈՔԸ

Վերջերս, Աթէնքի «Ազատ օրէն» մէջ լոյս տեսաւ «Ազգերը Հայաստան պիտի գան» խորագրով քանաստեղծութիւն մը, տորագրուած՝ կարմրամորթ հնդիկ մոյ Քալվերի կողմէ։

Քերթուածը, որ գրուած է Հայկական եղեռնին 68րդ տարեդարձի ոգեկոչման առթիւ, պարզ ու ինքնաբուխ արտայայտութիւնն է կարմրամորթ հնդիկի մը, որուն ցեղախումբերուն մեծ մասը գոհը դարձաւ 18 եւ 19րդ դարերուն կազմակերպուած յաջորդական ջարդերուն։

Քերթուածին տակ մոյ Քալվերը արձանագրած է ոչ թէ իր արեւմտեան անունը, այլ՝ հնդկականը, որ կը նշանակէ կարմրամորթ ալխարհին վերայ արեւմտեան երկինք։

ԱԶԳԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆ ՊԻՏԻ ԳԱՆ

Անգարա Ազատութեան բլուր մը կայ,
Թալաաթ յիշատակուած է այնտեղ
«Մեծն» Թալաաթ. հայերու մեծ մարդասպան.
Վաշինկթըն եւս կան Ազատութեան բլուրներ
Այնտեղ յաւերժացած են կարմրամորթներու մարդասպանները,
Ազգերու մեծ ոճրագործներ.
Պերլին՝ ֆանի՛–ֆանի՛ մէջ Հիթլէրի «յուշերը» կը մխան,
«Մեծն» Հիթլէր, յիշատակուած հրեաներու մասին ստելու համար.
Իսկ ամերիկացիներու միտքերուն մէջ կը վառին սուտեր,
Թէ ինչպէ՞ս կարմրամորթներու ցեղերը ապրեցան ու մեռան.
Սուտեր. մաֆիավէլեան, ռիշելիէսկան, մեֆիսթոֆէլեան
Ստախօսութիւններ.

Անգարա Ազատութեան բլուր մը կայ,
Ուր շարունակ ֆոտմենի սուտեր կը կառուցուին,
Սուտեր ի յիշատակ Ազատութեան՝
Հրկիզուած, սպանուած, դատապարտուած
Եւ գրեթէ մոռացութեան տրուած։

ԿԱՐՄՐԱՄՈՐԹ ԱՇԽԱՐՀԻ ՎՐԱՑ
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԵՐԿԻՆՔ

Աթէնք, Ապրիլ 1983

digitised by A.R.A.R.@

ՀԱՅ ԳԻՒՂԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ 1914ԷՆ ԱՌԱՋ

Վերջերս, «Թայմզ գրական յաւելուածի» 13 Մայիսի թիւին մէջ զրախօսական մը լոյս տեսաւ Սիւզի Ղուկասեան-Վիլլայի եւ Մէյրի Մաթիսեանի «Հայ գիւղական կեանքը 1914էն առաջ» հատորին առիթով։

Գրախօսականը սաստրագրած է Ճոն Կրեփին, որ Գլեւլանտ Նահանգային Համալսարանի լեզուագիտական բաժանմունքի պատասխանատուն է։

Ինչպէս դիրքին խորագիրը կը թելադրէ, աշխատասիրութիւնը կը փորձէ ներկայացնել հայ գիւղի կամ գաւառի ասպրութիւններն ու կենցաղային առանձնայատկութիւնները Արեւմտահայաստանի մէջ՝ ցեղասպանութենէն առաջ, որ, ըստ Կրեփինի՝ «Կեանքի ձեւ մըն է, որ չմոցած է ո՛չ միայն հայերուն համար, այլեւ՝ այն թուրքերուն նաեւ քիւրտերուն, որոնք նկան զանոնք փախստականներու. անոնց պատճառով հանդուն վրայ»։

Վկայութիւններու լայն օգտագործումով խմբագրուած այս հատորը ընդհանրապէս կը յենու յիշողութեան վրայ 48 երէց անձերու, բաղկացած՝ մեծամասնութեամբ կիներէ, որոնք Մխիթար Նահանգներու Տիգրանակերտի լեռնանց հասատուած են։

Հեղինակները՝ Սիւզի Ղուկասեան եւ Մէյրի Մաթիսեան, իրենց գործը կը բաժնեն 7 գլուխներու, ուր կը խօսին գիւղի եւ ընտանիքի կազմակերպման, ամուսնական կեանքի, գաւառներու գաստիարակման, առողջապահական ըմբռնումներու եւ կրօնքի հանգամանքի մասին։

Ուրախութիւնը ամբողջացնող ընտանիքը ազգային կեանքի մանրամասներուն ընդմէջէն։

Երեք արարներէ բաղկացած «Մարդը, որ ինքն իր դէմ պատերազմեցաւ» անուն այս թատերախաղին մէջ հանդէս կու գան 15 տիպարներ՝ Սիւլվա եւ Ցակոբ, վաճառական Սուլէյմանն ու օտմանեան բանակի երիտասարդ սպայ Ահմէտը, հայերու լքուած հողերէն օգտուող Օսման աղան եւ հողագործ Մուրատը, քաղաքական գործունէութիւնը ասպարէզի վերածած Թեյատ էֆէնտին ու հայ գաղթականներ պաշտպանող Զահրան եւ Ցաթիմէն (Զահրայի եւ Սուլէյմանի աղջիկը), Ըմ Ահմէտը (Մուրատի կինը) եւ Օսման աղայի մօտ ծառայող երիտասարդ Խալիլը...

Իշխանութիւնը ժամանակորոշ ընտանէր ազատելն եւ անպէտ գոհերուն՝ հողագործ Մուրատի կամ Սիլվայի մէջեւ ծառայող կեանքի պայքարը արտացոլացնող այս թատերախաղը, այսպէսով, կը զարգանայ զուգահեռ երկու ժակարդակներով։ Առաջին ժակարդակի վրայ թատերգիրը կը քննէ հանգոյցները հողատէրերուն գաւառկարգային պայքարին, իսկ երկրորդ ժակարդակի վրայ՝ գաղթական հայ հերոսներուն նկատմամբ տարբեր խաւերու ներկայացուցիչներուն ցուցաբերած մարդկային եւ շահադիտական վերաբերումներուն։

Ցանձնառու գրականութիւնը բնորոշող քաղաքական եւ հոգեբանական տարրերով հատուցուած Լուէյ Այասայի այս թատերախաղը գրուած է 1981ին, 1979ին եւ առաջին անգամ բեմադրուած է 1981ին, Դամասկոսի «Ալ Համրա» թատրոնի բեմին վրայ, հեղինակին բեմադրութեամբ, համալսարանական կերդոնական թատերախումբին կողմէ։

ՍՈՒՐԻԱՑԻ ԹԱՏԵՐԱԳԻՐԻ ՄԸ ՀԱՅԱՆՊԱՍ ԹԱՏԵՐԱԽԱՂԸ

«Մարդը, որ ինքն իր դէմ պատերազմեցաւ»։

Այս է խորագիրը սուրիացի երիտասարդ թատերագիրին յիշեալ երկին գործողութիւնները տեղի կ'ունենան Մեծ Եղեռնէն յաջորդած օրերուն, քաղաքական Թուրքերուն։ Շրջանի ընկերային-քաղաքական անցուդարձերուն վրայ լուսաբաձակը կեդրոնացնելով՝ Լուէյ Այասա կ'արծարծէ հայասպանութեան ողբերգութիւնը, եզրակնէն ճողոպրած Սիլվայի (քանի մը տարի հայ երիտասարդուհի մը) եւ իր եղբօր՝ Ցակոբի առասպելին կեանքի մանրամասներուն ընդմէջէն։

digitised by A.R.A.R.@

ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑ ԴԱՐՁԵԱԼ ԱՐԱԲԵՐԷՆԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԱԾ

Եղիշէ Չարենցի ստեղծումներէն ուր կասը-ներ ամփոփած «Ամբոխները խելագարուած» անուն գրքոյկը թարգմանական վեցերորդ գործն է հալէպաբնակ թարգմանիչ Նազար Նազարեանի, որ յուրոյ ասանելիներ տարիէ ի վեր լծուած է հայ բանաստեղծութիւնը արաբ ընթերցողին ծանօթացնելու աշխատանքին:

1970ին Դանիէլ Վարուժանի «Հացին երգը» քերթողաշէրքին արաբերէն թարգմանութիւնը լոյս ընծայելէն ի վեր, սուրիական եւ արաբական մամուլին մէջ պարբերաբար երեւցող անուն մը եղաւ Նազարեան: Խաչիկեանի, Գէորգ Եմինի, Վահան Թէքէեանի եւ Յովհաննէս Շիրազի քերթուածներէն կազմուած իր գրքոյկները արդէն օրոյ վարկ մը ապահոված են այս երիտասարդ թարգմանիչին: Վերջին հրատարակութիւնը չարքին՝ «Ամբոխները խելագարուած» (ուսումնասիրից եւ թարգմանից Նազար Նազարեան), կը բաղկանայ պատկերազարդ 104 էջէ, ուր յաջորդաբար կը կարդանք «Ամբոխները խելագարուած», «Գիտեմ, գալու է» («Մուրբայաթ»ներ), «Կէօթէից» եւ «Պատասխան Կէօթէին», «Օվկիանի երգը», «Համայնական դաշտերի ներմնացումները» (հատուածներ) եւ «Մուսայիս» անուն բանաստեղծութիւնները:

ՀԱՅԵՐՈՒ ՆՈՒԻՐՈՒԱԾ «ՎԵՐԱՊՐՈՒՄ» ՀԱՏՈՐԸ

— Ոնթարիոյի Բազմամշակութային Պատմագիտութեան Ընկերակցութեան «Փոլիֆոնի» հրատարակութեան Դ. տարուան Բ. համարը յանկացուած է Ոնթարիոյի հայերուն:

Հատորը, որ վերջերս լոյս տեսաւ, կը կրէ «Վերապրում» ընդհանուր խորագիրը: Անոր խմբագիրն է պատմութեան ուսուցիչ Թնկնածու Զապէլ Գարրիէլեան, որ, ներածականի կողքին, տորագրած է նաեւ «Հայերու գաղթը եւ հաստատումը հարաւային Օնթարիոյի մէջ», «Ներկեցներ» եւ «Հայկական աւանդապաշտութիւն, յատուկ ծանրացում «վիճակի վրայ» անուն յօդուածները:

Հրատարակութիւնը կը բաղկանայ 186 էջերէ: Յօդուածները տորագրած են՝

Հարոլա Ֆէնյ. Նահապետեան՝ «Համառօտ ակնարկ՝ հայ-գանատական յարաբերութեան վրայ. 1890–1920»,

Խաչիկ Շէհէրեան՝ «Յեղասպանութիւն. 1915–1922»,

Ժաղ Ալբահամեան՝ «Հորիզոնի տղաքը»,

Օգսէն Դեկիրմենեան՝ «Առաջին տարիները Թորոնթոյի մէջ, 1923–1924»,

Արամ Ալիզեան՝ «Հ. Ց. Դաշնակցութիւնը Գանատայի մէջ — անցեալն ու ներկան»,

Հայկանոյշ Թորոսեան՝ «Հայկական առաջին եկեղեցին Գանատայի մէջ — Ս. Գրիգոր Լուսաւորիչ»,

Օգսէն Դեկիրմենեան՝ «Հայերը Թորոնթոյի մէջ — առաջին տարիները»,

Յամիկ Ինճէճիկեան՝ «Առաջին հայ հաստատողներու երգացանկը»,

Եմուանդ Փասարմաճեան՝ «Հայ ճանատական ճոնկրէսը»:

Հրատարակութեան մէջ լոյս տեսած են բազմաթիւ լուսանկարներ, առաջին անգամ ըլլալով:

digitised by A.R.A.R.@

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

ՊԵՏՐՈՍ ՀԵՐԵԱՆ

ԲԱՌԸ...

(ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ)

Հրատարակութիւն՝ Համազգայինի «Վահէ Սէրեան» տպարանի, Պէյրութ, 1983, 68 էջ, գին՝ 15 լ. ոսկի:

ՐԱՖՖԻ ՔԷՊԱՊՃԵԱՆ

ԽՈՐՏԱԿՈՒԱԾ ՔԱՌԵԱԿԸ

(Պատմուածքներ)

Հրատարակութիւն՝ Մուրատ օֆսէթ տպարանի, Խրթանպուլ, 1983, 150 էջ:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

ՄԱՐԳԱՐԷՆ — արձակ—
Ճպրան Խալիլ Ճպրան, Անքիլիաս, 1983, հրատարակութիւն՝ ՀԵՀՈՄի, 104 էջ:

ԿԱԹԻԼ ԾՈՎ — բանաստեղծութիւններ —
Գրիշ Դաւթեան, Թեհրան, 1982, հրատարակութիւն՝ տպարան «Ալիք»ի, 116 էջ, գին՝ 500 ռիալ, այլ երկիրներ՝ 6 տոլար:

ԱՇՆԱՆ ԱՆՈՒՐՋՆԵՐ — բանաստեղծութիւններ —
Գր. Գոքեան, Փարիզ, 1983, հրատարակութիւն՝ «Ենիրակ» հրատարակչատան, 160 էջ, գին՝ 50 ֆրանք:

digitised by A.R.A.R.@

باكين

مجلة شهرية ، ادبية وفنية علمية

المدير المسؤول

السيد ارتين كارنيك قزانجيان

•

PAKINE

REVUE MENSUELLE

LITERAIRE & ARTISTIQUE

Propriétaire

Dr. A. KAZANDJIAN

•

ԲԱԳԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

Խմբագիր

ՊՕՂՈՍ ՍՆԱՊԵԱՆ

Խմբագրութեան անդամներ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԷՐՊԷՐԵԱՆ

ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Վարչական պատասխանատու

ՎԱՉԷ ԲՐՈՒՏԵԱՆ

B. P. 11-5404 - Beyrouth - LIBAN

Tel. 296898

digitised by A.R.A.R.@